Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

7576
7577
7578

910.4
Ь-77

1887
1904
1876

100 838

1. [illegible]
[illegible]

Printed in Turkey

2. [illegible]

3. [illegible]

ԿԱՊՄԱՏՈՒՆ Ա. ԲԱՂԴԱՆՈՅԻ
ATELIER DE RELIEUR
A. PAGHTANOUCH
Tchakmakdjilar beyuk yéni han 5-6
Չուխմակճիլար Մեծ Նոր խան թիւ 5-6

91

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԿՈՎԿԱՍՈՒ

ԻՌՈՒՍԱԿԱՆ ԲՆԱԳՐԷ ՑԵՂԵԱԼ Ի ՀԱՑ

Ի ՁԵՌՆ Հ. ՓԱՌՆԱԿԵԱՆԻ

ԵՐՈՒՍԱԼԷՄ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՃԷՋՎԷՃԵԱՆ

)(1876)(

13279

1037
40

ԱՌԱՋԱԲԱՆ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՏԷՐ, ՏԷՐ ՆԵՐՍԷՍ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԱՐԺԱՆԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՕԼՍՈՅ

Ցեռ բաղում ժամանակաց, ուսումնական աշխարհի խորաքննին հետազօտութիւնք, Կովկասեան լեռնային սահմաններն նորագոյն հմտութեանց կարեւոր առարկայ նկատելով, մասն անդ աղատաբար և այն անմատչելի տեղեաց ու այլ և այլ տոհմերէ ու լեզուներէ կազմեալ հինաւուրց բնակչաց նկատմամբ, ծաւալեցին պատմական մի նոր լոյս, որոյ հմտանալու արժան օգտաւէտ ու հետաքրքրական կէտերը կ'բովանդակին սոյն մատենագրութեան մէջ՝ յօգուտ ուսումնասիրաց և ի դիւրութիւն աղգային վաճառականաց ու ճանապարհորդաց զ'որ պատիւ անձին համարելով, ընծայարերեմ առ Ձերդ Բարձր Սրբազնութիւն։

Անտարակոյս եմ, Ամենապատիւ Սրբազան Տէր, և լիովին վստահ, որ ընդունել չնորհ կ'ընէ զ'այն Ձեր Սրբազնութիւնը, ոչ արդարև իբր ընծայ նշանաւոր, այլ իբրև երկասիրութիւն ինչ պատմական և տեղագրական։

Հ. Փ.

A. DEVEJIAN LIBRARY
NEW YORK
Ա. ՏԷՎԷՃԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ԾԱՌԱՅԱԲԱՆ

Մարդկային ազգի բարոյական սնունդն ու կեանքը գիտութիւնն ու մտային լուսաւորութիւնն է, մանաւանդ ներկայ դարուս մէջ, որ կ'կարօտի յարատև, անխոնջ ու կանոնաւոր աշխատութեան։ Ազգայնոց ուսումնասէր մասը նկատելով ուսմանց անզուգական արդիւնքն Եւրոպիոյ ու Ամերիկոյ մէջ տարածեալ, և արագ յառաջդիմութեամբ 'ի բարձրագոյն կատարելութիւն հասնելու նպատակաւ, այն կողմերու բնակչաց ջանքն իւր առաջին նախանձելի օրինակ հանդիսացեալ, արդէն սկսած է մտային կրթութեան կարևորութիւնն զգալ. ուստի իւր քայլերն ուղղել կ'փութայ զարդացման դէպ ի այն տապարէզն, ուր համաշխարհական ժողովրդոց պայծառ ու ծաղկեալ մասը գիտութեանց ու կենցաղակրթութեան շնորհիւ երկրի վրայ կը վայելէ փառք ու հոյակապ մեծութիւն ու կ'բարձրանայ մինչև ի գերագոյն աստիճան կատարելութեան։

Այսպիսի խրախուսիչ հանգամանք շարժեցին զիս, ի Կովկաս ճանապարհորդութեանս միջոցներուն, գիտութեանց կարգին մէջ, պատմական օգտաւէտ ճիւղին նկատմամբ, նուիրել ազգայնոց դոյզն ծառայութիւն ինչ. վասնորոյ յառաջադրեցի ձեռնարկել Կովկասու Փոխարքայութեան հետաքրքրական ստորագրութեանց, հաւաքելով Աշխարհագրական, Պատմական ու Վիճակագրական հրմտութիւնք սարեգրութեամբ հանդերձ, որ գրեթէ ամբողջ քաղուած են ճշգրիտ ու վստահելի աղբիւրներէ, այսինքն՝ Պէռժէի, Սլփռանտի, Սօխոլչիկովայ, Գլադաօթի, Մէյէռի, Անդրէեւսքի, Էնգիլկառտայ, Պէռզէնովի, Սպասքի-Անտօնովիչի, ռուս, գաղղիացի ու գերմանացի արժանահաւատ և ուսումնական ճանապարհորդաց հեղինակութիւններէ, որոց ջանիւք ի լոյս ընծայուելով, Ռուսիոյ

գիւանական արձանագրութեանց մէջ անհերիքայութեան մասին կ'գրաւեն մշտնջենաւէս խրատանց արժանաւոր տեղին և թերևս ազգայ պատմութեան այս մասին ուշի ևս կատարելագործելու վախճանաւ, ուսումնական հետազօտութիւնք հետզհետէ սոյն գործոյն պատմաբանական թերութեանց կատարելութեան պատրաստ ընծայեն։

Մատենագրութեանս մէջ կ'բռնկանգակի, Ա. Ազգաբանութիւն Յարեթական տոհմին Բ. Համառօտ պատմական տեղագրութիւն Հայաստանի և Կովկասու Գ. Կովկասու կուսակալութեան կամ նահանգական քաղաքաց (Կուպերնայի) տեղագրական Հնագրագրութիւնք. Դ. Կասպիական երկիրներու և իշխանութեանց տոպագրութիւնը. Ե. Տարոնոյ լեռնային մասին համառօտ տեսութիւնը. Զ. Ավարտոյի ու Զաչանոյանի տեղագրութիւնը. Է. Թէրեք և Մամեժա գետոց մէջ բռնանգակեալ տարածութեան համառօտ նկարագիրը Ը. Զաչանոց ազգաբանութիւնը. Թ. Ազդազաց երկրին ս. ժողովրդոց տոպագրութիւնը. Ժ. Չէրքէզեան ազգի զանազան ցեղերուն և Կովկաս աշխարհի լեռնային մասին մէջ ի վաղ ժամանակաց հետէ գաղթական ժողովրդոց և այլևայլ տոհմերու ծագումը, անունները, լեզուները, տարբեր կրօնքը և վերջապէս բնութիւններն ու սովորութիւնները, ԺԱ. Կովկասու վիճակագրական ադիւսակը. ԺԲ. Սեաւ ծովու եզերաց վրայ եղած երկիրներու տեղագրութիւնը. ԺԳ. Իվերի մատենիս յառաջ և յետ քան Քրիստոնէական թուականն հաղագս նախս վրայ պատահած արժանայիշատակ անցից և երեւելի սնօրէնութեանց ցանկը։

Այս նիւթոց նկատմամբ ուսումնական ճանապարհորդաց հետաքրքրութիւնք, և արժանահաւատ աղբիւրներէ քաղուածոյք և թարգմանութիւնք գրեթէ դեռ երեւցած չեն ազգային պատմական գործոյ մէջ։ Կովկասու վերաբերեալ հմտութիւնք մեծամասամբ, ինչպէս որ մինչև իսկ զարգացեալ ազգաց շատերուն կ'մնան անծանօթ կամ դէպ

սակաւ ինչ ծանուցեալ են, նոյնպէս նաև մեր ազգին։ Այն լեռնային բնակչաց տոհմերուն մէջ անուամբ եւ եթէ ու փոքր ինչ բարուք և այլ դուրգաքայ հանգամանաց մեզ ծանօթ եղածներն են միայն Չէրքէզք կամ Եգերայիք Ասպագիք, Լէզկիք և թերևս Զաչանք։ սակայն մնացեալ ցեղերուն վրայ ցարդ պատմական ծանօթութիւնք, մանաւանդ Կովկասու լեռնական ժողովրդոց հետ Ռուսիայ ընդդիմամարտ կռուոց և վաթսունամեայ պատերազմական անցից նշանաւոր դէպքերն յայտնուած չեն մեզ բնաւ։

Ուստի քաղայարմար ասիթ ունենալովէ միանգամայն և ոյսպիսի կարեւոր պատճառք, անհրաժեշտ էր ուսումնասիրաց հետաքրքրութիւնն յարդեցնելու և ճանապարհորդաց իսկ զիրուութիւններ ընծայելու մի յարմար գործոց թարգմանութիւնը։

Վասնորոյ սոյն ինչ սկսայ հաւաքել Ցիխիս նահանգի աշխարհագրական ու վիճակագրական տեղեկութիւնք, նոյն քաղաքին մէջ պատահեցայ Երեւանցի ազա Զաքար Ցուխանենկեան Տէր Զաքարեանց Ռուսերէն լեզուի քաջահմուտ մի բարեկամի, որ յանձն առաւ գործակից լինել ինձ ներկայ երկասիրութեանս, չվազանալով իւր պարապմամբն նուիրել այս աշխատութեան բերանացի թարգմանութեամբ, որոյ սոյն գովելի ջանքը ոչ այլ ինչ վախճանի կ'ծառայէր, քանց միայն համամիտ նպատակաւ մի օգտակար ծառայութիւն մատուցանել ազգայնոց։

Հ. Փանէրէանց

ՆԱԽԱԳՐՈՒԹԻՒՆ

Մասնագրութեանս սկիզբն անհրաժեշտ էր դնելոյ Նոյ առաջին Նահապետի սերնդեան՝ Յարութեան տոհմի ազգահամարը, զի պատմական կարգին մէջ Հայաստանի ու Դոլիպատեան ազգաց, քաղաքաց և իշխանութեանց զըլխաւոր անուանք ստէպ կ'նշանակուին աստանօր, որ է տեղի Մարդկային ազգի երկրորդ ծննդեան և տեղի Նախնական բնակութեան իւրում՝, յորմէ սփռեցաւ Նա հետզհետէ յամբոխս երկրի, այն ինչ սկսաւ անել ու բազմանալ Հայաստան աշխարհի՝ իւր համազգայնն ու հասարակաց հայրենեաց ծոցն ըստ Յերուսական օրհնութեան թէ, «Աճեցէք և բազմացարուք և լցէք զ'երկիր»։

Դարուց և ժամանակաց անընդհատ հոլովմունք, որ են յաւիտենական տեղութեան չափեալ կէտերն հնարեալ ի մարդկանց, ըստ մարդկային սահմանաւոր գաղափարաց և ըմբռնման, կ'արտադրեն ժամեր, օրեր, ամիսներ, տարիներ ու դարեր, որպէս կ'չափեն մարդիկ կենաց, ազգաց ու թագաւորութեանց առ ժամանակեայ տեղութեան չրջանները. ուստի սա չէ երբէք ժամանակ, այլ է միշտ և յաւիտեանս Յաւիտենականութիւն, զի ժամանակներն են, անվախճան տեղութեան սահմանաւոր մասունք, որ կ'գոյանան հաղագնդիս առօրեայ թաւալման և արեգական շուրջը դարձած մէջնդերուն համեմատ։ Այս դարեւոր ժամանակի բեղմնաւոր արդանդէն, ծնունդ ու կեանք կ'առնուն յաջորդաբար համայն գոյութիւնք սիեղեւրակաւք, կենդանակաւք և անկենդանք, ազգք և ազիք իշխանութիւնք և պետութիւնք, անհամար դէպք և պատահարք, շարժմունք, փոփոխութիւնք և նորոգութիւնք, վերջապէս ծնունդ, կեանք և մահ, և այս ամենայն պատճառին և կատրին ի ձեռն «յաւիտենական բնութեան

և օրինաց», որպ արտադրիչ, կենսատու, միանգամայն մահացուցիչ և սպանիչ կարողութիւնը կ'ծառայի ու կ'թաղաւորի տիեզերաց մէջ իւր դերագոյն Հեղինակին իմաստութեամբն յաւիտեան։

Արդ՝ բնութեան կենդանացուցիչ ու մահացուցիչ տարրերք և զօրութիւնք, մերթ արագ գործունեութեամբ և մերթ դանդաղ ու անդգայլի շարժմամբ իւր արտադրած հանրական գոյութեանց ներգործելով, ինչպէս կ'ծնի ու կապառէ անընդհատ ամենայն ինչ, կ'փոխէ և կ'նորոգէ, համայն էութիւնք նիւթականք, նոյնպէս ծառայելով աշխարհի դիպուածոց և քաղաքականութեան վրայ իւր դղյացուցիչ, փոփոխիչ և սպանիչ ազդեցութիւնը, կ'հնանցնի ու կ'նուազէ նաև երկրի ազգերը, կ'սկսրացնէ զկառավարութիւնք, կ'բառնայ զ'աքսայական իշխանութիւնք և երբեմն անբնութացնելով ամենայնի նախկին գոյութիւնը, կ'ենթարկի ամենայն ինչ վերածնութեան, փոփոխութեան և նորոգ և այլ կերպարանաց յաւիտեան։

Այսպէս կ'սահմին տիեզերական դարք և այսպէս անցանէ աշխարհ, իւր մէջ բովանդակեալ կենդանի ու անկենդան գոյութիւններով, այսպէս անցանեն նաև ազգք և թագաւորութիւնք երկրի և յաջորդեն համայնից այլ և այլ էակք և արարածք նորագոյն անուամբք և նորագ կերպարանօք։

Դարձուցանեմք արդ մեր տեսութիւնն այն յաւիտենական տեսութեան մի փոքրիկ չրջանին, յորում յաջորդեցին մեր նախնիք ու կ'յաջորդէ այսօր ներկայ դարաս մարդկային ազգն ի դերեզման իւեաք իւր հարց ու կ'ծառանդէ զ'աշխարհ։

Այս մարդկային ազգն հաստատեց իւր Նահապետական ոսկեդարուն մէջ Տանուտէրական կառավարութիւնք և կրօնք Աստուածպաշտութեան, իսկ յետ բաբելական խառնակութեան, կրօնք Աստուածընդդէմ կապարշատութեան։

Կայէն վատ ու անողորմ հեղինակն նախանձու և մարդասպանութեան, կործանեց զիւր եղբայր հարպատս. Ներոմի՝ բռնաւորն վասչիր Բաբելոնի, հնարեց պատերազմ վայրենական և իւր ահեղ բանակաւ զոհուեցաւ Հայկեան նիզակաց ու սլաքաց։ Բարոյական բնութիւն մարդկային, այսպէս ենթակայ եղաւ հետզհետէ բիւր գեղմանց և վարուց ապականութեան և ազգ մարդկան, յառաջանալով միանգամայն քաղաքակրթութեամբ, հիմնեց կառավարութիւնք, մշակեց ու զարգացեց երկիրներ, հաստատեց ամուսնական միութեան կապ, կազմեց դերդաստաններ, ընտանիք և ընկերութիւնք, հնարեց լեզուներ, ընարեց գիւտացին խաղաղաւէտ կեանք հովուական, առաւել և զարգանալով, հեղինակեց ընկերական և ժողովրդական օրէնք, կառոյց նուիրական չինութիւնք, եղիպտական բուրգեր, դերեզմանք, սեղանք զոհագործութեան, մեհեանք, արուշանք, եկեղեցիք և մզկիթք, յառաջացաւ գիտութեամբ, արհեստիւք և զօրութեամբ. քաղաքակրթութիւնն զղալով պիտոյից առաւելութեան հարկն, սկսաւ ծաղկեցեալ հարատար հնարիւք զարուեստներն ու մարդկային ազգն յանձն առաւ բազում ամենատեսութեամբ մատակարարել իւր բազում պիտոյք, իւր ամբաւ բերք հողային և իւր ճոխութիւն հանքային, բարձրացոյց սակեղէն գահոյից վրայ թագաւորք և իշխանք, կանգնեց մեծամեծ տէրութիւնք և հզոր իշխանութիւնք, կառոյց արքայական հոյակապ պալատներ, չինեց փառաւոր քաղաքք, հաստատեց դիւղօրէք, ամրոցք և նաւահանգիստք. յաւակ ուրեմն բանանալով մարդկային բարոյական բնութեան վրայ անբարոյական կիրք անձնամոլութեան փառասիրութեան և ագահութեան, սկսաւ յորոյանել սեալի մեծ ու ահեղ պատերազմունք և ծառալի ապստամբք, խռովութիւնք և թշուառութիւնք համաշխարհականք, պատրաստելով ցամաքային ու ծովային զօրութիւնք անհուն։

Ա յսպէս գրեթէ չարունակ պատերազմեցաւ. երբ յաղթեց, սիրապատեց, հաշտուհաշտեց և գերի վարեց զ՝մարդիկ։ Երբ յաղթուեցաւ՝ յանձն առաւ զ՝խնարհ և զսրտիկ հնազանդութիւն, զինչ-ամենչ իսկ յաղթանակել զանիրաւութիւնն փոխանակ իրաւանց և իրաւունքն առաքեալ խորտակել, ճշելով զ՝անդօրն անդթաբար իւր երկաթեայ զինուց և բռնաւորական գաւազանին ներքև։ Հաստատարհաւատիկ աշխարհակալութիւնն, և սա այրեց ու կրծանեց քաղաքք և ամրութիւնք, արեան լեռներ ձեւացոյց պատերազմի դաշտերը, բլրաձև դիղեց դիակունք անմեղ զինուորաց, ծաւալեց զիւր սիրապետութիւնն ամենուրեք, տապալեց զ՝ազգք և ընչեց զ՝կառավարութիւնք ի հիմանց եւայլն։

Վերջապէս ազգ մարդկան վերածնաղազդ մարդկան, փոփոխեց ամենայն ինչ ու կ՝փոփոխէ չարունակ, կ՝վերանորոգէ, կ՝վերածնի ու կ՝վերականգնէ յաջորդաբար զայլ սիեզերական բնութեան ընթացից հետ անընդհատ և մինչև ցվախճան։

ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՅԱՌԵԹԱԿԱՆ ՏՈՀՄԻՆ

Ժամանակք հոլովին դարաց ի դարս, ազգք և ազինք գան և անցանեն և Դու կաս յաւիտեան։

Նոյ Նահապետ Ծնաւ՝ երեք որդիք, այն է Յաբեթի, Սեմ և Դամ։

Նոյի անդրանիկ որդի Յաբեթիէն եղան ութն որդիք, Գամեր, Մագոգ, Մադայ, Յաւան կամ Յունիստան, Թուբալ, Մոսոք, Թիրաս կամ Սիրաթ և Եղիսա։

Գամեր Ծնաւ զ՝Թորգոմ, զ՝Ազդանազ և զ՝Հոիփաթ։ Թորգոմ որ կ՝կոչուի Էս Թակլաթ, Ծնաւ զ՝Հայկ և իւր եօթն եղբարք։ որք են Բարթիլոս, Բարդ, Մոլկան, Լեկա, Հերար, Կովկաս և Եգրեսս։ Սոքա ամենքը սերեցան ու բազմացան յառաջ քան զ՝աշտարակաշինութիւն։

Նոյի երկրորդ որդի Սեմէն եղան հինգ որդիք, Եղամ, Ասուր, Արփաքսաթ, Լուդ, Արամ։

Արփաքսաթ Ծնաւ զ՝Սաղայ, Սաղայ զ՝Եբեր, Եբեր զ՝Փաղէկ, Փաղէկ զ՝Ռագաւ, Ռագաւ զ՝Սերուգ, Սերուգ զ՝Նաքովր, Նաքովր զ՝Թարայ, Թարա զ՝Աբրամ կամ զ՝Աբրահամ։

Նոյի երրորդ կամ կրտսեր որդի Քամէն եղան չորս՝ որդիք. Քանան, Մեսարեմ, Փութ և Քուշ։

Բուշ ծնաւ զՆեբրովթ, Նեբրովթ այն է Բել գՌաբ, Բաբ զԱներիս, Անեբիս զ'Արբել, Արբել զ'Բայաղ, Բայաղ զ'Արբելբ, Արբել զ'Նենոս։

ՍԵՐՈՒՆԴԲ ՈՐԴԻՈՑՆ ՑԱՐԵԹԻ

Յարեթի անդրանիկ զաւակէն՝ Գամերայ երեք որդւոցմէ սերեցան շատ ազգեր։ Թորգոմէն Հայք Վիրք (Կիւրճի), Եղերացիք, (Զերքէզք) կապադովկացիք և Կովկասու բնակիչք, որոցմէ և սերեցան Թորգոմացիք։

Յաբեթի երկրորդ որդի Մադոգէն, սերեցան Գոմաչիք կամ Գուիթք և մեծ Սկիւթացիք (Թաթարք) որոցմէ յառաջ եկան Սինէացիք, այսինքն Չինու ազգերը։

Նորա երրորդ որդի Մադայիէն, սերեցան Մեդացիք՝ այսինքն Մարք։ բայց ոմանք զՄեդացիները Մադանայի որդի Քէտուրայէն եղած կը կարծեն։ ոմանք կ'կարծեն զ'Մակեդոնացիք և զ'Լիւբիկեցիք Մադայիէն։ իսկ ոմանք Յաւանէն։

Չորրորդ որդի Յաւանէն, սերեցան Հոնք, այն է Մաճուք և Կիլիկեցիք և այլ կղզեաց մէջ տարածեալ ազգերը։

Հինգերորդ որդի Թուբէլէն, սերեցան Թեսաղք և այլք։

Վեցերորդ որդի Մոսոքէն, սերեցան Մոսոքեանք, զոր ոմանք կ'համարեն Մոսկովիները, այսինքն Ռուսք կամ Սլաւք։

Եօթներորդ որդի Թիրասէն, Թրակացիք և այլք, որ են Թրակիոյ երկրին, Փիլիպպուպոլսոյ, Անդրիանուպոլսոյ, Ռոտոսթոյի և շրջակայ տեղեաց բնակիչք, որոց մայրաքաղաքն է Կոստանդնուպոլիս։

Ութերորդ որդի Եղիսաէն Պեղոպոնեանք, այսինքն Մօռայու բնակիչք։

ՍԵՐՈՒՆԴԲ ՈՐԴԻՈՑՆ ՍԵՄԱՑ

Սեմայ առաջին որդի՝ Եղամէն, սերեցան Եղիմացիք, Պարսիկք և Վրիանք։ ոմանք Հնդիկներն ևս կ'համարեն Վրիանէն։

Սեմայ երկրորդ որդի Ասուրէն, սերեցան Ասորեստանեայց ազգերը, արևելից կողմանէ յայնկոյս Տիգրիս գետոյ։

Երրորդ որդի Արփաքսադէն, սերեցան Քաղդէացիք և Եբրայեցիք, որոց հետ նաև յառաջ եկան նախնի Արաբացիք՝և Բակտրիանոսք կամ Բակտրիացիք։

Չորրորդ որդի Լուդէն, սերեցան Լիւդացիք և այլք։

Հինգերորդ որդի Արամէն, Սիւրացիք, այսինքն Ասորիք, որ նաև կ'ըսուին Արամացիք։ յայսկոյս Եփրատ գետոյ արևմտեան կողմը։

ՍԵՐՈՒՆԴԲ ՈՐԴԻՈՑՆ ՔԱՄԱՑ

Քամայ առաջին որդի Քանանէն, սերեցան Քանանացիք, Սիդոնացիք կամ Փիւնիկեցիք, Սիւրացիք կամ Կադմոնացիք, Քեռացիք, Յեբուս-

սացիք, Գերդեսացիք, Կենեցիք, Փէրեզացիք։ Ամորհացիք և Խեւացիք։

Քսանչորրորդ որդի Մէսարէմէն, սերեցան Եգիպտացիք, և Նոցա աշխարհն անուանեցաւ Մեսրայիմ, այն է Մըսըր. սորա որդւոցմէ եկան Լիբէացիք և Փղշտացիք։

Նորա երրորդ որդի Փութէն, սերեցան Եգիպտացւոց շրջակայ ազգերը, որոց մայրաքաղաքը իւրեանց Նահանգն անուամբ կոչուեցաւ Փութ։

Չորրորդ որդի Քուշէն, սերեցան Եթիոպացիք այն է Հապէշք, Սոփացիք և Կարմիր Ծովու արևելեան ու արևմտեան սահմանաց բնակիչք, ըստ ոմանց Նաև Հնդիկներն ու Ասորեստանեայց մի մասն եւս, որոց տերեց Քուշայ որդին Նեբրովթ։

ՍՓՈՒՌԻ ԵՂԲԱՐՑՆ ՀԱՅԿԱԶ

Հայկայ եղբարք տարածեցան այլ և այլ տեղեր. Երբեւ և Կովկաս դէպ ի հիւսիսակողմը, որոցմէ սերեցան Նդերացիք այն է Զէրբեդեզ և բնակիչք Կովկասու. միւսներն ևս գնացին ուրիշ տեղեր, որոցմէ եղան Թորգամացիք այն է Թիւրքմէնք, որ ժամանակ անցնելով ընդունեցին թուրքաց օրէնքն ու լեզուն, վասնորոյ սովորութիւն եղաւ իրենց մէջ զՀայերը կոչել (Էմմ՚օղլու), այսինքն հօրեղբօր որդի։

Քաթլոս, Հայկայ միւս եղբայրը, յորմէ սերեցան Վիրք կամ Վրաց ազգերը (Կիւրճի), գնաց հիւսիսի ուրիշ կողմերը, որ կ՚կոչուի Ամազ

լեռան, ուր չմնաց իւր տունն ու ամրոցը և անուանեց զայնչ Արբեթ, իւր կրտսեր որդւոյ անուամբ որ այժմ կ՚կոչուի Շամշոդէ կամ Շամշուդէ ամրոց, որ է Գուգարաց աշխարհը՝ Վրաց սահմաններուն մէջ մի քաղաք, և նորա աւագ որդին Մըսխոսաց անուն, չմնաց Մծխիթա քաղաքը, յորմէ սերեցաւ Վրաց ազգը։

Կովկաս, Հայկայ մի եղբայրն ևս գնաց բնակիլ Կովկասու լերանց մէջ, Ա. այն լերանց տեղը որ Կովկասու հիւսիսակողմէ կ՚կոչեայ, որոց բնակիչք կ՚անուանին Կովկասեան՝ Կովկաս Նահապետէն սերեալ. և Բ. այն լերանց տեղը որ, Հայաստանի հիւսիսակողմն են՝ Գուգարաց երկրին ծայրը, և կ՚ըսուին Կովկասու սարերն լերինք, որ տարածուելով կ՚միանան Նախոյիշեալ լերանց գօտիներուն հետ։

Այս ազգերը սփռեցան հեռագնեմ հողագունտիս ամեն սահմանները և ուր որ հաստատեցին բնակութիւն, չմնացին քաղաք, գիւղաքիք ևն։

Իւրաքանչիւր ազգ ու ժողովուրդ, մեծաւ մասամբ իւր ազգն ու հայրենիքը իւր նախահօր անուամբ յիշատակեց, և շատերուն վրայ մինչև յ՚արդ դրշմեալ է հինաւուրց յիշատակութիւնն նահապետական։ Վերոյդրեալ ընդհանուր ազգահամարին մէջ կ՚տեսնեմք յայտնապէս թէ, հողագունտս Նոյեանի ու արդի ազգաց ծագումն Ասիոյ մասին մէջ Հայաստանի Արարատայ սահմաններէն սկսած է, և համայն ազգք և ազինք։

այսինքն Բրիստոնեայք՝ Մահմեդականք, Կռապաշտք ու Եբրայեցիք կամ Հրէայք համարիւն ու համազգի եղբարք են և ազգականք։ Նահապետաց սերունդէն յառաջացած հին ազգաց մեծ մասը, խառնուելով իրենց յաջորդող այլ և այլ ազգաց հետ, թէև նոր անուններ առած են, նոյնպէս և իւրեանց արդի ընակած երկիրներուն շատերը թէև տարբեր անուններով կ՚յիշատակուին այժմ, յանուն երևելի անձանց ու զանազան նշանաւոր դիպուածոց պատճառաւ, այսու ամենայնիւ ամենէն հին ազգերն իրենց նախնեաց անուամբ կ՚յիշուին մինչև ցարդ։ Մանաւանդ պատմագրական ըլլն ակներև կ՚ցուցընէ համաշխարհային ազգաց և ժողովրդոց մի և նոյն ծնողաց սերունդէ յառաջացած որդիք և միևնոյն հայրենիքէ դուրս եղած ու ցրուած ազգեր լինելնին, որ է անուամբ և յաջորդութիւն հնագոյն սերնդոյ մարդկային ազգի։

Արդ՝ թէ Նահապետական տոհմին հին հայրենեաց, և թէ իւր սահմաններէն դուրս ցրուեալ ժողովրդոց և իւրեանց ընակութիւն հաստատած տեղերուն, աշխարհագրական համառօտ ստորագրութիւնը կարևոր է բովանդակել ատանոր, որպէս զի ընթերցողք ոչ հետաքրքիր և ուսումնասէր ճանապարհորդք կարենան ստանալ հարկ եղած պարզ ու որոշ հմտութիւնը։

ՀԱՄՄԱՌՕՏ

ԳԱՂԹԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍՈՒ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Արանդ կամ Հարանդ՝ է ընդարձակ երկիր ի Սիւնեաց աշխարհ, որ կ՚ըսուի ևս մասնաւորապէս Կապան կամ Կապանայ երկիր։ Կայ նաև մի ուրիշ Հարանդ, Արցախոյ փոքր աշխարհին մէջ, այն է փոքր Սիւնիք, որ կ՚անուանեն ամանդ Մարոյ, որոյ անուանն ու առաջին Հարանդը կ՚կոչուի փոքր Սիւնիք, ուր էր Ամարաս կամ Ամարէն քաղաքը։ Այնպէս կ՚թուի թէ, այս այն գաւառն է որ կ՚կոչուի այժմ Զանգեզուր։

Արանայ աշխարհ, կոստպից ծովուն մօտ ի հիւսիսային արևմուտք, որ կ՚տարածի Դարբանդէն (Տէրբենտ) մինչև Հոնք։ Արանայ դուռն, կ՚կոչուի ևս Աղուանայ դուռն կամ դուռն Ճորայ և Կապան Ճորայ, աշխարհաբար երկաթի դուռ, իսկ տաճկերէնն է Տեմիր գաբու որ է Արանայ սահմանները Մեծ հայոց հիւսիսակողմէն կիրճ մի, ուր Կովկասու լերան բազուկը կ՚մօտենայ Կասպիական ծովուն եզրը, ուստի և կ՚ըսուի դուռն Կասպից, ուր կ՚գտնուի Նախայիլեալ Երկաթի դուռնը, որ կ՚ըսեն թէ Աղեքսանդր Մակեդոնացի կապսը շիներ է։ այս կրկին քով կայ մի բարձր աշտարակ և ծովուն վրայ մի ամուր քաղաք, որ կ՚ըսուի Դարբանդ (Տէրբենտ), որ երբեմն հայոց Թագաւորք իւրեանց իշխանութեան ներքև կ՚բռնէին զայն, թշնամեաց մեր աշխարհն անցնելն արգիլելու համար։

Արանք, կ՚ըսուին ևս Աղուանք, տաճկերէն Լեկզի կամ Լեկիլի (Թաթար) հիւսիսական Սարմատացւոց ազգ մի

ՀԱՅԿՈՐԱ

են, որ կ ըսուին ևս լեռնականք, զի բնակիչ են Կովկասու մեծ լերան մոտ, որ է Էլպրուզ կամ Եալբուզ սար, որով կ բաժանին ի Վրաց և ի Հայոց. ուստի նոցա բնակութեան գաւառը կ'ըսուի Տաղստան։ Այսանց աշխարհին սահմանակից է հարաւէն մեծ Հայք, արևմուտքէն Վիրք և հիւսիսէն Մաքթաց աշխարհը, որ կերթայ կհասնի մինչև Կասպից ծովուն եզերը։ Այսոքա ի հնումն էին քաջ աղեղնաւոր և հզօր պատերազմող ազգ և ունէին թագաւոր, որ մեր Արտաշէսի հետ պատերազմելով, յաղթուեցան և նոքա հետ խնամեցնալով հաստատցոյց իրեն զ Սաթինիկ դուստր Թագաւորին Այանայ։

Ալիս գետ, (Գ.ՂՁԸԼ ըմբաք) է հռչակաւոր և հզօր գետ արևելեան կողմը, որ կ ելնէ փոքր Հայաստանէն ու Սեփաստիաէն անցնելով, կերթայ արևմուտք դէպ ի Գամբաց աշխարհը Նէգիկսարիայի մոտ, որ է Նիկիսար և այնտեղէն հիւսիսոյ կողմը ոլորելով, կ երթայ Գանգրը քաղաքի ու Թոսիայի մոտ դէպ ի Պամփիղգոնիայ գաւառը և յետոյ կ'թափի Պնտոսի ծովը։

Աղաստև կամ Աղաստևու գաւառ, մեծ Հայոց Գուգարաց աշխարհը է մի գաւառ և ունի խորաձոր բերդեր, ուր հայոց Աշոտ արքայն ընդդէմ Հաղարացւոց մեծ յաղթութիւն ըրաւ. այն տեղ է նաև Ռեչայոց ձորը։

Աղձնիք, կ ըսուի ևս Աղձն, Մեծ Հայոց ԺԵ. աշխարհ հայ մին է. սա Հայոց մեծ բդեշխութիւն ու կուսակալութիւն էր Վաղարշակայ օրերէն մինչև ցՍրշակ Թագաւոր։ Աղձնիք է նաև հայոց չորրորդ աշխարհին և Մոկաց նահանգին մէջ, Ասորեստանի ու Տիգրիս գետոյ սահմանը և ունի 10 գաւառք, այն է Արզն Նիրկերտ, Բեղ, Կեթիկ, Ցատիկ, Աղնուաց ձոր, Խերշենթք, Գղեթ, Սալնոյ ձոր և Սասուն. ունի չատ քաղաքներ և մայրաքաղաքն է Տիգրանակերտ, որ է Ամիդ (Ցիարպէքիր) և Ցորսա ու Սիմ լերինք. ունի ևս Կաւթի և չատ երկաթ; զեղեցիկ ու պատուական կարմիր ներկ։

Աղուանք, կրսուի ևս Աղբանիս, ազգի ու գաւառի անուն է և է երկու, մինն արևելեան կողմը մեծ Հայոց մոտ՝ Կուր գետոյ հիւսիսային արևելեան եզերքը, որ կերթայ մինչև ի Կասպիական ծով, և Երասխայ գետէն մինչև Հունակերտ բերդը. սր այժմ կը կոչուի Շիրուան։ Սա Հայկայ գաւակներէն՝ Գեղամայ որդի Սկոսկայ բարուց քաղցրութեան անուամբ կոչուեցաւ Աղուանք, վասն զի նա եղաւ Աղուանից հայր և ինքը ժառանգեց զոյն, որովհետև ազու կը կոչէին զՍիսակ իր բարուց քաղցրութեան պատճառաւ։ Աղուանք ունի չատ նահանգներ ու քաղաքներ, որոց գլխաւորներն են, Շաքի կամ Շէքի, այն է Գուգարք՝ յարևմուտս. երևելի քաղաքներն են, Կէնճէ, Ձոր, Ավար, որ է Շէթ-Շաքիի ծնած նահանգական քաղաքը, և ունի բազում քաղաքք և գիւղաքաղաքք, որ կանուանի Ավարտատ, ուր է Արքայաբնակաւոր (չահ տաղի) որոյ ստորոտն են Հաշմազ, Գուլաս, Գում, Վէնտամ, Կուիքաշրն, Թապասարան, Կայթաղ, Ախտը, Կաւմուխ, Կուվա, Ցէրպէնտ, Լէնքերան, Շիրուան կամ Միրուան, Գաղու, Նուշի-քալեա այն է Սիւնիք կամ Զաբաղաղ և Շամախի քաղաքներն ու գիւղաքաղաքները և Կէօքչայ գետը. այսոր տեղերէն կ'սկսի Լեղկիստան։ Ախտը ըսուած քաղաքին մէջէն կ'անցնի Սամպուր մեծ գետը որ կ'հոսի ի Կասպիական ծով։ Այս նահանգը կ'ըսուի ևս Թորին Հայք։

Մեր գրոց մէջ Աղուանից աշխարհը կ'յիշատակուի կրկին առմամբ. Ա. այն աշխարհին տեղը, որ է Կուր գետոյ և Կասպից ծովուն մէջ տեղը մինչև ի Դարբանդ, որ կ'ըսուի Աղուանք Շիրուանայ կամ Շիրուան։ Բ. մասնաւորապես Հայաստանի այն մասին տեղը, որ իր մէջ կպարունակէ երեք աշխարհ, այն է Ռոսի, Արցախ ու Փայտակարան և յայնկոյս Կուր գետոյ մի մասը, որ կը կոչուի յատկապէս Աղուանք հայոց ուր է Աղուանից Կաթու-

դիկոսարանն է Գանձասար ։ Աղուանք հայոց կոչուած այս աշխարհը , երբեմն էր Աղուանից իշխանութեան ներքև և երբեմն հայոց , և ըստ մասին երբեմն Վրաց և երբեմն ըստ մասին օտարաց ։ Աղուանից երկիր կ'ըսուի նաև Զանտահայոց աշխարհը որ է Պարսից արևելակողմը ։

Իսկ միւս Աղուանք է արևմտեան կողմը , որ կ'ըսուի Ալբանիա (Անանաուտ կամ Անանաուտլք) որ է Մակեդոնեոց և Աղբիանան ծովուն մէջ ու Դարմատոյ այն է Տալմացիոյ քով ։ սա ունի ծովեզերեայ մայրաքաղաք Դեուկիա , որ է Տուրայցոց , Աղուանուպոլիս և շատ ուրիշ քաղաքներ ։

Դարձեալ Աղուանք կ'ըսուին և նախայիշեալ Ալանք , ըստ որում սահմանակից էին հայոց Աղուանից ։

Անտիտորոս կամ Անտիտարոս , Գամմայոց երկիրը լեռ. մի է , և է Տորոս լերան մասը , որ կըսուի յանապէն Անտիտորոս , իբր թէ երկրորդ Տորոս , վասն զի այս ևս Տորոս լերան պէս կ'տարածի շատ գաւառաց մէջ, Լիկայոս Նիսէն մինչև ի Մեծ հայք , ունի ոսկոյ , արծաթոյ , երկաթոյ և պղնձոյ բազում հանքեր ։ Ալիս գետոյ ակունքն ևս այս լերան մէջ են ։

Ասորեստան , մեծ Ասիոյ ընդարձակագոյն մի նահանգի անուն է , որ ըստ ոմանց կ'գրուի Ասիրիա ։ Այս նահանգն ունի հիւսիսակողմէն սահմանակից զմեծ Հայաստան , արևելից կողմանէ զՄարք , հարաւէն զԵուշանստան և զԲաբելոն , իսկ արևմուտքէն զՏիգրիս գետ , որով կ բաժանի Միջերկրական ծովէն և ունի մայրաքաղաք զԵնինուէ սոյն երկրին ազգն ու ժողովուրդները կ'կոչուին Ասորեստանեայք , նաև Ասորեստանցիք և Ասուր , այս անուանն առնուած է Սեմայ որդւոյ Ասուրէն , որ շինեց զԵնինուէ , յորմէ յառաջ եկան Ասորեստանեայք ։

Արդ՝ սոքա հաստատեցին աշխարհի առաջին միապետութիւնը , իւրեանց տերութեան ներքև բազում գաւառներ ունենալով , այն է զ'Միջագետք , զ'Ասորիք և զայլք ։ Եւ թէպէտ մեր մէջ երբեմն Ասորեստան և Ասորեստանեայ կ'կոչուի նաև Ասորոց երկիրն , որ է Սիրիա , և ներհակաբար Ասորեստանեայք կ'կոչուին Ասորիք ։ սակայն ըստ այլոց թարգմանութեանց մէջտ իրարմէ զանազանելով կ'գրուին Ասորեստանն ու Սիրիան՝, որ է Ասորիք ։ ուստի Ասորիք կ'կոչուին նաև Սիրիա՝(Շամ վիլայէթի կամ Շամէթ) ։

Արագած , է մի մեծ լեռ ի Հայաստան , որ է հիւսիսէն Արարատեան աշխարհի Գեղարդունեաց ծովուն և Ներբակայ գաւառին մէջ , որոյ ստորոտէն մինչև լերան կատարը կ'կարծուի մէկ ու կէս աւուր ճանապարհ ու կ'բաժանի 14 լերանց հատորներու , և այս լերանց մէջ կայ մի գեղեցիկ դաշտ , ուր Հայկայ որդին Արմենակ երթալով լերան հիւսիսակողմը ծորմորներ (ձոր ձորէ ետև) շինեց և անուանեց զքոյն Արագած ։ իսկ նորա ստորոտն եղած կալուածները կոչեց Արագածոտ կամ Արագածոտն ։

Արարատ կամ Այրարատ , Մեծ հայոց 15 աշխարհներէն մին է , որ գեղեցիկ Արայի անուամբ այպէս կոչուած է , որ էր որդի Արամայ ։ քանզի ինքն այն տեղ բնակութիւն հաստատելով , կառոյց բազում շինութիւնք ։ Այս աշխարհը , Մեծ հայոց երկրին մէջ տեղը մարմնոյ սրտին պէս է ։ Այն տեղ էր երբեմն Արարատեան թագաւորութեան աթոռն ու տունը՝ Արմաւիր , Արտաշատ , Վաղարշապատ և Անի մայրաքաղաքաց մէջ ։ Սա ընդարձակ սալաւ , դաշտային և ջրարբի երկիր մի է , յորում կընթանան կարկաչաւոր գետք , ակնանկիտ ագրիւրք և ունի իւր համանուն մեծ ու անուանի լեռը , զոր կ'անուանեմք Մասիս , ուր հանդեաւ Նոյի տապանն յետ ջրհեղեղին Արարատայ նահանգն ունի 20 գաւառք , այն է Բասեան Բասէնք , Գաբեղեանք , Աբեղեանք , Վանունիք , Արշա-

բունիք, Բաղրեւանդ, Մաղիստն, Շիրակ, Վանանդ, Արագածոտն, Ձակատք, Մասեացոտն, Կոգովիտ, Աշոցք Նիգ, Կոտայք, Մարաղ, Վարաժնունիք. Ոստանն Դուին և գաւառն Շարուր։ Ունի նաև շատ քաղաքներ և ագքաքանիստ մայրաքաղաքներն էին, Արմաւիր, Արտաշատ, Վաղարշապատ և Անի։ Իսկ այժմ նորա իշխանանիստ քաղաքն է Երեւան։ Կոտէից գաւառն, ընդ իշխանութեամբ Ռուսաց։ Ունի և բաղում գետեր, այն է Երասխ մեծ գետը, Ախուրեան գետը, Քասախ ու Հրազդան գետերն ու Գայլատոց ծովակը։

Արեւց աշխարհ կամ Արիք, որ է Բուտի Թորգոմեան, Քուշանք և երկիր Քուշանաց, կ անուանի ևս Թարգմիզոյ երկիր, է Թուրքաստանի և Թորգոմեանոյ մէջ տեղը. Նաև բոմանդակ Պարսից ազգն և նոքա որ էին ներքին իւր հետ միացած, կ ըսուէին Արիք, իսկ նոքա որ էին արտաքին՝ Անարիք կանուանուէին Պարսից կողմանէ։

Այս ազգն արեւելեան կողմն էր, և յիրաւի Արիք ըսուեցան, զի կորովի ազեղնաւորք էին և քաջ պատերազմողք, կ կոչուէին ևս Արիականք։ Արեւց աշխարհն է ընդարձակ գաւառ մեծ Ասիոյ և հիւսիսէն սահմանակից է Սկիւդիա, արեւմուտքէն Կասպից ծովու ու Մարաց աշխարհը, իսկ հարաւէն Պարսից երկիրը և Կասպիական ծովէն կերթայ կ հասնի մինչև Հնդկաց սահմանները։ Սա կ'բովանդակէ 23 գաւառք, այն է Կոմշ, Վրկան, Բաշ, որ են Պարթեւք և այլք։ և Պարթեւաց տերութիւնն էր և հնումն մեծ և յայտ երեւելի, իսկ այժմ Արեւց բոմանդակ երկիրն է ընդ իշխանութեամբ Պարսից, որոյ մեծ մասը կ'ըսուի Թորգոմեան։

Արցախ, որ է Ղարաբաղ, Մեծ Հայոց 15 աշխարհաց մին է և ունի իւր մասն հիւսիսէն Ռուսաց երկիրը՝ արեւելքէն Փարսպատրան, իսկ արեւմտեան հարաւէն Սիւնեաց աշխարհ։ Ունի 15 գաւառք, զորս Աղուանք առին Հայերէն, այն է միւս Հարանդ, Վայունիք, Բերդաձոր Մեծարանք, Մեծկուանք, Հարազանք՝, Մուխանք, Գիանք Գարծկանք, Սիսականք, Բուտաի Փառնէ, Կոխթ, յորում կ'ինի քարախուռկ։ Ունի քաղաքք և բաղում աւանք, և մայրաքաղաքն է Գանձակ որ է Դէնձէ։

Բաղրեւանդ, Մեծ Հայոց Արարատայոյ աշխարհը գաւառ մի է, Եփրատ գետոյ եզերը։ Այն՝ տեղ էր Զարեհաւան քաղաքը և նորա մօտ Բաղման կամ Բաղրաւան քաղաքաձիզը, որ կ'ըսուի ևս Բաղնեւաց աւան։

Բակտրիա աշխարհ, է Ալբեաց սահմաններուն մօտ, որոյ բնակիչք կանուանէին Բաքտրիանոք՝ կամ Բակտրիացիք։ որ էին Ասիոյ Սկիւթացւոց մի Թափառական ազգ՝ Բակտրոս գետոյ եզերքը բնակեալ. իսկ յետոյ եկան ու բնակեցան Մարաց երկիրը, որոյ Թագաւորն էր Զրուան անուն ոմն, որ կ'ըսուէր նաև Զրադաշտ և էր անուանի մաղ։ Այս ազգն յաւաղ եկած է Սեմայ երրորդ որդի Արփաքսաւէն։

Բարձրաշայք, Մեծ Հայոց 15 աշխարհաց մին է Կարնոյ կողմը, որ Տաճիկք կ'կոչեն Էրզիւրիամ. այս նահանգը բարձր դիրք մ'ունի ըստ իւր անուան ուրիշ երկիրներէն աւելի, զի դէպ ի չորս կողմերը կ արձակէ գետեր։ Ունի 9 գաւառք, այն է Դարանաղի, Անիւժ, Մնձաւր, Եկեղեաց, Մանանաղի, Դերձան, Սպկեր Շատամք և Կարբին, Ունի և երեք լերինք, որոց մին է Սեպուհ լեռը, ուր հանդեաւ սուրբ Լուսաւորիչ Մանեայ սրբին մէջ։ Եփրատայ ու Երասխայ սկիզբ կ'ըլխին այս երկրէն. ունի բաղում ու պիտանի թերքեր։ Ջերմուկք և աղք և ուրիշ պարարտութիւնք։ Այս տեղ է նաև Կարնոյ մայրաքաղաքը որ է Թէոդուպոլիս (Էրզիւրիամ)։

Բարսեղք, է Սարմատացւոց մի ազգ Ասիոյ բնակիչ-

ներէն էթիլ գետոյ եզրը, որ էին մեծաւ մասամբ խաչ-
նարածք, բայց յոյն լեզուաւ կոչուեցան (Վասիլիքօն)
այն է Բարեզգ, որ Թարգմանի Թագաւորական, քանզի
ինքզինքին մնապարծուԹեամբ Հերակլեայ քաջին զարմէն
արքայազունք լինել կ'կարծէին։ Սոքա երբեմն ուրիշ հիւ-
սիսական ազգայ հետ միաբանելով կ'արշաւէին աւազա-
կաբար դէպ ի հայոց աշխարհը։

Բիւզանդիոն կամ Բիւզանդիա, էր ծովեզերեայ քա-
ղաք Թրակացւոց, զոր չինեց նախ Պաւսանիաս Սպարտա-
ցւոց արքայն մէջ յեռոյ Կոստանդիանոս Հռովմայեցւոց
կայսրն, ընդունելով զ'քրիստոնէական կրօնը, փոխադրեց
իւր գահն Հռովմէն ի Կ. Պոլիս և քաղաքին բոլորտիքը
պարսպելով մեծացուց զ'այն և անուանեցաւ Կոստանդնու-
պոլիս, որ այժմ կայսերանիստ մայրաքաղաք է Օսմանեանց
միանգամայն և մայրաքաղաք Թրակիոյ աշխարհին։

Բուլղարք կամ Պուլղար, է անուն ազգի և աշխարհն
կոչի Պուլղարստան, և է կրկին, մին է յարևմուտս Դա-
նուբ գետոյ հարաւակողմը Թրակիոյ մօտ, որ Սերբիայ
սահմաններէն ձգուելով կ'հասնի մինչև Պոնտոսի ծովեզերը
և ունի մեծամեծ քաղաքք և բազում գիւղորէք, այն է
Նիկոպոլիս, Սիլիստրիա, Գրզանլիք, Խլիմեայ, Նիշ,
Վիտին, Սոֆեա և։ Բուլղարք է հնումն հզօր և քաջ պա-
տերազմող ազգ էին և ունէին իւրեանց Թագաւոր, որ կը
պատերազմէր Հռովմոց կայսեր հետ և այժմ իսկ ապստամ-
բելով ընդ դեմ Օսմանեան կայսրութեան, ջնջեց ասին
Բուլղարստանի Պալքան լերանց ստորոտը և սկսան դիմա-
դրել կայսերական զօրաց, առաջին անդամ Ֆիլիպէ ասե-
մուռան կողմն չորս ժամ հեռի, Թաքաւորազաղ գիւ-
ղաքաղաքի չրջակայները Օթլուք քէոյ ըսուած տեղէն.
բայց այժմ զապտալ են դիտովին բազում զոհզոհութեամբ
Օսմանեան կառավարութեան զօրաց կողմանէ, իսկ այժմ

Սերվիայիք ևս պատերազմիլ սկսած են Օսմանեանց հետ և
կ'ջանան մանել Բուլղարաց երկիրն ու միանալով նոցա
հետ, միահամուռ դիմադրել կայսերական կառավարու-
Թեան։ Իսկ միւս Բուլղարք որ կ'կոչուին ևս Բուլքք Կով-
կասու մեծ լերան հիւսիսակողմը, ի հնումն Վոլգա գե-
տոյ եզերքը բնակեալ, Սարմատացւոց ազգերէն մին է
որոցմէ յաստերը զատուելով, եկան հայոց աշխարհը, առա-
ջին Արշակ արքայի օրերը և անդ բնակութիւն հաստա-
տեցին չատ ժամանակ Կողբայ ներքին կողմը որ ունի արգա-
ւանդհոյ և հացաւէտ տեղք։ Բուլղարք, սոյն ազգային
անունը Վոլգա գետէն առած կերևին հաւանականաբար։

Գանիրք մեծ երկիրն, դէպ ի հիւսիսակողմը, կսկսի
Թարամանէն, որ է Կայսրդովիա։

Գորի կամ Կոռի, էր արքայանիստ քաղաք Կախե-
դու ի Վրաստան։

Գուզարացիք, որ են Մեծ հայոց Գուգարաց աշխարհի
բնակիչք, էին մեծ ու հզօր ազգ, Սարմատիայ որդի Շա-
բայի զաւակներէն սերեալ, որոց ցեղապետն ու նախահայրը
կ'կոչուէր Բդեաշխ Գուգարացւոց։

Գուգարք, այժմ Շէքի կամ Շաքի, հայոց 13 աշ-
խարհներէն մին է յ'Աղուանստան, որ մեծն Ցրդատայ
օրերը մեծ բդեշխութիւն էր մինչև Արշակ արքայի ժամա-
նակը. արևելից կողմանէ Ուտի աշխարհին վրայ սահ-
մանները կ'հնչոյ, և հարաւէն իւր մտնի է Արցախ աշ-
խարհը։ իսկ արևմուտքէն Տայոց երկիրը։ Ունի 9 քա-
ղաք, զոր Վիրք սոին երբեմն, այն է Զարոցփոր, Մո-
բատիսք, Կողբատիսք, Տաշիր, Թաեղք, Կանդարք, Արտա-
հանք Զաւարք և Կղարչայ։ Այս երկրին մէջ կ'լինի տօսատ
(չիմիր) և ուրիշ թերք։

Դարբանդ (Դէպէնտ) է բարձրաշտաբակ և ամրապա-
տիստ քաղաք Աղանաց ու Աղուանից երկրներուն մէջ
Ճորայ գրան մօտ, որ է Տէմիր զարդ Կասպիական ծո-

մուն արևմտեան եզերը, զոր երբեմն ասին հայք, ուր և նստան հայոց թագաւորք զիրար յաջորդելով որդւոց որդի, նախ Վաչական, ապա Գուշկատին որդի Նորա, Փիլիպպէ և Սեատու։

Եդեր, կոչի և Կողքիս կամ կողքիսէ, (Զերքեզ մէմլեքէթի)։ Սա բազմաց վկայութեամբ նոյնն է, որ Աստուածաշունչ գրոց մէջ կնշուանի Եւիքս։ է ընդարձակ նահանգ մեծին Ասիոյ և Մեծ հայոց արևմտեան հիւսիսակողմը, Վրաց աշխարհին ու Գոնտոսի ծովուն մէջտեղը, ու կնահմանի հիւսիսոյ կողմէն Կորաքսիս լերամբ, որ Կովկաս լերին մի մասն է, որով կդասնի Սարմատիան։ իսկ հարաւակողմէն է չրջապատի Փասիս գետով, որ է Փիսոնն։ Ունի Եդեր, չորս նահանգ, այն է Մառնէզիտ Ագռիկէ, Թաղիս, և Ճանիս. որ են Թաղտիք, որ կբաւին նաև Զերքէթ, Խէրէթ որ և կոչի աչքաբաց կամ Գաղաչոխ, Գուրեաղ կամ Կուրիա, Մկաեէք, Ապազիք և այլք։ Ունի բազում լերինք, գետք, գաւառք քաղաքք և բերդք գիւղաքաղաքք և վանառատեղիք, իսկ ազգերն ու բնակիչները կկոչուին առհասարակ Եդերացիք կամ Զերքեզք որոց Թագաւորն երբեմն էր ընդ իշխանութեամբ Հայոց Թագաւորին։

Մեր գրոց մէջ Եդեր կամ Եդերայոց աշխարհն երեք առմամբ կդիտուանի. առաջին, ընդհանրապէս այն երկիրը որ կը պարունակէ Թաղտիք, Գուրիաք, Մկաեէք, Ապազիք և Զերքեզք։ Երկրորդ ի մասնաւորի Զերքեզաց երկրին տեղը, երրորդ այն աշխարհին տեղը, ուր կելնէ հարաւոյ կողմէն Ճորոխ կամ Փասիս գետը, ուր և կբնակին Գուրեաքք, որ են Վրաց ազգէն, այս առումն հասարակ է Պատմութեանց մէջ։

Եդիպտոս, Ափրիկոյ ընդարձակագոյն մի նահանգէ որոյ բնակիչք կկոչուին Եգիպտացիք, և Երրայեցիք կանուանեն զայն Մեսրերաբար։ Այս նահանգն ունի իւր

մասն հիւսիսոյ Եգիպտական ծովը, որ է Միջերկրականի մի մասը, Արևելքէն Պաղեստին, Արաբիա, ու արաբացւոց ծոցը, որ է Կարմիր ծով, իսկ հարաւէն Եթէոպիա և Արևմուտքէն Կիրենական գաւառը, և կբաժանի երկու մաս, այսինքն ի ստորին և ի Վերին։ Վերին Եգիպտոս կկոչուի հարաւակողմը, ուր է և Թէբայիոյց անապատը իսկ ստորին Եգիպտոս Նեղոս գետոյն Միջերկրական ծովը մտնելու տեղն է, որ ունի Տէլդա կոչուած գաւառը ու Արևելքէն Գեսեմ երկիրը։ Եւ Եգիպտացիք Գամայ երկրորդ որդի Մեսրեմէն յառաջ եկած լինելնուն պատճառաւ, այս աշխարհը անուանեցաւ Մեսրայիմ, այն է Մբսրը։

Եթէոպիա (Հապէշիստան) է Ցունական բառ և կնշանակէ այրեցեալ դէմք և Երրայեցերէն կբսուի Քուշ որ կթարգմանուի սեաւ կամ սեւութիւն։ Սա Ափրիկոյ ընդարձակագոյն նահանգ մի է և կբաժանի երկու մասն, այն է ի Ներքին և ի Վերին։ Ներքին Եթէոպիա է յայնկոյս հասարակածին, որում կիլնէ Հապէշաց աքսայն և նոցա աշխարհն է Եթէոպիա, որոյ մէջ է Մերոէ կղզին. իսկ Վերին Եթէոպիա է յայսկոյս հասարակածին, զոր և չրջապատէ Նեղոս գետը և կանուանի Եթէոպիա ընդ Եգիպտոս, որոց բնակիչք կկոչուին Եթէոպիացիք։ Դարձեալ Եթէոպիա, է մի գաւառի անուն, որ է Արաբիոյ ապառաժին մէջ և է ստորին Եգիպտոսի սահմանակից՝ կարմիր ծովուն եզերքն. արևելից կողմէն Մադիամու երկրին մօտ,

Եղիմ, այն տեղոյ անունն է, որ էր Աբարիոյ ապառաժ և ուր եղաւ Իսրայէլացւոց վեցերորդ իջևանը։ Այն տեղ էին Ջրոյ երկոտասան աղբիւրք և եօթանասուն արմաւենեաց ծառք։ Սա ըստ ոմանց կգրուի Եղիմ, իսկ ըստ Ցուհանց Եղուս. է անուն տեղւոյ, որ կբսուի Ջրհոր Եղիմ, որ է Մովաբա երկրին սահմանը։

Եղիմացիք կամ Ելիմացիք, որ են ազգք և բնակիչք Եղիմայ աշխարհին. և որովհետև սոքա յառաջ եկած են Սեմայ առաջին որդի Եղիմէն, վասնորոյ և կ'անուանին Եղիմացիք.

Եփեռոս է բառ յունական և է Ցոնիոյ ծովեղերեայ մայրաքաղաքի անուն փոքր Ասիոյ մէջ Կաբիսարայ գետոյն ծովը մնած տեղը, ըստ ոմանց սա կ'կոչուէր ի հնումն Սմիւռնա և հռչակաւոր էր Արտեմիտ մեծ կուռքի մեհենին համար որ կ'գտնուէր Եփեսոսի մէջ։

Եփբատ կամ Եփրատէս, նշանակէ պտղաբեր՝ կամ բեղմնաւոր. Հայաստանի չորս գետոյ միոյն անունն է։ Այս մեծ գետը կ'ելնէ Հայաստանի մէջէն ու Բաղրեւանդայ ու կարնոյ լեռներէն անցնելով կ'ընթանայ հիւսիսէն դէպ ի հարաւ, ու կ'պատէ ամիսղմէն կապադովկիան, Փոքր Հայաստանը, Աւբիան երկրին ու Արաբիան իսկ ձախակողմէն կ'ոլորապատ ղմեմ Հայաստանն ու Միջագետք, և Քաղդէացւոց աշխարհէն անցնելով կ'մտնէ 'ի Տիգրիս գետ և այն տեղ իր անունը կորանցնելով կ'թափի Պարսկային ծովը։

Թուրք Թիւրք կամ Թուրքան, Ասիոյ Սկիւթացւոց ազգ մի են, որ կ'անուանին Թիւրքմէնք, որոց բուն բնակութիւնն է կասպից ծովուն արևելեան կողմը և կ'ըսուի Թուրքաստան, Արալ լճին չրվապատն սկսեալ մինչև Հիմալայա լերանց սահմաններէն անդին Գուէնղիւն լերինք և բարձր Թիբեթը։ Այս տեղէն հայոց Թուանին Բ.Ղկ որ է (260) զօրաց մեծ բազմութիւն մ'ելնելով յարձակեցան նախ պարսից երկրին վրայ և առին զայն, և այն տեղէն 24 ցեղերու բաժնուեցան ու պատերազմելով առին նաև գիարիզիոն և գրաւեցին Տաճկաց այսինքն Արաքացւոց ամէն իշխանութիւնը և ընդունեցին մահմետի կրօնքը։ Ցետոյ հայոց Թուանին Դ.Ղկ որ է (367) յարձակեցան Վասպուրական աշխարհի

վրայ, ուր կ'թագաւորէր յոյնժամ Ներեքերիմ արքայ հայոց, և արևելից կողմերուն և Միջերկրեայ դաւառաց տիրելով՝ անցան դէպ ի արևմուտք և յետ ընդ երկար ու բազմաեայ պատերազմի, դրաւեցին Սեբաստիա Թուրքերն այն է Օսմանցիք զ'Կոստանդնուպոլիս, Հռոմոց ինքնակալութեան տեղը, ուր կ'տեսնէ մինչև Ց'այսօր նոցա տերութիւնը և կ'անուանի Թիւրքերէն հիւքիւմէթը օսմանիյէ կամ տէվլէթը Ալիյէ։

Թրակա, ըստ յունաց Թրաքի, է անուն դաւառի Եւրոպիոյ որ ունի հիւսիսէն սահման Ենոս լեռը, որով կ'բաժանի Միսիայէն որ է Բուլղարաց աշխարհը, արևելքէն իր սահմանն է Պոնտոսի ու Պրոպոնտոսի ծովը, հարաւէն յունաց ծովը իսկ արևմուտքէն Հեբրոս գետն ու Պանգեոս լեռը, որով և կ'բաժանի Մակեդոնիայէն։

Արդ՝ այս նահանգի բնակչաց զորքէն Անտիոքայ արքային ունեցածին նման մի զօրախումբ կար որ կ'կոչուէր գունդ Թրակայ։ Այս աշխարհն ի հնումն կ'անուանուեր Սկիւթիան և յետոյ ըսուեցաւ Թրակիա կամ Հրոտի որդւոյ Թրակայի պատճառաւ և կամ երկրին կոչումներուն համար. իսկ այժմ Ռումելիա կ'ըսուի, այն է Հռոմը, կամ Հռոմայոտան (Ռումէլի), զի մեծն Կոստանդիանոս, ինչպէս յիշատակուեցաւ ի վեր անդր Հռոմայեցւոց կայսրութիւնը փոխադրեց այս նահանգը և մայրաքաղաքը որ կ'կոչուէր յառաջագոյն Բիւզանդիա, յետոյ այս պատճառաւ անուանեցաւ նոր Հռոմ, որովհետև Կոստանդիանոս չինեց զ'այն, վասնորոյ և կոչուեցաւ Կոստանդնուպոլիս (Կոստանդանիպէ կամ Ըսթանպոլ)։ Եւ քանզի այս քաղաքի բնակչաց շատերն յոյնք էին, և տերութիւնն իսկ յունաց ձեռքը ինելուն պատճառաւ սոսրութիւն եղաւ անուանել զ'յոյներն Ռում որ է Հռոմ։

Լիբեացիք, որ կ'ըսուի Եբրայեցերէն Լուբիմ որ կը նշանակէ սիրտ ծովու կամ ազգ քաշխարհ, Լիբեաց գա-

հարին բնակչաց անունն է Արդ՝ Լիբեայ ի հնումն բոլոր Ափրիկէ անունն էր. բայց յատկապէս Լիբիայ ըստուածը Ափրիկէ մի մասն է, արևմտից կողմանէ ստորին Եգիպտոսի մէջ, ու արևելքէն Միւրենական գաւառին մէջ։ Սա երբեմն կանուանի Փութ Քամայ երրորդ որդւոյ անուամբ և որոշի հեռու. կ՝բաժանէր երկու մասն, այն է արևմտքին և ներքին, այժմ արտաքին Լիբիայն և ներին անապատքին կոչուի երկիր Բարկայ, որ է մասն Բարբարոսաց աշխարհին. իսկ ներքին Լիբիայն կանուանի, Բիւլէ Դուլ-կերիդ անապատաւոր հանդերձ։

Լիկիոնացիք, է անուն բնակչաց գաւառին որ կը կոչուի Լիկիոնիա, և Ցուռնաբէն կ՝ստուգաբանեսի գալչին։ Լիկիոնիա Փոքր Ասիոյ մէջէն երկրորդ գաւառ մի է և հիւսիսայ կողմանէ սահմանակից է Գալատիա (Էնկիւրի) ապրեմուռքէն Խաւրիա, հարաւէն, Սիլիկիա ու արեւելքէն Փոքր Հայաստան։ Լիկիոնիոյ մայրաքաղաքն է Իկոնիոն, և նոր գաւառն այժմ կկոչուի Ղոնիա կամ Գոնիա.

Լիւոնիա, ի հիւսիսայ Սարմատացւոց Ռուսաց մի գաւառ է, այսինքն Լեհաց որոյ մայրաքաղաքն Ռիգա։

Լիւդիա կամ Լիդիա, է գաւառ Ասիոյ առանձնակի, որոյ մէջէն անցնելով Մէանդրոս գետը, կերթայ ի Յոնիա գաւառ ու կմտնէ Ցուռնաց ծովը. սա ունի իւր մասն արևելքէն Փռիւգիոյ երկիրը, հիւսիսէն Միսիա և հարաւէն Կարիա որ է Ասիոյ։ Ասիոյ ԽՕԹՆ եկեղեցեաց հենդն այս գաւառին մէջն էին, զորս կրէր Յօհաննէս Աւետարանիչ Յայտ. Ա. Գլ. որոց գլխաւորն ու արքայանիստ քաղաքն էր Սարդիկիս որ է Սարդիս։

Լիւդացիք էին ազգք և բնակիչք Լիւդիայ գաւառին, որոց Թագաւորն էր Կիւրոս, զոր ձերբակալեց Հայոց Արտաշէս արքայն։

Լիւբիացիք, է անուն բնակչաց գաւառին, որ կանուանի Լիբիրէ կամ Լիբիրիան (Իտալիայէն վերագրեթ)։

և յանապէն կենդանեաց քանարհաղ կամ ուրախութիւն։ Սա Եւրոպոյ գաւառ է և ունի իւր մասն յարևելից կողմանէ Արսիա գետը և Արսիոյ ազգերակունքէն տարածուելով կերթայ կհասնի մինչև Կոստանդնուպոլսոյ գետոյն ծայրը, և հիւսիսէն անընդհատ լեռներով կրաժանի Պանոնիայէն (Պառնառատան) իսկ արևելքէն Սկոդրոս և Գրիլոն գետերով կանջատի Մակեդոնիայէն։ Սա կազմուածակի զԼիբուրնիա և զԹրակիատիա (Տարմացիա)։ Այժմ այն մասը որ կոչեցեալ Դանուբ գետոյ հարաւակողմը, կոչուի Շկլաւոնիա։

Լօռէ կամ Լօռի, Ցաշրաց մէջ Աղուտ կամ Աղաստև գաւառը Հայոց արքայանիստ քաղաք էր, Ուտի աշխարհը, ուր կնոտէին Թագաւորք Հայոց Բագրատունեաց տոհմէն ի Թուականին Հայոց ԲՃԼ. (250), որոյմէ մին է Կորիկէ որդի Անհողնէնն Գաւթի Գագիկ որդւոյ։

Թաղիրք, Սարմատացւոց ազգ մի էին, որ կընակէին Ասիոյ մէջ, Կովկասու լերան հիւսիսակողմն ԷԹիլ գետոյ եղերքը, ուրբ մերձանելով Բարսղաց հետ. Հայոց Վաղարշյ Թագաւորի օրերը Ճորոյ գուռնէն դուրս եկան և պատերազմեցան նորա հետ,

Թաղիրք, կ՝ըսուի նաև Ճանիա կամ Ճանիւք (Ճանիկ) Եգերայ փոքր աշխարհաց մին է, որ է Կոզիքսի սա մեծ Հայոց հիւսիսային արևմուտքէն Փասիս գետոյ մօտը՝ Վրաց աշխարհին ու սեւ ծովուն մէջ տեղն է և ունի Լազիկա գաւառն, այն է Լազու երկիրը (Լազիստան), որոյ բնակիչքն ի հնումն էին անուն և վայրենարարոյ Սկիւթացւոց պէս, վասնորոյ երբեմն կյեղչուին զրոց մէջ մեմեանց տեղ։

Թարսան, Արեւոյ երկիրն ընդարձակ գաւառ մի է, Պարսից հիւսիսային կողմէն և Կասպիական ծովուն Արևելքէն։

Կասպատիկիա կոչի և Գամիրք, է Փոքր Ասիոյ մէջ մի գաւառ Գալատիոյ (Էնկիւրիս) Արևելեան կողմը։

Կասպից ծով, այն է Աժդերխանու ծով, որ նաև Ի՛րսուէ Կիլանու կամ Վրկանի ծով։

Կիւլիկիա Փոքր Հայոց Ղոնիսյու հարաւակողմն է մի աշխարհ որ տարածուելով դէպ ի երկայնութիւն կերթայ արևմուտքէն արևելք, և հիւսիսակողմէն իւր քովն է Տօրոս լեռը, որով կը բաժանի Կապադովկիայէն ու փոքր Հայաստանէն, և Հարաւէն ունի Կիլիկեցւոց ծովը, արևմուտքէն զ Պամֆիլիա ու Արևելքէն զԼիբիա։ Այս երկիրը կկոչուի այժմ Խարամանիա և իւր մայրաքաղաքն է Տարսոն (Թէրսիս), այս տեղացի էր Պօղոս Առաքեալ, ուր և քարոզեց զԲրիստոնէութիւն։

Կովկաս աշխարհ, է ընդհանուր անուն, ընդ որ կը բովանդակի լերան մի մեծ կարգ, որ կը բաժանէ զԵւրոպան Ասիայէն ի հարաւային արևելք, և որ կտարածի Կասպից և Սեւ ծովուց մէջ տեղը՝ Կուր և Ռիոն, այն է Փասիս գետոյ հիւսիսակողմը։ հիւսիսային լայնութեան 40°—43°, և արևելեան երկայնութեան 53°—47° աստիճանաց։ Գլխաւոր շղթայն, կամ սեփական անուամբ Կովկաս, կ'ընթանայ հարաւային արևելեան կողմէն դէպ ի հիւսիսային արևմուտք, Ապշերոնի թերանկղզիէն սկսեալ մինչև Անդրսի ամրոցը, գրեթէ 330 հաղարամետր (քիլոմէթռ) երկայնութեան վրայ։ Գլխաւոր շղթայէն աջակողմն ու ձախակողմն կգտնուին շատ շղթայներ, որք են ի հիւսիսակողմն Եվլան ու Եկպրուս կամ Նալպուզ, (Սիրոնի լերինք), և հիւսիսային արևմտեան կողմն այն բլուրք, որ կպատեն առ ափամբք Սեւ ծովու (լերինք Կոխբսիսի)։ Խրմու բարձրագագաթ լերինք պէտք է նաև համարել Կովկասեան լերանց խումբէն կախեալ մեկպայ, վերջապես դէպ ի հարաւային արևմուտքն կողմ Կովկաս կմինայ մինչև Տաւրոս լերանց հիւսիսային ծայրը, որ կպարունակէ ամբողջ Ասիան։ Կովկասեան խումբերու գլխաւոր գագաթունք Եկպրուս լերանն են, որ

ունի 5,600 մետր կամ 1680 ռուսական բարձրութիւն, Մըզինվարի կամ Քազբեկ 4800 մետր, Եւ Շաթ Եկպրուս 4000 մետր։

Գետոց շատերը կընդունին իւրեանց ազբիւրը Կովկասու մէջ, որոց երեւելիներն են Քուպան ի հիւսիսային արևմուտք, Թէրեք և Սունժա ի հիւսիսային արևելք։

Կովկասեան լերանց այլևայլ շղթաք, կերեւցայնեն շատ կիրճեր, որոց մի քանիներն անուանի են, ինչպէս Դարուանք Կովկասեան, այսօր (Տարեալայ կիրճ), ի Թիֆլիս Մօզտոքի ճանապարհին վրայ։ Դարունք Ալպանեանք կամ Սարմատեանք՝ Տաղստանի բլրոց երկայնութեամբ Քասպանքարի սահմանին մէջ։ Դարունք Կասպիականք՝ Թէպէրանի մօտ, և Դարունք Իպէրեանոյ, այսօր (Զաուրօպ)։

Կովկաս քաջածանօթ է անգտանի ի հինաւուրց ժամանակաց։ Հելլենական դիւցազնութեան մէջ Նա կկատարէ մի կարևոր գործ։ Կովկասու գագաթանց վրայ է որ, Հելլենք կորչին տեղի տանջանաց Պրոմէթէսի (*)։ Բազմաթիւ գաղթականք կամ (թափառական) ցեղեր որ կը բնակէին այս լեռները և կճանդցուին այսօր Չերքէզ, Նողայք, Ասպազիք, Օսէթք են անուններով, անկախ մասնային գրեթէ միշտ։ Նախնեաց մէջ մի միայն Միհրդատ ձեռնհաս եղաւ իւրեանց ճանչցնել ժամանակ մի իւր ի-

(*) Բան առասպելական հեթանոսաց, Պրոմէթէոս կամ Պրոմիթէոս Յարեթայ որդին էր ու Դեւկալիոնեայ հայրը որոյ համար կ'ըսեն թէ՝ յաստուածներէն կրակ առաւ ու մարդկանց նորհեց, նորա պարանալով Յաստուածք, բրոնեցին զինքը և հիւսիսայ կողմերը կապեցին Կովկասու լերան։

Դեւկալիոն, Պրոմիթէոսի որդւոյ անունն է, զորմէ բանաստեղծք կառասպէլէն թէ, նորա շափահաս եղած ժամանակը, Եպիմէթէոս նորա հօրեղբայրը, իւր Պիւռա անուն դուստրը կտար տուաւ Դեւկալիոնի կնութեան։ Եւ այն ինչ կթագաւորէր Նա Թեսաղիացւոց վրայ, տար-

խանութիւնը նորերուն մէջ Կովկաս լեռանց վրայ Թուրքաց միապետութիւնն էր լոկ անուամբ և եթ ։ Բուռաք, դիրենք նուաճելու համար, տիպարուցան հաստատել ամբոյներու շարքեր Կովկասու բոլոր գագաթանց վրայ, այսու ամենայնիւ լեռնականք տրամագիր էին խռովութիւն յարուցանել անդադար, դեռ Բուռաք այս տեղերուն չտիրապետած, իսկ այժմ գրաւած են լեռնականաց բոլոր երկիրներն և նոքա կիշխեն ամբողջ Կովկասու վրայ. —

Ռուսականք, բոլոր զէնրպան և Ասիոյ երկիրներուն մեծ մասը լեցնող մարդկային սպիտակ ցեղը Կովկաս աշխարհէն ծնունդ առած կհամարին, և Կովկասեան ցեղ անուանը տալով կորոշեն միւս ցեղերէն. ինչպէս որ Ցարեթական տոհմի նախնեաց ազգատոհմաքէն իսկ կրնայ ապացուցուիլ սորա ստուգութիւնը ։

Կովկաս Ռուսական (կառավարութիւն) Եւրոպոյ նահանգի, Աժտարխանի մէջ տեղը ի հիւսիս ։ Բօզաքք Սեւ ծովու արևմուտան կողմը, Չերքէզստան ու Տաղստան ի հարաւ, Կասպից ծովը յարևելս ։ Կովկասու գլխաւոր շղթայք զետեղեալ են ի հիւսիսակողմն աշխարհէն այն և ունի ևս բազում լեռք ։

Կորդուաց երկիր, Հայաստանի հարաւային կողմերն են, որ կանուանի այժմ Քիւրստան, ուր կայարանակի

տիկ ջրհեղեղ մ'եղաւ. ուստի Գեկիպլեան միայն իւր Պիւռա կնոջ հետ նաւ մտնելով ազատեցաւ, ու նաւն հասաւ Պարնասու լեռը ։ Եւ երբ դադարեցաւ ջրհեղեղը, գնաց Նոյ Թեմիստեայ (կամ զոհողութեան տեղն) Բագինը հարցանել ազգի նորոգութեան համար. իսկ նա պատասխանեց երթալ Ռէնուլ մեծի մօտն, այսինքն երկրի ոսկրները (քարեր) և ի Թիկունս կոյս Թաւալեցնել. նոքա ևս քարեր առնելով Թաւալեցուցին ի Թիկունս կոյս, է այն քարերը, որ Գեկիպլեան Թաւալեցոյց, եղան արուք, և որոնք որ Պիւռա, եղան էգ ։

Աղձնեաց, Մոկաց, Կորձէից, Գարսկահայոց, աշխարհներն ու Տարուբերանց մի մեծ մասը. իսկ մասնաւորապէս ասնելով, է նոյն ինքն Կորդուք գաւառը ։

Կորդուաց լերինք, որ կրնկապատեն ըստ մասին Հայաստանն ի հարաւոյ և կիսնչուին Տօրոս Հայաստանի, և ըստ մասին կրաժանեն Կորդուաց երկիրը, սոքա են երեք Ա. մի մասն Կորձէից մէջէն անցնելով կրատէ Մոկաց երկիրը և կըսուի Մոկաց լեռ, Բ. Մոկաց աշխարհէն կերկարի դէպ ի Պասուն գաւառ, մինչև Տարոնոյ (Մուշ) սահմանները և կըսուի Սիմ լերինք ևս և Ջրաւան, և տեղ տեղ կանուանի Տօրոս Տարոնոյ. իսկ Գ. կհասնի դէպ ի Արարատ և կրսուի Նոյնպէս Կորդուաց լեռան, որոյ մի մասն ևս Ծաղկեոյ լեռան ։

Կորդայք, է մի ի 15 աշխարհաց Մեծին Հայոց, և ունի իւր մասն արևմուտքէն Մոկաց աշխարհը, հարաւէն Ասորեստան, արևելքէն Գարսկահայոց երկիրը, իսկ հիւսիսէն Վասպուրական աշխարհը ։ Այս երկրին մէջ կայ մեծասան գաւառք, այն է Կորդուք, Վերին Կորդուք, Միջին Կորդուք, Ներքին Կորդուք, Ասրուանք, Մաքոզանք, Որսիրանք, Այդառք, Կարթունիք, Ճահուկ և փոքր Աղրակ, ունի և Արևբանոս քաղաքը, որ է Աղրակ և Սաղամաս ։

Կաւ գետ կամ Բուռ գետ (Քիւռասոյտ), այս անուամբ կայ երկու գետ, մինն է Մեծ Հայոց կամ Վերին Հայաստանի հիւսիսային արևելեան սահմանաց մէջ, որ կերնի Տպոյտ (Ակռաս) կողմերը Կովկասու լեռներէն և կերթայ կոստէ Վրայ աշխարհը, այսինքն ԳօռՀօմի ձորերով կմտնէ ի Վրաստան՝ յԱխալցխայ, յետոյ Թիֆլիսի մէջէն ու Գորիէն ան ցնելով, դարձեալ կգայ ի Հայաստան յԱրցախ աշխարհն ու կխառնուի Երասխ գետոյ մէջ, որոյ հետ կերթայ կհասի ի Ծովն Կասպեական ։

Այս դեռն ի հնումն կրաժանէր երկու առանձ (դեռտոյն բաժնուած տեղը), մի առանձ կերթար կխառնուէր Երասխ գետոյ մէջ, ինչպէս և սոյժմ իսկ, մեւս առանձն անցնելով Ուռաքուց աշխարհէն, կերթար կիջնէր Կասպից ծովը Ալանաց դրան մօտ, ինչպէս յայտնի է Խորենացւոյն այս խօսքէն այն ինչ կասպից ծովը կսահանէ ընդլով Թէ, « երկայնութիւն նորա ձգի ի բերանոյ Երասխայ և Կուր գետոյ » այսպէս և նաև հին աշխարհագրոց մէջ։

Իսկ մեւս Կուր գետն որ նաև Կիւրոսի Կիւրոս, Զարաթց Կիւրոս արքայի անուամբ որոյ մէջ սպանուեցաւ Նա, Մարաց աշխարհն է մի գետ, որ կերթայ կխառնուի Գուզան գետոյ մէջ և երկուքն ի միասին կհոսին ի ծովը Կասպից։ Դարձեալ, Կուր է մի կղզի Կասպիական ծովուն մէջ ի Փոյտարարան աշխարհն, Երասխ ու Կուր գետոց ծովը մտնելու տեղւոյն դէմը։

Հայաստան աշխարհ, որ նաև Հայկայ անուամբ կը կոչուի Հայք կամ աշխարհ Հայոց։ Բաբելական բաժանումէն ղնին, ստացաւ Հայկ զՀայաստան և ժառանգէց որդւոց որդի, անդ հաստատելով զՀայկազանց ազգութիւն անկախ որ տեւեց չարունակ 1800 տարի։ Այս աշխարհը Հայկայ հօր Թորգոմայ անուամբ կըսուի նաև տուն Թորգոմայ։ Օտարազգք, Հայկայ Թոռան որդւոյն Արամայ անուամբ, Հայաստանի կ'ըսեն Առմենի կամ Առմենիա, Թուրքերը կանուանեն զազգն Երմէնի. իսկ Եբրայեցիք Առմենիէն, այն է Արամեան։

Հայաստան, որ կանուանի նաև Մեծ Հայք, կպարունակէ հնգետասան մասնաւոր աշխարհք կամ նահանգք։ Այս աշխարհներէն մի քանիներն են ի վերին Հայաստան և միւսներն ի ստորին, որք են Արարատ կամ Այրարատ, (գեղեցիկ Արայի անուամբ), Վասպուրական, Սիւնիք, Մոկք, Կորճայք, Զարեհաւանդ, Տուրուբերան, Աղձնիք, Բարձր Հայք, Զորրորդ Հայք, Արցախ, Ուտի, Փայտարան, Գուգարք և Տայք. որ յետ վերջանալոյ ազգայնոյ Թագաւորութեան, մասցին այս երկիրներն հանդերձ ընակչօք Օսմանեանց, և Զարեհ Իշխանութեան ներքև և ապա Արարատայ աշխարհն անցաւ Զարեհիներէն Ռուսաց ձեռքը։

Կապադովկիայ մէջն կսկսի Հայաստանի երկայնութիւնն, արևմուտքէն դէպի արևելք տարածուելով, որ կերթայ կհասնի մինչև Երասխայ Կասպիական ծովը թափած տեղը և կրաժանի մեծ ու փոքր Հայք։ Մեծ Հայաստանի սահմանակից են արևելքէն Մարք ու Կասպից ծովը, հիւսիսէն Ազուանք, Վիրք և Եգեր կամ Կոդիս որ է Զերքեզստան, արևելքէն Կապադովկիոյ Զանտուն ու Եփրատայ գետը, որ կրաժանի Փոքր Հայաստանէն մինչև Տօրոսի լեռը. իսկ հարաւէն սահմանակից են՝ Միջագետք և Ասորեստան.

Մեծ Հայաստանի անուանի լեռներն են. մեծ Արարատ՝ կամ Մասիս, ունի 16,000 ոտնաչափ բարձրութիւն. Մոսկեան. որոյ շրջանն կհասնի մինչև ի Կապադովկիա. Արարատ, որ է հիւսիսէն Արարատեան աշխարհն գեղարգունեաց ծովուն և Եղերակայ գաւառին մէջ. Սեպուհ լեռ՝ ինք որոյմէ կբղխին Եփրատ ու Երասխ գետերը. Անտուտրոս լեռն, որ ունի 15,000 ոտնաչափ բարձրութիւն, Եփրատ երկուքի կրաժնէ զայն. Կորդուաց (Քիւրտերու) լեռը, յորմէ կելնէ Տիգրիս գետը։ Տօրոս ու Նպատ լեռ՝ ինք, որ կրաժանեն Հայաստանէն Միջագետքն ու Ասորեստանը. Կովկաս լեռը, որ կորոշէ հիւսիսէն Վիրքերն ու Ազուանները Հայաստանէն։

Մեծամեծ ու փոքր գետեր ունի նաև Հայաստան, այն է Եփրատ, Տիգրիս, Երասխ կամ Գեհոնէն ու Փասիս որ կ'ըսուի նաև Ռիոն և այլ փոքր գետեր։

Հայաստան ունի կս երեք ծովեր, այն է Գեղամայ,

որ կ'ըսուի այժմ Սևանայ ծով, Բղնունեաց կամ Ցօրեաց ծով, որ կանուանի այսօր Վանայ կամ Աղթամարայ ծով։

Հոնաց աշխարհ, Կասպից ծովուն մօտ Ալանաց հեւ-օխսիդոմը կկոչայ, որ կ'կոչէին ամենք Խուչաս։

Հոնք ան է Թաթար, հիւսիսարնակ Սարմատացւոց ազգերն են, որոց մի մասը բնակեալ էր Ասիոյ Սարմատիոյ մէջ, Խազրաց, Մասգեթաց և Բասլաց սահմանները Միջոցիս ծովակին մօտ, որ է Ազովաս ծով։ Սոքա Մարկիանոս ու Վարենիսանոս կոչեցաց օրերը, յամի Տեառն 464 ին գունդ կազմելով անթիւ զօրաց, յարձակեցան ի Պանոնիա, որ է Մառաւստան, որոց Թագաւորն էր Ատտիլա անուն անողորմ բռնաւորը. այն տեղէն եղեալով շրջեցան գրեթէ բոլոր Եւրոպան և ստոփկ հարուածներ տուին մինչև յուսկ յետոյ Հռոմայ Ղէոնդ հայրապետը դնաց Ատտիլայի ներկայացաւ, և աղաչելով ետ դարձոյց զինքը Երկին ի Պանոնիա. և այն տեղ հաստատեցին յայնժամ Հոնք իւրեանց տէրութիւնը, որոյմէ Ընկուզք, որք են Մառաւք, անուանեցան Թաւերէն լեզուաւ Հունդարի իսկ Հայերէն Հոնք և իւրեանց երկիրը Հունդարիա։

Դարապաղ է մի ի 15 աշխարհաց Մեծին Հայոց, Արքսոն աշխարհի հիւսիսակողմը, որոյ կ'ըսուի նաև Սիւնիք կամ աշխարհ Սիւնեաց. մայրաքաղաքն է Շուշի. այս երկրին մէջ է Գանձակ քաղաքն ևս և բոլոր Արքսոնս երկիրը կ'կոչուի Դարապաղ, որ կնշանակէ Սեաւ սպեղ։

Ղեկք և Ղեկաց երկիր, է Ալանաց աշխարհին մէջ, ուրկա սերեալ են Հայոյ Ալէկսա եղբօրմէն որ կ'ըսուին Ղէկք, որոյ անունէն առնելով կոչուէր է այս ազգ Ալէկս այն է Լեղկի, այս Ժողովուրդը Կովկասու լեռնային մասին մէջ կբնակի և համբաւաւոր է իւր քաջութեամբ, որոց երկիրը կանուանի Լեղկիստան։

Ճորայ գունդ, որ Կասպիական ծովուն արևելեան

եղեալքը, Դարբանդայ (Տէրպէնտ) երկիրն անցնելու կիրճ մի է, որ կ'ըսուի նաև Կասպեան Ճորայ, երկաթոյ դուռն, դուռն Ալանայ կամ Հոնաց, և կամ դուռն Դարբանդայ կամ Ղաֆլայ, որ կ'ըսուի Թուրքերէն Ցէմիր գաբու։

Ճորոխ, կ'ըսուի և Հորոխ որ բաղմաց վկայութեամբ Փիսոնն գետն է և է դրախտի չորս գետոց մին, որ Տրապիզոնի ու Բարերդայ կողմերէն եկեալով, կ'երթայ դէպի Համշէն կամ Ցամսուր գաւառն Հայոյ, որ է Տայոց աշխարհին ու բարձր Հայոց մէջ տեղը Խոտոր Ջրոյ արևմտեան կողմը. այն տեղէն կ'ընթանայ Տայոյ երկիրն և արևմտեան կողմը խոտորելով, կ'պատէ Եղեղացւոց աշխարհը, որք են Լազք ու կ'հոսի ի Սեաւ ծով։

Մակեդոնիա (Մաքեդոնն կամ Ցիլիսէ) այս քաղաքն հիմնեց Փիլիպպոս Թագաւոր՝ մեծն Աղէքսանդրի հայրը։ Մակեդոնիա կոտուգաբանի յունարէն երկայնանիստ, կամ քստ ոմանց բարձր, կամ դերազանց, Եւրոպոյ մի ընդարձակագոյն նահանգի անունն է, Սա ունի իւր մօտն արևելից կողմանէ զյունաց ծովը, ի հարաւոյ զԹեսաղիա այն է Նասեա, յարևմտից զԵպիրոս և զԱլբանիա (Առնաւուտլըք), իսկ ի հիւսիսոյ կողմանէ Սկարդոս լեռան ու Որբելլոս, և ունի սահմանակից մասամբ խէք զՄիւսիա կամ զՄօէսիա որ կ'անուանի այժմ Սերբիա և Բուլղարաց աշխարհն ու Թրակիոյ մասը որ է Հռոմանստան (Ռումէլի)։ Սա ի հնումն կ'կոչուէր Եմաթիա և Միգդոնիա. իսկ այժմ նորա արևմտեան մասը կ'անուանի Ալբանիա։

Սերվիոյ բնակիչք են Սերվիացիք (Սրբոյ) և Բուլղարստանի բնակիչք Բուլղարք Սլաւեան կամ հիւսիսական Սարմատացւոց գլխաւոր ցեղէն երկու առանձին ազգ կամ ժողովուրդ, Սերվիացիք, ունին մի մասնաւոր իշխան և իշխանական կառավարութիւն ընդ գերիշխանութեամբ Օսմանեան Կայսեր, իսկ Բուլղարք մինչև ցայդ հպատակ են նոյն կայսերական իշխանութեան։ Սակայն այն թուա-

կան իշխանութեան։ Սակայն սոյն Թուականին Սերվեանցիք և Գարատաղցի Խրուաթք, ապստամբելով սուլթանին ընդդեմ Օսմանեան կայսրութեան, պատերազմի ձառնարկած են։

Մասդութք կամ Մազդութք Աժդարիան կամ Աժտերխան, են ազգք ինչ Սարմատացւոց Ասիոյ որ կրնակին Կասպից ծովուն մօտ, հիւսիսէն Աղուանից սոյն է Ալանաց քով, որ է Տաղստան, որոց Թագաւորն էր ի հնումն Սանէսան, Արշակունեաց տոհմին ազգականութենէն, որ անասլով իւր զօրաց հրաշալրանաց, Թոյլ տուաւ Նոցա սպանանել զՏէր Գրիգորիս Աղուանից սուրբ Կաթուղիկոսը։

Մասիս կամ Մասիս լեռ, որ կ'ըսուի ևս Արարատ լեռ, իսկ տանկերէն Աղրը տաղ կամ Ճիւտ տաղը, սա Մեծ հայոց անուանի ու մեծ լեռն է Արարատեան աշխարհին մէջ, ուր հանգեաւ Նոյի տապանը յետ Ջրհեղեղին։ Այս լեռը, հայկական Արմայիայ զրվեն Ամասիա, իւր անուամբ կոչեց Մասիս, որոյ սպիտակափառ գագաթան բարձրութիւնը կ'երևի երկնից ամպերն անցած զի Նորա վրայ ձիւնն անպակաս է։

Թարք կամ Մեղացիք, այն է Քիւրտք, որ կը բնակէին յառաջ ժամանակաւ Մարաց աշխարհը, որ է Ասորեստանի Արևելակողմը որ այժմ կ'ըսուին Քիւրտք և ցրուեալ են Հայաստանի գրեթէ ամէն կողմերը, որոց մէջ կան Նաև շատ խումբեր որ են վրանաբնակք և կը գնին ասա և անդ տեղը մանուանդ կ'ելափսուին լեռնային դիրքերու մէջ, իսկ ձմեռը կ'ինչեն գաւառային տեղեր։

Մեղացիք նոյն Մարաց ազգէն ու երկրէն են, քանզի Մարք կ'ըսուին Մեղք՝ Ցարեթի որդի Մադայի անուամբ, յորմէ յառաջ եկան, և սոցա երկիրը կանուանի Մարաց աշխարհ։

Միջագետք, (Տիգրիսէ և Եփրատ կամ Մուսլան կամ Գարամամ)։ է ընդարձակ երկիր Ասիոյ, Եփրատայ ու Տիգրիսի երկու գետոց մէջ տեղը. ուստի կ'անուանի Միջագետք, որոյ հարաւային կողմը կ'կոչուի Միջագետք Ասորոց, ուր էր երբեմն առաջին Բաբելոն մայրաքաղաքը, ուր և է այժմ Նինուէ, որ է Մուսուլ և Թառան։ իսկ հիւսիսային կողմը կ'կոչուի Միջագետք Հայոց և Ուռհա որ է Եդեսիա, Արքայ հայոց Թագաւորի մայրաքաղաքը Քրիստոսի ժամանակ։

Միջագետ ծովակ, այն է Ազոֆու կամ Ազովու ծով, (Ազաք տեղերն) է ծովակ ինչ Սկիւթացւոց կամ Հունաց, որք են փոքր Թաթարք Քերսոն Խրիմայ և Սեաւ ծովու հիւսիսակողմը. այս ծովակին մէջ է Ռուսիոյ Սեաւ ծովու Նաւատորմիղը։

Ազովու ծովուն մէջ կ'թափի արևելեան կողմէն Ցունաւիս գետն երեք առաջք բաժնուելով։

Խրիմայ արևմտեան հիւսիսայ կողմն են, Սիմֆերոփոլ, Պահճէ սերայ, Ինքիրման, Սեպաստոփոլ, Պալաքլավա, Գոյտար, Նուպլա, Լիվատիա ու Եալթա քաղաքները. իսկ հարաւային արևմտեան կողմն են, Բէֆիթ, Կերչ, Եէնի գալէ, Թէմիրոք ու Թամն գիւղաքաղաքները։

Մոկք, է մի ի 18 աշխարհաց Մեծին Հայոց, Ադձնեաց ու Ցիգրիս գետոյ արևելից կողմէն, և ունի Ցորտաներին ամուրիներն և Թ. գաւառք, այն է Իլայք, Ժիւս Իլայք, Իլոց գաւառ, Առուեանից ձոր, Միջաց, Առանձնական, Մոկս, Արքայկ գաւառ, Աղբատոպիա, Ջերմաձոր և Ակիլ քաղաքը, և շատ ուրիշ քաղաքներ։ Մոկաց աշխարհն է հնումն էր Հայոց մեծ նախարարութիւն։

Ցոնիա, կ'ըսուի Նաև Ցոյնք, է երկու գաւառաց անուն, մին Եելլադա կամ Յեպլրան՝ Ցունաց աշխարհին մէջ, որ կանուանի այժմ Ցանեայ։ իսկ միւսն է առանձնակի Ասիոյ մէջ Կարիա ըսուած երկիրը, որ է Այտոն և Լիւգիա կ'ըսուի Ցունիա կամ Ցոյնք, զի նորա բնակիչք յոյներէն եկած էին այն տեղ, որոյ ծովեզերեայ մայ-

քաղաքաքն է Եփեսոս, ուր գումարեցաւ երրորդ տիեզերական ժողովն ընդդէմ Նեստորի։

Նպաստ կ'ըսուի և Նպաստական լեռան, Մեծ Հայոց լեռ մի է՝ Զիրաւ գաւառին վրայ, որ կը կոչուի ևս Ապագի դաշտ ընդդէմ Սաւկաւէտ լերին՝ Եփրատայ ափանց մօտ Նպաստ, կողմանաց լեռներէն մին է և Ջարնոյ հիւսիսակողմէն Տօրոս լերան մասը։ Սուրբն Ղեւոնդ, Նպաստայ գլուխն ելնելով, սկսաւ աղօթել, մինչեւ որ հայոց զօրքն յաղթեցին Պարսից։

Ուտի, է մի ի 15 աշխարհաց Մեծին հայոց, Արձախայ և կուր գետոյ մէջ տեղը, և ունի սահմանակից արեւելքէն Փայտակարան աշխարհն ու արեւմուտքէն Գուգարաց, որոյ մէջ կ'գտնուին ութն գաւառք. Արամուտ, Տոի, Տոպալեան, Ազուէ, Տուչքատակ, Գարգաման, Շիկաչէն և Ուտի ուտանձնական, ուր է Պարտաւ քաղաքը։

Չորրորդ հայք, է մի ի 15 աշխարհաց Մեծին հայոց և ունի իւր մօտն արեւելից կողմէն Յուրուբերան աշխարհը, հիւսիսէն բարձր հայք, արեւմուտքէն Եփրատ գետը, իսկ հարաւէն Աղձնեաց երկիրը։ Ունի 9 գաւառ, այն է Թորձեան, Հաշտեանք, Բաղնատուն, Բաբահովիտք, Մոկք Շաղախ, Հանձիտ, Դարէք և Դեղիկ։ Չորրորդ հայք ունի եւս բերդեր, գեաւեր, լերինք եւ բիւրեղք, բազում երէհաւք եւ ձկունք ու դաղանեաւք սահիւ։ Մայրաքաղաքն է Բալու, Հանձեթի, Նիբիկերտ եւ այլ քաղաքք։ Այս երկիրն անուանեց մեծն Պատմ, Չորրորդ Հայք, քանզի Եփրատայ արեւելից կողմէն Երրորդ Հայոց մօտն է։

Պահլ կամ Պալ կըսուի նաեւ Բահլ, է արքայանիստ քաղաք Թուշանայ, որ կ'անուանի եւս Պարթեւայ քաղաք, զի այս գաւառն ըստ մասին Թուշանայ մէջ է և ըստ մասին Խորասանայ երկիրը Պարթեւայ մէջ։ Սա կ'անուանի եւս Բահլ շահաստան, նաեւ Դարբիժ քաղաքը կը կոչուի տեղ տեղ Բահլ շահաստան։

Պամփիլիա, է ըստ յունական և է Փոքր Ասիոյ մէջ ծովեզերեայ մի գաւառի անուն. սա հիւսիսի կողմէն Պամփիլիական ծովուն եզերքը լինելով, ունի սահմանակից արեւմտից կողմանէ Ղիւկիա, արեւելքէն Զիլիկիա, իսկ հիւսիսէն զանձն Փռիւգիա. յորմէ կրաժանի Տօրոս լերամբ. և այժմ կհամարուի Կիլիկիոյ արեւմտեան մասը, որ է Թարամանիա։

Պարսկահայք, է մի ի ԺԵ աշխարհաց Մեծին Հայոց, և ունի իւր մօտն արեւելքէն Կորճէից ու Վասպուրական աշխարհներն՝ Ատրպատականի սահմանը՝ հիւսիսէն Փայտակարան աշխարհը, իսկ արեւելքէն ու հարաւէն Մարաց երկիրը։ Ունի Թ. գաւառք, այն է Այշի որ է Կորիհան, Մարի, Թրաբի, Աղցաերս, Բռնա, Տանբերս, Զարեհաւան, Զարեւանդ և Հէր։ Երեւելի քաղաքներն են, Մարագա, Թաղեսա, Սուլդանիա են ու Գոզան գետը։

Պարսիկք կամ Պարսք կամ Փարս մեծ Ասիոյ ընդարձակագոյն մի երկրի մէջ, ազգի ու բնակչաց անուն է, որ և ըստ անուան բնակչին կ'անուանի Պարսք աշխարհ կամ Պարսկաստան։ Այս երկիրն ունի սահմանակից արեւմուտքէն Եղամայ գաւառը, որ է Շուշանստան կամ Խուժստան, հիւսիսէն Մարք և Պարթեւք, արեւելքէն Քերման, և հարաւէն Պարսկայնի ծոցը, և յատկապէս այս երկիրն հարաւային մասը կկոչուի Պարսկաստան և այլազգօրէն Ֆարսիստան, զսան որպ Պարսկայ լեզուին ևս կըսուի Ֆարսի, եւ արքայանիստ մայրաքաղաքն էր ի Հնումն Եղիմիա, յորմէ Պարսիկք կոչուեցան նախ Եղիմայիք՝ Սեմայ առաջին որդի Եղամայ անուամբ. իսկ սորա հիւսիսային մասը կոչուանէր այժմ Արան, կամ Իրաք ազէմ, որոյ Թագաւորանիստ մայրաքաղաքն էր յատաջնումն Ըսպահան և այժմ Դէհրան։

Սեան, է մի անուանի դղզի Մեծ Հայոց ի Սիւնեաց աշխարհ Գեղամայ ծովուն մէջ, ուր կար ի հնումն ամուրամրոց, զոր յետ երկամեայ պաշարման, առաւ Խոմայեւլայի Մրուան անուն ոստիկանը, որ սպառնալուս քանդելով աւերեց զայն։ Այն տեղ կայ մինչև ցայժմ Հայոց ճգնաւորաց վանք ու անապատ,

Գարձեալ, Սեան էր քաղաք Մեծ Հայոց Վասպուրական աշխարհը, զոր Սենեքերիմ Հայոց արքայն, ուրիշ քաղաքաց հետ տուաւ Վասպի Ցունաց արքային։

Այժ լեռան, Սեմայ անուամբ կ'անուանի այսպէս, որ է Հայաստանեաց Տօրոսի լերան մի մասը։ Այս լեռը Մոկաց աշխարհի սահմաններէն սկսեալ, կ'տարածի դէպ ի հիւսիս, մինչև Տարոնայ (Մուշ լեռները) Սա կ'կոչուի եւս Ջլուան։

Սիւնիք, է մի ի 15 աշխարհաց Մեծին Հայոց, այս անունը տրուած է Գեղամայ ովկայոյ անուամբ, ուր ժառանգելով այս աշխարհը, զարգարեց չինութեամբ և լցոյց իւր սերնդեամբ։ Սիւնիք, Արարատայ արևելից կողմն է, և ունի հարաւային կողմէն իւր մօտ Երասխ գետն ու Վասպուրական աշխարհը, իսկ հիւսիսէն Արցախայ երկրին ու Գուգարաց։ Ունի 12 գաւառք, այն է Ջահուկ, Վայոց ձոր, Գեղարքունի, Ոռոց, Աղաչենք, Ծղունք, Հաբանդ, Քաղնոյք, Արևիք, Կուսական կամ Սիսական, և Ջաւնդուր։ Ունի նաև Սիւնիք ամուր տեղեր, ու գիւղեր շատ գիւղաքաղաքներ, բազում լեռներ և գետք և գծուոնք Գեղամայ։

Սիւնիք մեծ նախարարութիւն էր Արշակ Թագաւորի և մեծ Ներսէսի ժամանակները։

Սկիւթացի, (Թաթար կամ Մուղալ և կամ Թուրք կամ Մողոլ) Սկիւթացւոց ազգէն ու երկրէն եղող ժողովրդոց անունն է, որ է Սկիւթիա, այն է Թաթարաց երկիր կամ Թաթարստան, տաճկերէն Թեթարց Ալքեթեան

Սարմատիա, կրսուի և Սարմատացւոց աշխարհ, է երկիր հիւսիսային և կրաժանի երկու, զոր Տանաիս գետը կրաժանէ։ Յայնկոյս Տանաիս գետոյ արևելեան մասը կկոչուի Սարմատիա Ասիոյ։ Վրաց և Աղանաց աշխարհներէն սկսեալ մինչև ի Սիպիրիա իսկ այն մասը, որ յայսոկոյս արևմտեան կողմն է, կանուանի Սարմատիա Եւրոպիոյ, և սա կպարուակէ զՊանոնիա (Մանառստան), զՊոդոնիա (Լեհաստան), զՂիւանիա՝ Ռուսաց և Մոսկուայց աշխարհը, զՊրուսիա և զՊալաք։ իսկ Սարմատիա Ասիոյ, է ընդարձակագոյն երկիր, Եւրոպիոյ Սարմատացւոց աշխարհէն բաժանեալ Ուպաս լերամբ, Տանաիս գետովն և Սիբոտ կամ Ազովսա ծովակաւ, և այն տեղէն կը տարածի դէպ ի Կովկասայն լեռները Վրաց և Աղուանից երկիրներով, և կհասնի մինչև ի Կասպիական ծովը։ Ունի լերինք, գաւառք և շատ ազգեր, որ են Թաթարաց զաւեռազան ազգերը։

Սեղիայիք (Սըրպուլեր) որ կրազիանան մէկ ու կէս միլիոն ժողովուրդ է, Սարմատացւոց կամ Սլաւեան ազգէ մի հիւղը կկազմեն։ Սերբիա (Սըրպկամ Սրբի կամ Դրաց վիլայէթի) է մի գաւառ. Եւրոպիոյ Մոռեայաց աշխարհը՝ հարաւակողմէն Դանուբ գետոյ եղերքը Բոսնիայի կամ Պոսնայի եւ Բուլղարայ աշխարհին մէջ. ունի Տարոնոն ամուր քաղաքը, որ է Զելնրան, և է այժմ իշխանական մայրաքաղաք Սերբիական կառավարութեան, որ շնորհուեցաւ Սերբիացւոց Օսմանեան կառավարութեան կողմանէ։

կամ Խաթէն կամ Թաթար մէմէքէքի. է մեծ ու ընդարձակ երկիր հիւսիսայ, որ կ'բաժանի Եւրոպական ու Ասիական Սկիւթիա Եւրոպական Սկիւթիոյ երկիրը կ'երկարի Ծովեանց դեռէն սկսեալ ու կ'շրջապատի Սիւռսու ծովակի եղերքը և Գերման Խրիմայ, որ է Սեաւ ծովուն վրայ որ կ'գայ կ'հասնի մինչև Դանուբայ (Դանայ) գետառաբերանը։ Այս երկրին մէջ կան զանազան Թաթարաց ազգեր, որ կ'անուանին առհասարակ փոքր Թաթար, իսկ Ասիական Սկիւթիա, որ կ'կոչուի Սիպիրաբար, այսինքն Թուրք կ'կերկարի Եթիլ՝ այն է Վոլգայ գետայ արևելից կողմանէ և կ'շրջապատի հիւսիսայ կողմէն Կասպից ծովուն եղերքը, և դէպ ի հիւսիսոյ-Թիւն կ'սարածի մինչև Եմասոն լեռը, և Սարմատացւոց ու Արեաց մէջէն անցնելով կ'հասնի ի Հնդեստան։ Այս ընդարձակ երկրին մէջ կան յոգնաթիւ Խուժադուժ ազգք Թաթարայ, որ կ'կոչուին Սոդիք, Թուխարիք, Հէպիճաղք և այլք, որոց կ'ըսուի կա Նոգայիք Գարա քաղիմաքը և Թալմուզ, այս երկրին մէջ է նաև Գուլտարա, Աբանդրանտ, Գոգան, Խիվա, Ավքան ու Քաշքար։

Մինչին Ասիոյ մինչև այս երկիրներն հասած է այժմ Ռուսիոյ սիրպատուութիւնը, զինուորական զօրութեամբ ու պատերազմաւ։

Սուկաւ կամ Սուկաւէտ լեռան (Բէլօսէ տաղի կամ Ղաշլոյ տաղի, մեծ Հայոց Արարատեան ասխարհն անուանի լեռ մի է Վաղարշակերտի գաւառին մէջ, որ է Արաշէկերտ՝ յանդիման Բագրեւանդայ և Նպատ լերին։ Այս լեռն յառաջագոյն կ'կոչուեր, Զրաբաշխ կամ Զրաբաշխ լեռան, այլ յետոյ անուանեցաւ Սուկաւ կամ Սուկաւէտ, յանուն սրբոյն Սուքիասայ՝ Սուքիասանց ԳԼԽ-խաւորին, որք կ'ծդնեին այն տեղ խոստանարակ մնելով վասրի քաջերու։ Նման 44 տարի, ուր և իսկ Հաստատուեցան։

Վասպուրական, է մի ի 15 ասխարհաց Մեծին Հայոց, որ է ընդարձակ երկիր և երկրորդական գահ Հայոց Թագաւորութեան, որ եւ կ'սահմանակից է Պարսկահայոց երկիրը, հարաւէն Կորձէից ասխարհը, արևմուտքէն Տուրուբերան, իսկ հիւսիսէն Արարատեան Նահանգը։ ունի 57 գաւառք այն է Արտանիք, Ծոտ, Բասունիք, Արճէշնահովտ, Ազովիտ, Բարիգավիտ, Կուղանովիտ, Դաւռնի, Բալախովիտ, Անբերանի, Բուժունիք, Անռոյոտ, Անձեւաձիք, Ասորպատունիք, Երուան գունիք, Մարդասատ, Արտազսիկ, Աղբակ մեծ, Անձաքատոր, Թուռնաւան, Հուտաղոտ, Արճունիք, մեծ Նուռնիք, Պալունիք, Գուկան, Աղուանգոտ, Պարսպարունիք, Արտաշատ, Արտաւանեան, Բազան, Գաբելեթեան, Գաղբիկեան, Տանկրեայն, Վարաժնունիք, Գողթն գինեւեայ, Նախջուան, ուր է նաև իւր համանուն քաղաքը, և Մարանդ։ Վասպուրական ասխարհն ունի արքայանիստ մայրաքաղաք Վան և այլ անուանի քաղաքներ, որ են, Սամսատ, Մարանդ, Կեանց, Մանակերտ, Նոսան, և այլ քաղաքներ, գիւղեր և բազում բերդեր։

Վիրք կ'ըսուի նաև Վեսիա, որ է Վրաստան կամ Վրաց տուն Կիւրջի կամ Կիւրճիստան), արևելեան կողմն մի ազգի և գաւառի անունն է, հիւսիսային կողմէն Մեծ Հայոց սահմանակից, և ունի իւր մասն արևմուտքէն գԿաղքիսէ, որ է Եգեր, այն է Զէրքէզստան, հիւսիսէն գՍարմատիա, յորմէ և կ'բաժանի Կաւկասու լերամբ, իսկ արևելքէն Աղուանները Կուր գետոյ եղերքը, ունի Վիրք բազում գաւառներ ու ամուր քաղաքներ, այն է Տփխիս, որ է Թիֆլիս, Մծխիթայ, որ է Մցխիթայ, ուր էր սուրբ Խաչն և պատրիարքարան Վրաց։ Այս երկիրն ունի նաև շատ բերդեր։ գեղեր ու անուաներ։ իսկ Վրաց ազգն ու բնակիչք կ'կոչուին Խվերեաչիք կամ Վերեաչիք։

Վրկան, այժմ կ'կոչուի Եսթէրաբատ կամ Թասվերըստան, որ է Արեւոց երկրին մէջ մի նահանգ։ Կասպիական ծովուն հարաւային արեւելեան կողմը, ուստի Կասպից ծովը կ'անուանի ծով Վրկանի։ Այս երկիրը կային Հայոց բազում ժողովուրդք պարսիկներէն գերեալ և Թուրքաստանի կողմը Սագստան կոչուած մեծ անապատը բնակեցուցեալ՝ Մխաստոյ Բագրատունւոց մեծ իշխանի օրերը, զոր Պարսից Խոսրով արքայն մարզպան կարգեց Վրկանացոց, որ ինքն այն տեղ հասնելէն յետոյ հրամայեց Նոցա անդրէն նորոգել հայ լեզուն, զոր մոռացած էին և Եպիսկոպոս դրաւ Արէլ անուն Երէցը, Հայոց Մովսէս կաթուղիկոսի ձեռնադրութեամբ։

Տաճկաստան աշխարհ, այս անունը հայ զրոց մէջ կ'անուանի Փիւնիկեցւոց երկրին տեղը, և մանաւանդ Ասորոց երկրին. երբեմն ընդհանուր Ասորեստանի և երբեմն Անասուրոյ. իսկ երբեմն Պարսկաստանի մի մասին, և ուրիշ գրոց մէջ Արարիոյ երկրին տեղը. վասնորոյ բուն Տաճիկ անունը Արաբացւոց կ'տրուի, և այժմ Օսմանեանց ևս կ'ըսուի Տաճիկք։ Արարիա բնակեալ խուժադուժ ազգաց Տաճիկք կ'ըսուէր, զոր Երրայեցիք կ'անուանէին Արաբիմ, որ կ'նշանակէ արեւմտեայք, որովհետև Արարիա կիսնոյ Եփրատայ արեւմտեան կողմը. ապա երբեմն կ'կոչուէին Արաբացիք և երբեմն Սարակինք, զի խաշնարածք էին և վրանարնակք։

Տայք, որ կ'անուանի ևս Աղասֆեանի երկիր, է մի ի 18 աշխարհաց Հայոց. ունի իւր մօտն արեւելքէն Գուգարաց երկիրը, արեւմուտքէն Եղերոյ աշխարհը, հիւսիսէն ԶՎիրը. իսկ հարաւէն Արարատայ նահանգը։ Այս երկրին մէջ կայ 9 գաւառք, այն է Կողբ, Բերդաց փոր, Պարտիզաց փոր, Ճակատք, Բուխայ, Ասիաց փոր, Աքաղէ Աղորդ և Կափոր։ Ունի Տայք Ամրաւան, ու Տարաւերք, զաղբերն ու Լչրանի ամուր բերդը և ուրիշ բազում ամրոցներ ու բերդեր։

Տայիր որ կ'ըսուի ևս Բամբակաձոր, Մեծ Հայոց Գուգարաց աշխարհի մի գաւառ է, զոր յետոյ Վրաց ձեռքն անցաւ, ունի Լօռի և ուրիշ քաղաքներ։ Սուրբն Մեսրոպը վարդապետ Լօռի քաղաքն երթալով, աշակերտեց բազում անձինք ուղիղ հաւատոյ դաւանելով զիրենք՝ Գուգարացւոց Աշուշայ Բդեշխի խնդրանքը։ Գուգարաց մէջ է նաև Տայրաց գաւառն կամ Տայրունեաց երկիրը։

Տարսոն կամ Տարսիաս (Թէրսիս), է Կիլիկիա Հայոց անուանի քաղաք էր՝ Կիսոնս գետոյ եզերքը Կիլիկեցւոց ծովեզերին մօտ, որոյ Աբգեպսկոպոսն էր Ներսէս Լամբրոնացի։ Այս տեղ ամենաբնակ էր Հայոց, ժողովուրդն ի միասին գումարել կաթուղիկոսաւ հանդերձ և օծել զԹագաւոր Հայոց։ Տարսոնի մէջ եղաւ Հայոց առաջին ընդհանրական ժողովն, Յունաց եկեղեցւոյ հետ միաբանութիւն հաստատելու համար. ուստի և կ'անուանի ժողով Տարսոնի։

Տիգրիս, կ'ըսուի նաև Դղկաթ, Հայաստանի չորս գլխաւոր գետերէն մին է, որ իւր սառուցեալ ստակ կոչուեցաւ Տիգրիս, որ կ'նշանակէ Մարաց լեզուաւ նետ և հայերէն ալ, և վասնզորիկ Երրայեցիքէն կ'ըսուի Խեակել, որ Թարգմանի արագնթաց կամ արագաց։ Այս գետը Հայաստանի մէջ Կարգաւոյ լեռներէն կ'ելնէ ու Տօրոսի լերան պատահելով յերկիր կ'նկղմի և յետոյ լերան այն կողմէն դարձ կ'ելնէ, որ կ'ելթանայ հիւսիսէն դէպ ի հարաւ՝ Ասորեստանի դէմ, զոր Միջագետք բաժանելով, կ'մտնէ Բաբելացւոց երկիրը, և այն տեղ իւր մէջն առնելով Եփրատէս գետն արեւելքէն, կ'երթայ կ'հասի Պարսկային ծովը։

Տարսոս կամ Տաւրոս կ'ըսուի նաև լերինք Տօրոսի Ասիոյ մէջ յոյժ երկայնաձիգ ու մեծամեծ լերինք են, որ

Պամֆիլիոյ կամ Թարամանիոյ և Կիլիկիոյ սահմաններէն կ'տարածուի արևմուտքէն ուղղակի դէպ ի արևելք անընդհատ լերանց շղթայներն և կ'պատեն զՀայաստան հարաւոյ կողմէն, և այն տեղէն կ'երկարին ու կ'երթան մինչև Հնդկաց սահմանները և գրեթէ բովանդակ Ասիան երկու հատանելով, տեղ տեղ դանդաղ ոգով լեզուաւ կը փոխեն իւրեանց անունը. այսինքն այն մասունք, որ կանցանեն Կիլիկիոյ դէպ ի հիւսիսակողմը, կ'կոչուին Տօրոս Կիլիկիոյ կամ լերինք Տօրոսի, դէպ ի Մէջհագեաց անցնող մասունք, կ'ըսուին Տօրոս լերինք Միջհագեաց և և Մէջի Տօրուք, իսկ որոնք որ կ'պատեն զՀայաստանն հարաւէն, կ'անուանեն Տորոս լերինք Հայաստանի և յստակապէս լերինք Կորդուաց և Սիմ և Ղպատ (Քիւրտիստան տաղաբի), տես և ի բառն Կորդուաց լերինք և Սիմ. և այն մասը որ կ'երկրի փոքր Հայոց կողմերը, կ'ըսուի Անտիտորոս իսկ Հնդկաց սահմաններն հասնող մասը կ'կոչուին Եմաոն։

Տուրբերան, կամ Տարբերունի, է մի ի 15 աշխարհաց Մեծին Հայոց և ունի արևելքէն սահմանակից Վասպուրական աշխարհը, արևմուտքէն Զորրորդ Հայք, հիւսիսէն Բարձր Հայքն ու Արարատեան աշխարհը, իսկ հարաւէն Աղձնեաց ու Մոկաց նահանգները։ Այս երկրին մէջ կան 16 գաւառք, այն է Խոթ, Աստպանունիք, Տարոն (Մուշ), Աշմունիք, Մարդաղի, Դասնաւորք, Տուրաբատարաւի, Դարաւ, Հուրք, Վարժեռունիք, Բզնունիք Արիվարք, Աղիովիտ, Ապահունիք, Ակորի և Խորխորունիք Գլխաւոր քաղաքներն են Բաղէշ, Արծկէ, Խլաթ, Հիզան, Գոլպէս, Մուշ, Վիրապաքաղաք, Օձ քաղաք, Մանծկերտ, և այլ բազում քաղաքներ ու գիւղեր, ունի և Բզնունեաց ծովը, որ է ծովն Վանայ, և Կորդուաց լերինք, որոցմէ կ'բղխին Եփրատայ և Տիգրիսի ակունք։ Սա բարբարոս, խստաբարոյ ու մեղրաբուղխ մի երկիր է,

ունի առողջարար օդեր, և բազում ու քաղցրահամ ջուրեր աղբիւր գազպէ որ է տեսակ մի մանանայ, որ մանանայի պէս կ'ինէ տերևոց, ծառոց և խոտոց վրայ. ունի բազում միրգ, սպիտակ նաւթ, երկաթ, և նմանութիւնք աղբիւր ծաղիկը. վերջապէս կարելի է համարել զայն, երկիր դրախտային լի ամենայն առատութեամբ։

Փայտակարան, է մի ի 15 աշխարհաց Մեծին Հայոց ունի իւր մասն արևմտեան կողմէն Ուռացոց և Արցախայ երկիրները, հարաւէն Ատրպատական նահանգը, և արևելքէն Կասպիական ծովը։ Ունի սա 15 գաւառք, այն է Հրաքոտ, Պերոժ, Վարդանակերտ, Եօթնփարակեան բարգիրք, Ոստիքաղաղ, Բաղահուռտ, Առոտպիժան, Հանի, Աթլի, Բաղուուն, Սպանդարան պերոժ, Որմդ պերոժ և Ալևան։ Այս երկրին մէջ կայ անքաւ բամպակ ու գարի ինքնարոյս։ Ունի հմանուն իւր մայրաքաղաքն Վարդանակերտ գաւառի մէջ Փայտակարան, զոր կանուանեն ոմանք Տիխիս։ Այն տեղ Սանատրուկ Հայոց մեծ նախարարը յետ Տրդատայ մահուան, թագադրութեամբ թագաւորեց։ Փայտակարան աշխարհն ունի Գաղու կամ Փաղու քաղաքը Բաղուան գաւառի մէջ, և շատ ուրիշ քաղաքք և գիւղօրէք ու Երասխ գետը որոյ հետ կիսատնուի Կուր գետը։

Փերեզացիք, Քանանացւոց առաջին ազգերէն միոյն անունն է, զոր Աստուած խոստացաւ Իսրայելի որդւոց երեսէն սպաննել։ Այս ժողովուրդը չունէր հաստատուն բնակութեան մի տեղի, այլ կրնակէին թափառական արձակ քաղաքաց, անպարիսպ տեղերու, գիւղերու և ագարակներու մէջ։

Փղշտացիք, կամ Փիլիստիիմ, է անուն ազգի և ժողովրդոյ, օրք եկան ըստ հաւանական կարծեաց Կրետէ կղզիէն ու եկան բնակիցան Քանանացւոց երկիրը, վասնորոյ սոքա երբեմն կ'կոչուին կրետացիք։

Այս ազգը ոչ թէ Քամայ երկրորդ որդի Մեսոբոտամայ որդւոյնմէ յառաջ եկան, այլ թէ եկան ու բնակեցան նոցա երկիրը, և որովհետեւ ասոնցմէ ոմանք փոքր Ասիոյ մէջ Դամրաց այն է Կապադովկիոյ գաւառէն էին, այն պատճառաւ երբեմն կ'անուանին Դամիրք, իսկ յետ անդամ կ'ըսուին աւ հասարակ Այրազդիք, ուստի և նոցա բնակութեան գաւառը կ'կոչուի երկիր Փղշտացւոց և երկիր Այրազդեաց, և այս երկիրը Պաղեստինի մէջ չինուելուն համար, Պաղեստինացիք եւ կանուանեն երբեմն Փղշտացիք։

Արդ Փղշտացւոց կամ Այրազդեաց երկիրը. Աւետեաց երկրին մէջ է, արեւմտաքէն իւր մօտն ունենալով զմեծ ծովն, ու հարաւէն իր երկայնութեամբ կ'տարածի դէպ ի հիւսիս Եգիպտացւոց Նեղոս գետէն, այն է Բասրայ հեղհեղատէն մինչեւ Ամիթիա, արեւելքէն սահմանակից է Շամաւոնի և Դանայ տեղերը և կ'բաժանէր հինգ Թագաւորութիւնք կամ Նախարարութիւնք, որոց քաղաքներն էին, Գազա ի հարաւակողմն, յետոյ Ասկաղոն՝ Ազոտոս, Ակկարոն և յուսկ յետոյ Գէթ ի հիւսակողմն։

Գէթ կամ Գատ, կ'հնչանակէ հարաւ կամ Ափրիկէ, Քամայ որդւոյն անունն է, որոյ անուամբ ամբողջ նահանգքն, ուր բնակեցան նորա ազգն ու ժողովուրդ, կոչուեցաւ Գէթ որով նախ կիմացուի ընդհանրապէս բովանդակ հարաւային ափարէն, որ է մին ափարէն հինգ մասանց և կ'անուանի Ափրիկէ։ երկրորդ կիմացուի այն երկիրներու մի մասն որ կըսուի Ափրիկէ յատկապէս, որ է ի մէջ Մաւրիտանիոյ արեւմտից կողմանէ իւր մօտն ունեցողացն, և ի Միւրենայանէն, ունենալով զայն յարեւելից կուսէ սահմանակից, իսկ [illegible]աբէն Միրիկաբ Միրիէրկական ծովու եղերքէն ու կըսուի Զեւգեւանայ։ և երրորդ կիմացուի այն երկրի գաւառաց մին, որ կ'կոչուի Ափրիկէ

առանձնակի, նաև Ցրտոյցիս. և սա ի մէջ Նումիդիայ, ունենալով զայն յարեւելից կուսէ սահմանակից, Թունիզայ Թագաւորութիւնը և ունի մայրաքաղաք զԿարթագինէ։

Բաղդէացիք, է անուն ազգին և ժողովրդեան, որոյ բնակութեան գաւառը կ'կոչուի երկիր կամ աշխարհ Բաղդէացւոց։ մեծ Ասիոյ մէջ է հռչակաւոր նահանգ և մասն Բաբելոնի հարաւոյ կողմանէ, որոյ Թագաւորանիստ մայրաքաղաքն էր Բաբելոն. ունի իւր մօտն յարեւելից կուսէ Սրարիոյ անապատը, իսկ արեւելքէն. Տիգրիս գետը, և այժմիկ ըսուի Իրաք Արաբ։ Որովհետեւ այս երկիրն էր երբեմն ընդ իշխանութեամբ Ասորեստանեայց Թագաւորաց։ Վասնորոյ նոքա բազում անդամ կոչուեցան Թագաւորք Բաղդէացւոց ու Թագաւորքը Բաբելացւոց։

Բանան, Քամայ առաջին որդւոյ անունն է զոր անիծեց Նոյ Նահապետ, որոյ ազգն ու բնակութեան գաւառը կ'կոչուի Բանան, կ'ըսուի և որդիք Բանանու և Բանանացիք, ոչա բնակութիւնն էր Աւետեաց երկիրը։ Բայց Բանանու անորդեկի որդւոյ Սիդոնի որդիք, կանուանեն Փիւնիկեցիք։ իսկ այլք կոչուին աւ հասարակ Բանանացիք, Յեբուսացիք, Խեւացիք, Ադուսացիք, Ամէնացիք, Արատիացիք, Սամարացիք և Ամոթացիք։

Բուշանք և Բուշանայ երկիր, որ նաև կ'ըսուի Աբեւայ աշխարհ այն է Բուսի Խորասան, կանուանի եւ աշխարհ Խորամիզդ, որ է Թուրքաստանի և Խորասանայ մէջ տեղը, Բուշանք Հեպիթաղայ, կամ հիւսիսայ, կամ Բուշանք վերին, այսինքն՝ են Հոնք, որ են փոքր Թաթարք և այլ շրջակայ ազգերը։

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԻՈՅ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ, ՊԱՏՄԱԳԱՆ
ԵՒ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ
ԿՈՎԿԱՍՈՒ ՀԱՆԴԵՐՔ ՏԱՐԵԳՐՈՒԹԵԱՄԲ

Նահանգ Տփխիսի՝ բնակչաց թիւն է 592901։ Կովկասեան երկիրներու փոխարքայութիւնը կ'բաժանի վեց նահանգ կամ կուսակալութիւն, որոց կ'ըսուի նահանգական (*) քաղաք։

Ա. Տփխիս կամ Թիֆլիս
Բ. Քութայիս
Գ. Երևան
Դ. Պագու
Ե. Դարբանդ կամ Տէրպէնտ։

Տփխիս կամ Թիֆլիս, որ էր մայրաքաղաք վրաց թագաւորութեան, ուր այժմ կ'նստի Միքայէլ մեծ Դուքս՝ Աղեքսանդր Բրդ. Ռուսաց Կայսեր եղբայրը, և այժմ է ընդ իշխանութեամբ Ռուսիոյ։ է նահանգական քաղաք և մայրաքաղաք Կովկասեան գաւառաց և է տեղի

(*) Նահանգական քաղաք կ'ըսուի ընդհանրապէս այն, որոյ վարչութեան ներքև կրսվանդակին գաւառական քաղաքներ (գաղա) և Փոխարքայն կամ Կուսակալը կնստի նահանգական քաղաքի (Վիլայէթ) մէջ։ առհասարակ գաւառական քաղաքներն ևս, ունին բազում գիւղաքաղաք (գասաբա) և գիւղք։

բնակութեան փոխանորդին կայսեր Ռուսաց, որ կ'կառավարէ սրբոյր Կովկաս աշխարհը, Ցօն գետոյ, Դաղստա զօրայ երկրէն ու Աժտարխան նահանգէն սկսեալ, մինչև Պարսկաստանի ու Ցաճկաստանի սահմանները և Սեւ Ծովու եզերքէն մինչև կասպից ծովը։ Ըստ աշխարհագրական գրութեան, հիւսիսային լայնութեան 41° 30′ ի ներքև կ'ելնայ, և ի ներքոյ 62° 30′ արևելեան երկայնութեան. Ծովու մակերևոյթէն կ'բարձրանայ 1207 ոտնաչափ, որ կ'ըսուի Ռուսերէն ֆուտի (1)։

Թիֆլիս քաղաքը չինեալ է կուր գետոյ երկու եզերաց վրայ. գետոյն (2) ձախ կողմը քաղաքը շրջապատեալ է բլրոյ վրայ և մէկը միւսին եռաւէն կ'տարածին քաղաքին արուարձանները և գերմանացի դաղթականաց հին և նոր թաղերը որ կ'ըսուի Նէմէնձկի կալօն, նաև Պէսքի, Զուլարէթի, Հալուադարայ, Շանթադի կամ Միրզոյապատայ և Նալթլուխի թաղերը։ Տփխիսի հանդէպին աղբերքը կ'ելնին Անչիսայի լերանց

(1) Եօթը ֆուտը է սաժէն է, որ է 3 կանգուն. 500 սաժէնն է 1 վերստ, որ է 1500 կանգուն 104 1/2 վերստն է 1 մղոն աշխարհագրական Ռուսաց։ ի Ռուսաստան ցամաքային ճանապարհորդութեանց մէջ միշտ վերստ կհամարուի և իրաքանչիւր վերստի վրայ մէկ քարէ սիւնակ դրուած է։

(2) Երբ երեսնիս ուղղակի մի գետոյ դէմ է վար իւր հոսանքը դարձուելնէ, ձախ կողմերնիս գետոյն ձախ եզերքն է ու աջ կողմերնիս աջ եզերքը։

գո

Թիֆլիսի հին մասն անկէ յառաջ անունն գիւղ մի էր, փոքր ինչ ժամանակէն խաղրաց յարձակմունքովն եղաւ աւերակ, սակայն Մծխեթայի աւերմանէն զինի, նորէն շինուեցաւ ու եղաւ մայրաքաղաք Վրաստանի։

Այն ժամանակը քաղաքն երեք թաղ բաժնուած էր, որ է Բոլիսի, (այժմեան հին քաղաքը) Ցպկիսի, (ուր այժմ հանդային ջերմուկներն են) և Նիստանի, որ է, (այժմեան Հալվապարը)։

Թիֆլիսի հիմնադիր Վախթանգ Կորկ-ասլան Վրաց արքայն՝ կառոյց է տաճար, որ կեցած են մինչև յ՝այժմ. Ա. յանուն Վերափոխման Աստուածածնի, որ կոչի Սիոն. Բ. Մէջէխայ եկեղեցի, ըստ նմանութեան Գեթսեմանի տաճարին յիրուսաղէմ, ուր ամփոփուած է մեծին Վարդանայ Մամիկոնէի դստեր Շուշանայ մարմինը, որ էր թագուհի Վրաց։ այս եկեղեցին այժմ ուխտատեղի է Քրիստոնէից։ Գ. Սուրբ Խաչ եկեղեցի՝ որ ճանաչի այժմ Դաղդոմայ անուամբ Դ. Բեթղէհէմ։

Տփխիս մայրաքաղաք եղաւ Վրաստանի թագաւորութեան Վախթանգ Կորկ-ասլան արքայի Տպչա անուն թագաժառանգին օրովը, որ 499 թուականն մեր փոխադրեց իւր աթոռը Մծխեթայէն։

Թիֆլիսի պատմութիւնը մինչև 18րդ. դարու վերջը տխուր է, զի կ՝ներկայացրնէ ոչ այլ ինչ, այլ միայն աւերակաց, կրծանմանց և ահեղ արկածից պատկեր մի։ հազիւ կ՝գտնուին քաղաքներ, որ կարողանան յետ այսքան անգադարձ

թշուառութեանց և տարաբախտ դիպուածոց վերակենդանանալ ու ծաղկել։ Թիֆլիս, իւր հարիւրամեայ հիմնարկութեան տարեդարձը դեռ չկատարած, արդէն 570 թուականին Պակուր Բ. Վրաց թագաւորի ժամանակ Պարսիկք նուաճեցին այս քաղաքը և թագաւորութիւնն անցաւ Պարսկաց ձեռքը։ ու Թիֆլիս եղաւ տեղի բնակութեան պարսիկ Մարզպանաց։ յայնժամ Վրաց թագաւորին հարկ եղաւ խոյս տալ ի կողքիս։ Այսպէս քաղաքն անկաւ ի ներքոյ իշխանութեան Սասանեանց Պարսից, մինչև 580 թիւը։ այն ժամանակն էր որ Քրիստոնէութիւնը պարսկաստանէն սատարկ կ՝հալածուէր Մոխրապաշտութիւն տարածուելով։ Դեռ մինչև յ՝այժմ կ՝սեմեմք Պէհպութեանց փոզոցէն վեր։ սարի սարոռն Հայոց (*) Բեթղեհեմ եկեղեցւոյն մօտ ասուշանաց (կրակարան) մէկուն աւերակները կառուցեալ այն ժամանակի պարսիկ կռապաշտներէն։

Յունաց Հերակլ կայսրը, 626 թուին հալածելով զՊարսից խսրով արքայն, գրաւեց Թիֆլիս և հաստատեց իւր արքայական ամուռն ի Վրաստան յ՝Ատարքս։

Դարձեալ աւերակաց ներքև մնաց Թիֆլիս 731 ին Օմարայ, Մաուն Ապուալ-Փեռազիմի ձեռաք, որ կ՝ցանկար տարածել Մահմեդի վարդապետութիւնն Իվրաստան։

Վերստին տանուկցաւ Թիֆլիս, Արաբացի մահմետականաց կողմանէ 760 ին և սպանուե-

(*) Այս ուրիշ Բեթղեհեմ եկեղեցի է։

ցաւ Աշէլ Բ. Թագաւորն Վրաց։ Յորս ատենջանօք մահը պատճառ եղաւ մարտիրոսաց կարգը դասել զնոսա. վերջապէս յամի 828 Խաղարք հինն ի վեր տապալեցին զՏփխիս, որք անցան Կովկասու մէջ Տարեալայ լեռնամէջին, որ է ըստ Քսորտիսնի, Փոռդա քաղքսնիքա։ (Պալը-այան կամ Տար-ալլան), այսինքն՝ Դուռն Աղանաց ըստ արևելեան վիպագրաց, (Տար-եօլի) որ է նեղուց ըստ Թաթարաց և (Խէվիս-կարի), որ է դուռն ձորի ըստ Վրաց։

Ի՛կարծեմ թէ Տփխիս կ՚պարտի իւր ազատութեամբ Պարսից զօրավար Էմիրին, որ յուզարկուած էր իւր թագաւորէն կառավարիչ Վրաստանի, Էմիր թօթափեց իւր լուծը և զինքն անկախ հրատարակեց։ ի վերջոյ Վրաց դահին վրայ երկրորդ անգամ եղաւ տունն Բագրատունեանց։ և սա ևս կախեալ էր Արաբաց խալիֆէներէն։ բայց Տփխիս ոչ ընդ երկար զուարճացաւ իւր հանդատութեամբ։ Աշոտ թագաւորը՝ Վրաց դահը բարձրանալով՝ միմնորդութեամբ որդւոյ Զէտի-խալիբայ, սպարապետ հռչակաւոր Խալիֆայի Հարունայ Ալ-Ռաշիտ, ստացաւ ի յուռնայ կոստանդին կայսերէ նիւթապատաս պատուանունը, որով կարեր Խալեց Խալիֆէին սիրոյ՝ Խալիֆ յուզարկուեցաւ պատժել զԱշոտ։ յայնժամ Տփխիս դարձեալ անկաւ ի ներքոյ աւերակաց և եղաւ տեղի բնակութեան ոստիկանացն Խալիֆէից։

Թագաւորն Վրաց Բագրատ Ա. յամի 842,

թէ և ձեռք ձգեց իւր մայրաքաղաքը՝ բայց ոչ ընդ երկար, քանզի 851 թուոյն՝ Պուղա զօրավարն Սարակինոսաց (Արաբացւոց) քանդեց ու կործանեց զՏփխիս՝ և դերի վարեց բնակչաց մեծագոյն մասը։ Վրաց թագաւորը թէպէտ դարձեալ եղան իշխան իրենց արքայանիստ քաղաքին, բայց չ՚կարողացան շարունակ նորա մէջ հանդըստութիւն գտնել, վասն զի Պարսիկք կարատքսէն զթագաւորք, և Տփխիս փոխանակի կ՚տեսնէր մերթ իւր վրայ տիրող հայրենի իշխանք, իսկ երբեմն Պարսիկ մարդպաններ։

Այսպէս յամի 1064, Արփ-Արսլան քանդեց զՏփխիս և թագաւորն Բագրատ։ Վրաստանի անկախութիւնը ձեռք բերելու համար, տուաւ նորա յ՚ամենութիւն իւր եղբօր դուստրը։

Յամի 1078, Տաճիկք Սելճուկեանք (Օսմանցիք) տիրեցին Տփխիս քաղաքին, և թագաւորը, իւր անձը փրկելու համար խոյս տուաւ յ՚Ավխազ քանզի Տաճիկք աւերակ դարձուցին կախեթիարթելը և Ախալձիխէ։ Բայց Դաւիթ Դրդ. թագաւորն Վրաց որդի Գեորգայ 1089 թուականէն սկսեալ, պաշարեց զՏփխիս, առաւ զայն և վերանորոգեց յամի 1126, այս պատճառաւ Նա վերանորոգող կոչուեցաւ։

Սկսեալ 1472 թուականէն, թագաւորից Տիմիթրի Ա. որդեկիր Դաւիթի և զարդարեց իւր մայրաքաղաքը։ Սակայն դարձեալ Տփխիս անկաւ աւերակաց ներքև պարսից Արղուն շահի ձեռքէն յորմէ հետէ ի պատիւ այն թագաւորին Հայոցդի

Զաքարեա Սպասալարի նախնիք սկսան կոչել իրենց ազգանունը Արղութեանք, վերջապէս խղճային Երկինք այս անբախտ քաղաքին վրայ, Թագաւորեց Վրաստանի 1184 թուին ամենագեղ և քաջ արքայուհին Թամար, ամուսին իշխանին Ռուսաց կէորկիա Գեորգիապոկիս, յաղթեց սա Պարսից և Օսմանեանց, և տեսաւ Ցիխիս իւր որմոց մէջ զանազան շքեղ հանդէսներ իւր մեծ ու հանճարեղ թագուհւոյն յաղթութեանց պատճառաւ, քաղաքին ուրախութեան մէջ, ընկերցեաւ զուարճացաւ խաղաղութեամբ և սկսաւ զարգարուիլ։ Այս շրջանն արդարև Վրաստանի ոսկեդարն էր, բայց վերնանամ Ցեսչութիւնը յուզուկեց նորա համար նորանոր փորձութիւնք։ Այն ինչ հայոց Եղուանք և Զաքարիա քաջ սպասալարք կ'սասանեցրնէին թշնամիք Վրաստանի, երկիրն ամբողջ բարձր ի գլուխ կ'պարծէր, վայելելով սոյն երկու հարազատ եղբարց չնորհիս ամենայն բարութիւնք, որ էր առաջինը կուսակալ Վրաստանի և երկրորդն Անի մայրաքաղաքին Հայոց։ Իսկ երբ այս երկու անդուգական դիւցազունք, կնքեցին իւրեանց կեանքը։ Թամար հանդերձ Վրաստանով ի խոր սուգ հմանկեցան, այնքան սաստիկ էր Թամարայ սրտին կսկիծը, որոյ մարմինը հանգչեցաւ վաղվաղակի ի գերեզմանն 1212, և վրաստանի համար սկսաւ վիրսին երկաթեայ և արխունային դարը, Ցաճիկ, Գարսիկ և Մաղալ, մեկզմեկէ որով կ'յաչտակեին ամենաբար զվրաստան, և այս երկրին թագաւորք, բաղում անգամ

ուրացութեամբ կ'դնէին Թամարայ դահնոյն իշխանութեան շուքը միայն, և այսպիսի անհիմն ուղղանցուկ իշխանութեան համար ի կորուստ կ'մատնէին զմիմեանս։ Այսպէս յետ տասն ամաց և զկնի մահուան Թամարայ, ձենկիզ խան յաւեր և յապականութիւն դարձուց զթիֆլիս։

Յամի 1228 Սուլթան ձելալէտտին տիրեց Թիֆլիսի և Սիոն եկեղեցւոյ գմբեթին իւր համար բանալու մի տեղ չմնաց։ Բնակիչք հաղանանց ենթակայ եղան, Աստուածածնայ հրաշաւոր պատկերը որ Սիոնի մէջ էր։ (հռչակաւոր է այժմ ի Ռուսաստան Մոսկոսի մէջ։ Վրաց Աստուածածնայ պատկեր անուամբ) դրին զայն արհամարհելու համար ի հրապարակ։ Իսկ վրացիք, որք չէին ուրանար զԳրիստոնէութիւնն ի սէր Աստուածածնայ մարիամական մահուամբ կ'փնտրէին իւրեանց կեանքը, և Սուլթանը կ'զմայլէր վրաց փնտռուն վրայ։

Թիֆլիս աւերակ դարձաւ Լանկ-Թիմուրի ձեռքէն 1388 թուին, որ նաև արշաւեց ի Հայաստան և ի Ռուսաստան։

Յամի 1395։ Լանկ-Թիմուր դարձեալ կործանեց Ցիխիսի բերդը և նորա մէջէն բանալով զԳագրատ Բ. թագաւորը իւր մօրը հետ միասին հանդերձ բոլոր գերդաստանով գերի վարեց։ բայց անկէ վերջը Ազգքսանդր թագաւոր։ կոչեցեալ Բ. վերանորոգող, նորանոր չինուածներ կառոյց քաղաքին մէջ և նորոգեց բէրդին պատերը և քաղաքն աւերակաց մէջէն դուրս ելնելով, հասաս

կրկին իւր չքեղ ու փառաւոր գրութեան։

Շահ Խմայիլ յամի 1518 առաւ նորէն Թիֆլիս, քանդեց տաճարները և չինեց մզկիթներ, բայց Դաւիթ Թագաւոր Տփխիսի տիրելով, Պարսկաց բերդապահ զօրքը ոչնչացուց, աշխատեցաւ զայն վերանորոգել, սակայն 1525 թուոյն վախճանեցաւ նախ քան զմահն ընդունելով սքեմ վարդապետական (զգեստ)։

Ոչ երկար ժամանակ չունչ առաւ Տփխիս, քանզի յամի 1536, Շահ Թահմասպ, ժառանգ Իսմայէլի ի հուր և ի սուր մատնեց զքաղաքը։

Թագաւորն Վրաց Ռոստոմ, ի 1658 նորէն փառաք բերաւ Տփխիսի, կառոյց հոյակապ ապարանք, եկեղեցիներ և բարեկիրթներ։

Յամի 1672 եկաւ յայցելութիւն ի Տփխիս հռչակաւոր գաղիացի ճանապարհորդն Շարէն։ ի 1703 արքայորդին Գարթլայ վաղթանք, եղաւ իշխան Գարթլայ նահանգին, այս ժամանակին կ'վերաբերի նորա չինած օրինագիրքը և տարեգրութեանց քաղուածքը։ իսկ ի 1709, ի ժամանակս Վաղթանգայ, սկսան տպագրութիւն ի վրասատան։ Վաղթանգ Բ. 1722 թուոյն օգնութիւն տուաւ մեծին Պետրոսի կայսեր Ռուսաց, երբ կ'արշաւէր նա ի Տաղստան։ անկաւ դարձեալ Թիֆլիս Տաճկաց ձեռքը յամի 1724, և Վաղթանգ Բ. բաղմաթիւ Վրացի զօրքով շրջապատեալ հեռացաւ ի Ռուսաստան։ Նաստիր Շահ ի 1735 արտաքսեց Տաճիկները Վրաստանէն և իշխանութիւնն յանձնեց Թէյմուրազ Բ.-ին։

Բայց ձարեցեալ և Տաղստանցիք աւերակ դարձուցին այս կողմերը։ Թագաւորն որդին Հերակլ, որդի տուած էր Թէյմուրազ դեռ իւր կենդանութեան ժամանակ կախէթ քաղաքը կառավարելու սատկել պատճառ այս Լեկկիները։ սակայն յաջողակութիւնը չ'վերջացաւ և արքայն Թէյմուրազ Բ. տկարանալով զարհուրելի կռուոյն մէջ, դնաց յամի 1760 ի Ռուսաստան, խնդրել օգնութիւն կայսրուհի Եղիզաբէթ Փեթրօվնայէն։ մեռաւ Թագաւորն ի Ռուսաստան 1761 թուոյն և թաղեցաւ Աժտարխան քաղաքին մէջ։

Հերակլ միացոյց իւր կախէթ նահանգը Գարթլայ հետ և կազմելով անդ հաստատուն զօրք, պահպանեց երկիրները Լեկկիներու յաջողակութենէն։ Թիֆլիս սկսաւ նորէն զարդարել և առ ինքն հրաւիրել դիւրաքրքիր ճանապարհորդք։ Յամի 1770 և 72, այցելութեան եկան Համլին և Հէյտէնշտէթ դերմանացի Ակադեմէմանք։ Բայց Լեկկիք, մերթ ընդ մերթ սարերէն վար իջնելով կ'յաջողակէին և կ'աւերէին թագաւորութիւնը։ այս պատճառաւ ստիպուեցաւ թագաւորը տարեկան 5000 արծաթ ռուպլի տալով Ավար անուն երկրի Օմար խանին դնել իւր երկիրներուն պաշտպանութիւնը։

Վերջացաւ յաջողակութիւնը։ Հերակլ սկսաւ պարապիլ իւր Մայրաքաղաքը զարդարելու։ չինեց տպարան փողերանոց և զինարան։ բայց չ'հատուցանելով ճշդութեամբ Օմար խանին 5000 ռուպլի սահմանեալ տուրքը, տեսաւ յառաջնոյն պէս

Լեզգիներու սովորական յարձակումները իր իշխանութեան մէջ։ Թագաւորը իր Հօր օրինակին հետևելով, օգնութիւն խնդրեց Ռուսաց կառավարութենէն և 1783 թուին Կայսրուհին կատարեցնել Բ. ընդունեց զարքայն Փառելայ և Կախեթայ հանդերձ թագաւորութեամբ իր իշխանութեան և հովանաւորութեան ներքև, որոյ հետևութիւնն եղաւ գնդապետ Պուռնայոֆի 2000 զօրքով գալ յԳանձակ Օմար խանի ըրած աւերակներուն ընդդէմ։

Այս կողմերն յարձակող ապաստակները մաքրելէն յետոյ, Պուռնայոֆ վերադարձաւ ի Ռուսաստան։ Բայց Տֆիխս քաղաքին փորձութիւնները դեռ չէին վերջացած։ Պարսից Շահն Ագա Մէհէմէտ, պահանջեց վրաստանէն որ էր նախկին հարկատու Պարսկական իշխանութեան, հնազանդութիւն և հարկ, սակայն Հերակլ։ մերժեց սոյն պահանջմունքը։

Յունիսի զարկուրերի թուին 8 սեպտեմբեր 1795 երևեցաւ հանդէպ Տֆիխսի յիսուն հազար զորքով։ Մերունի թագաւորը պէտք էր նորէն խոյս տալ և կախեթ իր մայրաքաղաքը թողուլ առանց պատերազմի յաւար և ի յափշտակութիւն Շահին։ Պատուոր դերդաստանք Տֆիխս քաղաքի և թագաւորական սերունդք ոտիպուեցան թագչիլ ի Կայշահուր։ 11 էն մինչև 17 սեպտեմբերի։ ամեն օր Տֆիխս աւերմանց մատնուած էր Պարսկաց ձեռքը, որ կ'հեռանային դեպի իրենց ամրացուցած բանակն երբ գիշերը կ'հասնէր։

Շատ եկեղեցիք կործանեցան, տունք հիմնայատակ եղան և Մեսրոպեանն Ցօսեփէյ ձգուեցաւ ի Կուր գետ։ Ագա Մէհէմէտին լուր հասաւ թէ բոլոր Վրաստան ընդդէմ իր կղզիներուն և թէ Ռուսք կ'պատրաստուին օգնութիւն մատուցանել Վրաց, ձգեց Նախիջեւան Տֆիխս և առաւ տարաւ իր հետն երեսուն հազար գերիներ։ Ռուսք յերաւ փութացան օգնել Տֆիխս քաղաքին և գնդապետն Սիրիքնով 2000 զօրքով եկաւ ի Տուշէթ։ բայց ժամանակն անցած էր։

Եւ որովհետև Շահը գիտաւորութիւն ունէր կրկին դէպ ի Տֆիխս արշաւել։ Ուստի Կայսրուհին Կատարինէ յուղարկեց զկոմս Վալերեան Ժուլով, պարսից ուղևորէն ընթացքն արգիլելու համար։ Վրաստան սկսաւ փոքր առ փոքր շունչ առնուլ ռուսական զօրաց պաշտպանութեամբ։ Ագա Մէհէմէտ խան Ագուանները ապատնուեցաւ ի Շուշի, և գարնան սկիզբն ի 1799 երբ մեռաւ Կայսրուհին։ կոմս Վալերեան—Ժուլովին զօրքը կանչուեցաւ ի Ռուսաստան։

Հերակլ թագաւորն ի 11 յունվարի 1798 ի հասակի ութսուն տարի թագաւորելն յետոյ, վախճանեցաւ և թողուց իր Վրաստանը արտասուելի վիճակի մէջ։

Ամեն տեղ Լեզգիք չարագործութիւն կընէին, ժողովրդը ժանտախտի ձեռքէն կը թշուառանար, և ահա այսպիսի դրութեան մէջ անդրանիկ որդին Հերակլի, Կիորկի ԺԲրդ գահակալեց։ Ան պատուիրեց իր գնդապետին ի Բեսերաստուրի

Կարսէվան ձաղճավաճէ իշխանին, խնդրել Ռուսաց Պօղոս կայսրէն հաստատել զինքը թագաւոր Վրաստանի և իւր Դաւիթ որդին, ժառանգ թագաւորութեան, հիմնելով իւր խնդիրը 1783 ամի դաշնագրութեան վրայ։ Բարձրագոյն հրովարտակն կայսր ի 18 ապրիլի 1799, կատարեց թագաւորին բաղձանքը և ի 26 նոյեմբերի նոյն տարւոյ, զօրավար Լազարէվն գունդ մի 4000 զօրքով մնաւ ի Տփխիս։ Ի 23 ապրիլի 1800 թուոյն դեսպանք թագաւորին, իշխանք ձաղճավաճէ՝ Ավալով և փէհլէվանով դնացին ի Բեռերսբուրգ ի շնորհակալութիւն կայսր։

Այս դեսպանք ունէին դաղտնի հրահանգք, յանձնել Վրաստանի թագաւորութիւնն ի կատարեալ հպատակութիւն Ռուսաց, զթագաւորը և իւր սեփհական գերդաստանն ապահովելու պայմանաւ։ Այս գործը Վրաց թագաւորն ըստ ներքին բնանկան գժտութեանց պատճառաւ այն ինչ իւր ծանր հիանգութիւնը զինքը դէպ ի գերեզման կխոնարհէր։ Ի 23 սեպտեմբեր 1800 ամի հասաւ ի Տփխիս զօրավար Կուլեռաքով 4000 զինուորով ձեռնտու լինել զօրավար Լազարէվին։ որպէս նոյեմբերի առաջին օրը սաստիկ հարուածմբ տաւաւ նոր գեռին վրայ Քաղաքէտ գիւղին մեռ Ավարաց նահանգի իշխան, Օմար խանին 40000 Լէկիներուն։ Ի 22 դեկտեմբեր կիօրկի ԺԳ երորդ վախճանեցաւ։

Վախճանեալ թագաւորի եղբարք ակսան կիօրկիայ որդւոց հետ աթոռոյն ժառանգութեանք համար կռուիլ, բայց զօրավար Լազարէվ շտապեց յայտնել արքայորն իշխանաց։ Քնեազաց և եկեղեցականաց կայսեր կամքը, թէ մինչեւ կայսերական հաստատութիւնն ստանալու կէսը, ոչ ոք յայնորդ չընդունուի թագաւորական աթոռոյն վրայ

Դեսպանք կիօրկիոյ, որ արդէն յուղարկուած էին ի 25 ապրիլ 1800 ամի, վերադարձան ի Տփխիս, և 8 յունվար 1801 զինի մնհուան արքային մատուցին իւր Դաւիթ որդւոյն, կայսերական հրովարտակը, հանդերձ հաստատութեամբ պայմանաց հպատակութեան Վրաստանի, որոնք առաջարկուած էին իւր հանգուցեալ Հօրմէն։

Այս պատճառաւ Դաւիթի արքայորդին յայտնեց բոլոր Վրաստանի թէ, դաշնագրոյն հաստատութեամբ որոշած Բ. յօդուածոյ պայմանին համեմատ, ինքն առած է թագաւորութեան իշխանութիւնը։ այս եղաւ պատճառ որ ստիպեց Հերակլի որդիքը խռովութիւն յարուցանել ժողովրդոց մէջ, որպէս զի անդրանիկ որդին Հերակլի Հուլոն՝ թագաւոր ճանչցուի Վրաստանի։ բայց ռուսական զօրքը լռութիւն ու հանդարտութիւն կհաստատէին ամէն տեղ։

Ի 18 փեբրվարի 1801 Միօթի վանուց մէջ հրապարակաւ կարդացուեցաւ կայսեր ինքնագիր բարձրագոյն հրովարտակը, թագաւորութիւնն Վրաստանի մշանչենապէս միացնել ընդ կայսերութեանն Ռուսաց ի ձև կուսակալութեան։

Աղէքսանդր Ա. կայսրը ցանկալով այս եր-

կիրներուն դրութիւնը դիտնալ, Վրաստանի տեղեկագրութիւնը յանձնեց առաջին մեծ սպարապետ զօրավար Գնօրիկ Բ.-ին և յուշարկեց ի Տփխիս։ Ահա հեռաքրքրական հրովարտակին մի մասն ուղղեալ յանուն յիշեալ զօրավարին։

«Երբ Մեր թագաւորական տիտղոսը բարձրանալէն ի վեր, գտանք որ վրաց թագաւորութիւնն բան ամենայն թագաւորական դաշնակցեալ է արդէն ընդ կայսերութեանն և սոյն պայմանաւ ընդուներ ենք բոլոր Վրացի մեր հաւատարիմ հպատակներէն հաւատարմութեան սուրբ երդումը։ Դարձեալ սոյն դրութեան մէջ այս երկիրները մինչդեռ մեր զօրաց պաշտպանութեան ներքև էին, կունային բնակիչք ապաքէն համարել մեր իշխանութիւնն անդ անչարժ հաստատեալ. մանաւանդ մեզ հասած ստոյգ տեղեկութեանց նկատմամբ, հաւատարմացած եմք որ արդէն վերադարձող դեսպանաց իւրոց դրած պայմանները, մեր գիտաւորութեանց յարմար էին. նոյնպէս չեմք ծանկեր ձեզմէ որ կայսրութեան արժանաւորութիւնը։ մեր սահմանաց ապահովութիւնը, Օսմանեան կայսրութեան նկատմունք, գաւառանութիւնք, լեռնային ազգաց յանդգնակութիւնք- և Ռուսաց բոլոր սեփհական օգտից յարգութիւնք, ի վաղ ժամանակաց հետէ դիպուածոց նկատմամբ կասիպէին բաղում անդամ զմեր կառավարութիւնը մտածել այս մասին և ցանկալ սոյն եղելութեան։ Երբ միակ մեր օգտ տեսերով իրաց դրութիւնները չափեմք, կա-

ցուղ չեմք վնաստալանիլ նոցա ուժը։ բայց երկրային թագաւորութեան օգտից համար, յաւիտենական կանոնաց մէջ այս ճշմարտութիւնը ընդունք և անչարժելի հիմն դրած եմք։ յորմէ կէնտեսնի մեր դէպ ի Վրաստան բարեյաժար կամեցողութիւնը, փասնորդ կցանկամք նախ քան զամենեսին վերահասու լինիլ Ա. թէ ճշմարիտ է արդեօք։ որ այդ կողմերու ներքին դրութիւնն այն վիճակին հասած լինի որ։ միայն իւրանց զօրութեամբ չկարողանան այլ ևս ընդդիմակաց լինել պատուասէր պարկաց պահանջմանց։ անոր դիմադրելու չրնդունակ լեռնային ազգաց ապատակութեանց և ոչ չնչուցանել ներքին յեղափոխական խռովութիւնք, որ կ'սպառնան պատերազմանց։ ուստի եթէ թողումք այս թագաւորութիւնն առանձին խաղալիք իւր բախտին արժան չթուիր մեր կայսրութեան։ որ ի հնուց ատի կպաշտպանեն զայն մանաւանդ թէ անվայելուչ կհամարուի մեր մեծանձնութեան։ Բ. Արդեօք այս թագաւորութիւնը իւր սեփհական հանգամանց և հայրենի օգտից վրայ հիմնած է դէպ ի մեր միապետական թագաւորութեան հպատակելու հակամտութիւնը և ամենայն բարձրագոյն կարդի անձինք և ժողովրդն իսկ միասիրի և հանամիտ կնստասանին արդեօք սոյն միութիւնն առ ի փրկութիւն իւրեանց անձանց։ . . .

Մեր աչաց առջև պէտք է ունենանք ոչ թէ Ռուսաստանի համար միանալ այս ազգն ընդ կայսրութեան, այլ յատկապէս իւր համար։ մեք

մեր օգուտը չեմք խնդրեր այս մասին, այլ միայն նորա հանգստութիւնը և ապահովութիւնը»։

Գլխաւոր սպարապետն հասնելով ի Կիսրկիեսկայ ի Տփխիս ի 23 մայիս և ապէքէ անցնելով իւրաց ընդհանուր վիճակն ու թագաւորութիւնը, ծանոյց կայսեր ինչ որ տեսեր և քններ էր։ Ահա նորա տեղեկագրէն մի քանի խօսք։ «Ներքին և արտաքին դրութիւնն այս կողմանց, իսկապէս այնպէս է որ միայնակ իւր զօրութեամբ չէ կարող դիմադրել պատուասէր պարսկաց պահանջմանց և ոչ այլ ևս դիմադրաւել ասպատակութեանց շրջապատեալ լեռնային ազգաց։ Ամէն կարգի ողջամիտ անձինք վրաց առ հասարակ համամիտ մտերմութեամբ կցանկան մտանել ի հպատակութիւն Ռուսաց»։ . . .

Զօրավար Քնօրինկի սոյն պատասխանաւ, որոշուեցաւ Վրաստանի վերջնական ճակատագիրը։ Ի 12 սեպտեմբերի 1801 ամի, հրատարակեցաւ խնքագիր հրովարտակն կայսեր, թագաւորութիւնը կայսրութեան հետ միացնելու համար, և Վրաստան համարել նահանգ Ռուսաց կայսրութեան։ Ուստի նահանգապետ անուանուեցաւ մեծ սպարապետն զօրաց Վրաստանի զօրավար Քնօրինկի։ Այս նահանգը բաժնուեցաւ հինգ դասաւ, այն է Դորի, Լօրի, Ցուշէթ, Խիասթլ, և Թէյալ, Սրընսաց ի Կախեթ։

Ի 10 սեպտեմբերի 1802 ամի մեծ սպարապետ նշանակուեցաւ ի Վրաստան, տեղապալ զօրավար Զիցիանով հռչակաւոր իշխանը որ հասաւ

ի Տփխիս ի 1 փետրվարի 1803 թուականի։ Քաղաքն այն ժամանակէն սկսաւ զարգարուիլ շինութիւններով։ Բնակիչք սկսան փոխադրիլ քաղաքի ստորերէն դուրս, այժմեան Երևանայ Շուկայ կոչուած տեղը, այնպէս որ յամի 1705, շինութիւնք կհասնէին դէպ ի քաղաքէն դուրս եղած գերեզմանները, ուր այժմ չնչեալ է ժիմնազիական մեծ դպրոցը։

Յետ դաւաճանութեամբ սպանման Զիցիանով իշխանի։ Ի 8 փետրվարի 1806 ամի, Պագուս բերդին մօտ Հիւսէյին Խուլի խան, Պագուայ կառավարչին հետ դաշնադրութիւն հաստատած ժամանակը, կոմս Կուտովիչ անուանեցաւ մեծ սպարապետ Վրաստանի ի 2 յունիսի 1807 ամի, որոյ ժամանակը չնչուած է այժմեան փոխարքայի տունը, Թօրմասով, Վրաստանի սպարապետն ժամանակը որ անուանեցաւ յաջորդ կոմս Կուտովիչի։ Ի 5 մարտի 1809 ամի։ Տփխիսի մէջ տնկեցաւ բուսաբանական պարտէզը բերդէն դուրս, բժշկական բոյսեր յառաջ բերելու։

Թօրմասով զօրավարը թողուց Տփխիս սեպտեմբերի մէջ ի 1811 ամի, և յանձնեց գլխաւոր կառավարութիւնը Վրաստանի զօրավար Մարքեզ Պաուլուչի։ մինչև որ անուանեցաւ նոր մեծ սպարապետ ի 16 փետրվար 1812։ Գլխաւոր կառավարիչ Վրաստանի զօրավար Ռեհտիչէվ։ Ի 12 հոկտեմբերի 1816 ամի։ մտաւ ի կառավարութիւն Վրաստանի տեղապալ զօրավարն Երմոլաֆ, որոյ ժամանակը դաղթեցան մի քանի գերմանա-

ցի գերդաստաններ Թիֆլիսի մօտ։ Կուր գետոյ ձախ եղերքը (այժմեան Տիֆլիսքայա Նէմէնձկայա կօլոնիա) և չինեցաւ ի 1816 ամի այժմեան զինարանը։ Ի 1821 ամի, կառուցաւ ի Նաթիւլիս թաղի, զօրաց ձմերոյին հիւանդանոցը։ Յամի 1824 չինեցաւ կովկասեան զօրաց ընդհանուր տեսչութեան պաշտօնատունը և սուրբ Վերափոխման անուամբ զինուորանոցը ի Հալիպպար։ Ի 26 մարտի 1827 ամի, անուանեցաւ մեծ սպարապետ առանձին կովկասեան բանակին՝ զօրավարն հետեւակ զօրաց կէնէռալ այութանտ Պասքէվիչ, որ յետ պարսկական և տաճկական պատերազմաց ի 28 ապրիլի 1831 ամի, յանձնուեցաւ առ ժամանակեայ գլխաւոր կառավարութիւնը զօրավար Ա.յութանտ Պասքէվիչի ձեռքը։

Զօրավար Պասքէվիչի ժամանակ ծաղկեցաւ Տիֆլիս։ Չինեցաւ զինուորական ճարտարապետութեան պաշտօնատունը և Մէտէղ անուն ամրոցը և եղաւ Տիֆլիս վկայ Պարսից Թորոսի Մերգա արքայորդւոյ գալստեան (*)։ Իսկ ի 15 յունիսի նոյն 1829 ամի եկաւ ի քաղաքն ուսումնական ընկերութեան առաջին դասատու Յուսպաշեան Պարսատայ համարարանին իշխանութեան ներքև քննել Ա.յրարատայ լեռները։

(*) Թորոսով Մերգա, կիսաթագ դնալ ի Բեթերսպուրգ, Պարսից սերմն ի գոնէ չարժել։ Վասն սպանման Ռուսաց Դեսպանին ի Դէհրան երեւելի բանաստեղծ Կռիպօեդովի, որոյ մահուան պատճառն էր մի Հայ ազգկան պարսպանութիւնը։

Օգոստոսի մէջ յամի 1831, անուանի մեծ սպարապետ ի Վրաստան տեղակալ զօրավար օ.ժանդակ (այութանտ) պարոն Ռօզէնի ժամանակը Տիֆլիս բանտարկեցաւ, ի 7 հոկտեմբերը 1837 ամի։ Գալստեամբ Վեհափառ Կայսեր Նիքոլա Փաւլովիչի։ Պարոն Ռօզէնի ժամանակ չինեցաւ ամառնային հիւանդանոցն զինուորաց ի Նաթիւլիս և սկսաւ ժիմազիական դպրոցն չինութիւնը։ որ աւարտեցաւ յամի 1839 զօրավար կնչէվինի ժամանակը։ որ անուանեցաւ ի 30 նոյեմբերը 1837 ամի գլխաւոր կառավարիչ ի Վրաստան։ որոյ ժամանակը յամի 1842 մայիսի մէջ, ընդհանուր զօրաց նախարարն զօրավար Զէռնիշօֆ իշխանն եկաւ յայցելութիւն ի Տիֆլիս քաղաք։

Զօրավարն Նէյակարա անուանեալ յամեհանն Հոկտեմբերի 1842 ամի գլխաւոր կառավարիչ ի Վրաստան, յանձնեց երկիրները կամ Վարանձովին։ որ անուանեցաւ ի 24 Դեկտեմբերի 1844 ամի փոխարքայ Կովկասու։ որոյ ժամանակը ի 20 Սեպտեմբերը 1845 ամի բացաւ ի Տիֆլիս Ռուսաց առաջին թատրոնը։ Ցեռագայ տարւոյն սկսաւ հրատարակել ի Տիֆլիս Կովկաս անուն Ռուսերէն լրագիրն առանձին և Հայերէնն առանձին. հաստատեցաւ Տիտուսպա գաչտին վրայ ձիարշաւը, հիմնեցաւ սրբուհւոյն Նունեայ՝ օրիորդաց ուսումնարանը, Կովկասեան երկրաչափական դպրոցը և հաստատեցաւ քաղաքացոտի (շէհիր էմինի) տեսչութիւնը։ Թղճալի կուքիա գիւղը յատակագծեր գծուելով։ մի գեղեցիկ փոքր քաղաքի

ձև առաւ։ Ցամի 1847, Երևանայ շուկային վրայ շինուեցաւ պատուաւոր քաղաքացի բարեգործ Գաբրիել Թամամեան հայկազն իշխանի ձեռքով չորս յարկ ամենամեծ և բարձր աղիւսաշէն իշխանը, որոյ տարեկան եկամուտն է 35 հազար արծաթ ռուպլի և մէջտեղը շինուած է թատրոնը։ Այս շինութիւնն կարելի է համարել մինն Թիֆլիս քաղաքի փառաւոր զարդարանքներէն։ կառուցան նաև նոր դեղով վրայ մեծածախ ու հոյակապ կամուրջը քարաշէն խարիսխներով, որոյ ձախ եզերքը դրուեցաւ ի 25 Մարտի 1847 ամի մարմարեայ մի չքեղ պատուանդանի վրայ Մարաջախտ Վարանձով փոխարքայի ձուլածոյ արձանը, որոյ բոլորտիքը գիւղերական լապտերներ և ութն Օսմանեան թնդանօթներ շարուած են, որ առած էր Վարանձով ի 1835 Արևելեան պատերազմի ժամանակը։ Հետևեալ տարիները Թիֆլիսի մէջ հատատուեցաւ երկրագործական արուեստի ընկերութիւն և անդ ներկայացաւ մասնաւորապէս կովկասեան բերքերու և արուեստական շինուածոց Արուեստասիրաց քաղաքն սկսաւ զարդարիլ գեղեցիկ շինութիւններով, կալաւին կուսակալի անուամբ շինուած ծառազարդ ճանապարհը (Պուլվար) որ այժմ է տեղի զբօսանաց, որոյ շուկաներն են յոյժ լայն ու երկայն, շինեցան սալայատակներ և տեղ տեղ սկսան երևիլ ի գիշերի կաղեղէն լուսաւորութիւնք։ Ի 1830 ամի կազմուեցաւ Բեռլերպուրկի կայսերական աշխարհագրական ընկերութիւնը և քաղաքը վերատին

բախտաւորեցաւ այցելութեամբ թագաժառանգ Ալէքսանդր Բ. Նիքոլայեվիչ իշխանի, որ է այժմ կայսր Ռուսաստանի։

Տփխիսի մէջ կան նաև բաւական հին տաճարներ։ Վրաց հին երեքեղեցիք են։

Ա. Եկեղեցի Մէաէխայ, սա ի սկզբան կառուցաւ Տփխիս քաղաքի հիմնադրէն, այն է Վախթանկ կորկ—Արսլան թագաւորէն, ուր ամփոփուած է, ինչպէս ի վերոյ նշանակուեցաւ, մարմին Վարդան զօրավարի դստեր Շուշանկան։

Բ. Եկեղեցի Սիոնի, նոյնպէս շինեալ է կորկ—Արսլան արքայէն, զոր նորոգեց կուբամ թագաւոր, որոյ զանդակատունը կառոյց Զիֆիանով իշխանը։ Այն տաճարի հարաւակողման որմին վրայ կայ յիշատակարան ինչ, որոյ մէջ ամփոփուած է Զիֆիանովի անգլուխ մարմինը որ բերուած էր ի 1806 ամի Պագու քաղաքէն ըստ հրամանի գլխաւոր կառավարչին Կովկասու Մարքեզ Փասուլուչի։ Աւագ սեղանոյ ձախակողմն, մի արծաթեայ արկղի մէջ պահուած է խաչ մի սրբոյ փայտէ շինուած և Վրաց Լուսաւորիչ Նունեայ կուսի մազէն կապուած, որով նա կքարոզէր Վրաստանի մէջ քրիստոնէական հաւատքը։ Ի 17 յունվարի իւրաքանչիւր տարւոյ, ներկայութեամբ բազմաթիւ ուխտաւորաց կրնան այժմ այն արկղը հեռաքերքական է տեսնել թէ առ հասարակ քրիստոնեայք որչափ ջերմեռանդութեամբ կսիրեն համբուրել մարդկային ազգի փրկութեան այդ գրաւականը։ Աւելորդ չ'համարեր

...ատանոր յիշատակել այս խաչի հաստատութիւնը, քաղելով Բավանէնձի յամի 1802 Վրաստանի կառավարչի յիշատակարանէն։

«Երբ Վրաց վաղթանգ թագաւորը դնաց ի Ռուսաստան, որոյ յաջորդք, յայտնի են Վրաց եղբանք անուամբ։ տարաւ իւր հետ սուրբ խաչն Նունեայ։ Այս խաչին ծագումն, ըստ աւանդութեան ունի սկիզբն ի ժամանակէ կենդանութեան սրբուհւոյն Նունեայ ի երդ դարու, որ կատարելով զհրաման Ցիրամոր ի տեսլեանն երևալով Նմա յանձն առաւ աւետարանել զԲանն կենաց։ այս նշանաւոր երիտասարդ ճիւղերէն միաւորած ու խաչաձև կապուած էր հերոմէ սուրբ կոյս Մարիամու։ Սուրբ Նունէ աւարտեց իւր առաքելութիւնը ըստ սովորելով բոլոր Վրաստան, որոյ պատճառաւ, հաւասար սրբոյ Առաքելոյ, դասեալ է ի կարգս սրբոց։ Այս խաչը, երբև դրաւական շնորհացն Աստուծոյ առ ազգն Վրաց, մասնաւոր յարգութեամբ կ'պահուէր իրենց հայրենեաց մէջ մինչև նոր ժամանակները, ինչպես յիշցինք վերը։ Շատ անգամ Վրաց ազգին կորստեան չի պակասեցաւ ազերանք առ կայսրն Ռուսոյ։ խաչի Ռուսաստանէն ի Վրաստան փոխադրուելուն մասին, քանզի ժողովուրդն այն խաչի հեռանալուն կ'վերագրէր իւր քաղաքական աղէտից պատճառները։ Վանաբրդ ի բարեպաշտութենէ չարժեալ կիօրկի՝ որդի Հերակլեայ վերջին թագաւոր Վրաստանի, թղթակցեցաւ կայսր Գողոս առաջնոյ հետ։ Բայց քան քննութեան յայտնի եղաւ որ,

այն խաչը սեփհական է եղեր Եղիսաբեթ Աղեքսանդրեան իշխանին Վրաց, որ իւր նախորդներէն բաժին ժառանգութեան մնացած էր իրեն, վանաբրդ Ռուսաց կայսրը հրամայեց կիօրկիի որ այս մասին ինքն առանձին թղթակցի Եղիսաբեթ Աղեքսանդրեան իշխանին հետ։ բայց մնաց անդարձ ընդելի։ Սեռ փոքր ժամանակի կայսրը հաճեցաւ լսել աղերսանաց համեմատութեան Վրաց ընդունել իւր վրայ նոցա կառավարութեան ծանր բեռը, դնել փախճան իւրոց թշուառութեանց, հաստատուն հիմնել նոցա բարօրութիւնը, փոխադրել ի Վրաստան նոյն խաչն երբև նշան վերադարձի առ նոսա Աստուծոյ շնորհացն հաստատուն և անշարժ առ հաւատչեայ կայսերական խնամարկութեան։

Խաչն Նունեայ, ըստ կամաց Աղեքսանդր կայսեր յուղարկուեցաւ ի Վրաստան և մեծաւ հանդիսիւ դրուեցաւ մի արծաթեայ արկղի մէջ Սիոն մայր Եկեղեցւոյ խաչկալի ձախակողմը։ Բայց ի Հոկտ. ամսոյ յունվարի, յորում կ'տանէ Վրաց եկեղեցին դասն Նունեայ, — այս խաչը ութիշ օրեր դուրս կ'հանուի ըստ խնդրանաց Ներսեանդ ուխտաւորաց։ Իսկ տօնախմբութեան օրը, եկեղեցւոյ մէջ անթիւ բազմութիւն լցուելով ճոխք և աղքատք, մեկլուկի կ'անցնին և առնուլ կ'ցանկան կամ գէթ մատչիլ առ Նա։ կամ տեսնել զայն Ուստի գրունք տաճարին այն օրն ամբողջ բաց կ'մնան։

3. Եկեղեցի Աշխարհաբեր, որ է պատատ-

կան եկեղեցի վրայ, ունի սա փոքր ինչ հեռաւորութիւն Վրայ թագաւորի արքունիքէն կուր գեղոյ աջ ափանց վրայ։

4. Եկեղեցի Մթա-Ամենայ (սուրբ լուսոն) կամ սրբոյն Դաւթի եկեղեցի, շինուած է ի 1818 ամի։ Նոյն տեղւոյն վրայ, ուր 547 թուականին, մի մութ այրի մէջ կ'բնակէր սուրբն Դաւթի կարեցիոյ, մինն երեքտասան հարցն սրբոց Ասորւոց։ Եկեղեցւոյն ստորոտը շինուած է քարեայ դերեզման և արձան կիսրոհոով Ռուսաց դեսպանին, որ սպանուեցաւ ի Դեհրան։

5. Եկեղեցի յանուն սրբոյն Գէորգայ կամ ըստ վրաց Քաշվէթի պալատական եկեղեցի, որ է վերջին թագաւորն վրաց։

6. Եկեղեցի Մարինէ կուսին ի Հալուապար շինեալ յոյն վարդապետաց ձեռօք։ բայց ե՞րբ, չէ յայտնի, որ նորոգեցաւ ի 1824 ամի առ մեծարգոյ տուէթեամբ Ցոնեայ։

7. Եկեղեցի Հռովմէականաց, որոյ հիմնարկութիւնը կ'վերագրեն 14դ. դարուն։ Քանդեցաւ սա պարսիկներէն իրենց վերջին յարձակմանց ժամանակ, սակայն վերանորոգեցաւ առ կառավարութեամբ Ռուսաց, որ այժմ գափուչին եկեղեցականաց ձեռքն է։

Մղկիթ պարսկաց, որ հիմնադրեալ է ի 1522 թուին ի Շահ Իսմայիլէ։

9. Եկեղեցի փոքրիկ հին կանուրքին մօտ որ այրեցաւ առ թագաւորութեամբ Յոհաննայ Բ. ի պարսիկ կրակապաշտներէն, որ նորոգեցաւ Վրաստանի գլխաւոր կառավարիչ կոմս Փասկեվիչ Երեւանցւոյ ձեռօք։

10. Պարսկական մի տաճարն որ Ռեշդիէհ եկեղեցւոյ մօտ մնացած է հիմակս։

Հայոց եկեղեցիներէն նշանաւոր են հարեանց հնութեամբ հետեւեալքը։

1. Վանք Ամենափրկչեան եկեղեցի։ որ շինուած է Աղամնորդարան վրաստանի Հայոց վիճակաւոր Արքեպիսկոպոսի համար։ կառուցաւ սա ի 1480 ամի։ որոյ հին զանգակատունը նորոգեցաւ ի կարնոյ գաղթական վիճակաւոր կարապետ Արքեպիսկոպոսի ժամանակ։

2. Սուրբ Խաչ եկեղեցի կամ սուրբ Նշան։

3. Եկեղեցի սրբոյն Յոհաննոսի, որ է կուսանաց վանք հիմնեալ ի Թիֆլիս թանց իշխանաց ի 1717 ամի։

4. Սրբոյն Գէորգայ եկեղեցի որ կոչի Մուղնի (*)։ կայ նաև Մուղնիի մօտ նոյն անուամբ մի փոքր եկեղեցի շատ հին։ որոյ հիմնարկութիւնը չէ յայտնի։

Բեթղէհեմ եկեղեցի։ շինեալ է ի 1500 թուականի։ և վերանորոգեալ ի 1740 ամի։ կիսի Ամիլախվար վրայ իշխանին ձեռօք։

Սուրբ Գէորգայ եկեղեցի։ որ ոչ է հեռի ի Բեթղէհեմէ և է շինեալ ի 1600 ամի։

(*) Մուղնի գիւղը Երեւան նահանգին մէջ է որ կապնի Կարբի գաւառի Աղագած լերան ստորոտները, Բասաղ գեղոյ ձախ ափան վրայ, որոյ մէջ շինեալ է Մղնոյ սուրբ Գէորգայ վանքը, նոյն անուամբ և ի Թիֆլիս։

7. Աստուածամօր եկեղեցի, հին բերդին ստորոտը, որ կ'կոչեն բերդի եկեղեցի (Ձիխս Սաղտարի)։ Որ Առաջնորդարան Հայպատոյ Արքեպիսկոպոսի։ շինեալ է 1037 թուականի։

8. Եկեղեցի սրբոյն Սարգսի, որ շինեցաւ է 1737 ամի։ Այս եկեղեցի սեփհական ստացուած է համարուած էր։ Նորաշէն անուն Աստուածածնայ եկեղեցւոյ Սրապիոն աւագ քահանայի կողմանէ որոյ դասն աւարտեց Ներսէս Կաթուղիկոս Աշտարակեցի։ Էջմիածնայ ամուսոյ եկամուտներէն իրեն մի փոխարինութիւն նշանակելով, և այս եկեղեցին իւր սրբութիւնքովը Էջմիածնայ ամուսոյն սեփհականեց։ Սոյն եկեղեցին քանի տարիներ յառաջ է հիմանց կառուցաւ անսին ու փառաւոր ձևով, վերատեսչութեամբ Գ. Յակոբայ Կարինեանց։ Արժանի է յիշատակութեան սրբոյն Սարգսի ոտնախաբութեան հանդէսն ի Ցիխս։ Նոյն օրը Ցիխսեցի հայք և Վրացիք երկսեռ բաղմութեամբ կ'դան ուխտ ընել սուրբ Սարգիս եկեղեցին, և իւրքանչիւր տարի այս նշանաւոր տօնի հանդէսը կ'վերակենդանանայ բաղմութիւն ուխտաւորաց։ ուխտաւորաց մեծաւ մասամբ ծեր կանայք։ ամուրի երիտասարդք և մատաղահաս օրիորդք են։ առաջինք, կ'դիմեն անդ սրբոյն միջնորդութիւնը խնդրել։ առ ի թողութիւն բաղմամեայ մեղայ իւրանց։ երիտասարդք, աղօթեն և հայցեն շնորհել կանայս։ իսկ օրիորդք ուրաշեն զուարճ տալ ըստ բաղձանաց իւրայ զամուսնոյս։ այն օրը՝ արտաքոյ կարգի մի չայլ չքեղութիւն

կ'տեսնուի կանանց սեռին վրայ, որոց իւրաքանչիւրը կարծես թէ պատրաստուած է հարսանեաց համար։

Առաջաւորաց (սուրբ Սարգսի) պահոց ամբողջ շաբաթը, հայ երիտասարդք և երիտասարդուհիք խիստ ծոմապահութեամբ կ'անցուցանեն և միայն նախ քան զսծոն, ուրբաթ երեկոյին կ'ուտեն ազի ըլիծի։ այն է ազի հաց և մնանեն ի քուն սպասելով տեսնել երազի մէջ։ երիտասարդք իրենց հարսնացուն և օրիորդք իրենց փեսայն։ Ցայսմանէ է թէ, ազի կերակուրը բնականաբար կզարթուցանէ ծարաւը։ ուստի երազի մէջ ի հարկէ ծարաւոյ տարը զովացընելու համար։ կ'երևուութանան երիտասարդք և աղջկունք ջուր մատուցանել միմեանց։ երազատեսք իրենց ներկայացած երևութից արտաքին կերպարանքը հանդերձք իրմէ առաջադրուած ջուրը և նոյն իսկ անօթը մտաց մէջ պահելով ի զարթնուն ծերոց կ'պատմեն երազը, որոնք իրենց դատմամբ կ'որոշեն երիտասարդաց յարմար օրիորդք և օրիորդաց յարմար երիտասարդք։ միանգամայն և օրիորդաց նուիրելու զգոյշք (Դրախօմայ)։ եթէ երազի մէջ երևոյթը ասկեղէն կամ արծաթեայ անօթով ջուր մատուցանէ, նշանակ է թէ, ազջիկը պէտք է ճոխ պսակ բերէ։ եթէ պղնձէ կամ խեցեղէն անօթով, կ'նախազուշակեն միջակ կարգութիւն, իսկ եթէ փայտեայ անօթով, աղքատութիւն։ «Բիւրիցս աւելի երանելի էին մարդիկ, եթէ այսչափ եռանդուն կրօնասիրութեան

և պարզ ու միամիտ հաւատոց հետ, մանաւանդ անպայման տնչ մ՚ուներնային բարդական վարուց մեքրութեան և վերկաղոր առաքինութեան։»

9. Եկեղեցի սրբոյն Յովհաննու Կարապետին կուր գետոյ եզերքը, որ շինեալ է ի 1400 ամի և նորոգեալ ի 1822։

Արժան է յիշել նաև այն հոյակապ եկեղեցեաց անուանք, որ շինուեցան վերջին ժամանակները։

10. Ճիկրաչէն, Աւետաց եկեղեցի։

11. Նորաշէն Աստուածածնայ եկեղեցի, սակայն երկոքեան կառուցեալ են ի Տաքի թաղ։

12. Հրեշտակապետաց եկեղեցի։ ի Սէյիս-Ապատ թաղ։

13. Բաղաքեն 1 վերսթ հեռաւորութեամբ Ա.ղեստանեայց մէջ, ի պատիւ սրբոյն Գեղարդայ որ բերուեցաւ մայր ամուրն ի Տփխիս ի 1847 թուականին. առ ի փարատութիւն մաղձայոյզ (քոլերա) հիւանդութեան, շինուեցաւ Գեղարդավանք կոչուած եկեղեցին, որոյ տեղն յառաջ էր մի փոքրիկ մատուռ։

14. Էջմիածնացւոց եկեղեցի, յանուն սրբոյն Գէորգայ բարձր դմբեթով կառուցեալ։

15. Շամքորեցւոց եկեղեցի, յանուն Աստուածածնայ։

16. Սուրբ Մինաս։

17. Մեսեղ բերդին մեջ մի փոքր եկեղեցի և ասէ ի Հաքուպատ։

18. Սուրբ Աստուածածնայ եկեղեցի ի Զուխուրբեթ։

19 և 20. Երկու եկեղեցիք Նորակառոյք։ ի Կուբիա թաղ։

21 Թամտեանց իշխանաց կողմանէ յանուն սրբոյն Գէորգայ կառուցեալ եկեղեցի, որ է հանդէպ տանն փոխարքայի։

22. Զրկինեանց եկեղեցի։

23. Եկեղեցի վառվառեա կուսի, որ է վեց վերսթի հեռաւորութեամբ ի Թիֆլիս քաղաքէ։

24. Պեհպուտեանց իշխանաց ձեռօք մի քանի հարիւր տարի յառաջ դերեզմանատան մէջ շինեալ եկեղեցին որ կոչի Խոճիվանք։

25. Մարրոմի դերեզմանատան եկեղեցի, շինեալ հանդուցեալ Դաւիթ Թամամշեանց առաքինի իշխանի ձեռօք։

26. Սուրբ Գէորգ եկեղեցի Նորակառոյց ի Թէլէթի գիւղ, որ է հռչակաւոր ուխտատեղի ամենայն Քրիստոնէից։

Տփխիսի վերոյնշանակեալ հայոց եկեղեցեաց մէջ 65 քահանայ կայ, որ երբեմն սակաւ ինչ կ՚աւելնայ և երբեմն կ՚պակասի, և Մայր աթոռոյ կողմանէ կ՚նստի միշտ վիճակաւոր մի Արքեպիսկոպոս առաջնորդ։

Նշանաւոր է Տփխիսի բերդն հանդերձ դղեակաւ, ամրացեալ Ռուսաց վրաց թագաւորէն, որոյ հարաւակողմէ կ՚երևին այժմ մնացորդք ամրոցաց, որք կ՚կոչէին յառաջնումն Թաիրոց։ Բոլոր այս տեղերք մնալեալ են այդիներ և կանուանի

Սէյիտ-Ապատ, այն պատճառաւ որ ի 1636 ամի, դատաւոր ատ տարբական բերդապահ զօրք Սէյիտ կոչուած։

Աւ հասարակ Տիֆլիսի շինութեանց այժմեան Եւրոպական ճարտարութիւնը, Ասիական ճարտարապետութեան հետ կ'միշտ։ այսինքն։ Եւրոպացիքը կ'ունայ չքեղ պարզութեամբ Ասիականէն աւելի վայելուչ երեսիլ։ բայց փայլուն շինութիւնքն ու ճոխ վաճառանոցներով, և Ասիականը Եւրոպականէն։ Տիֆլիսի Ասիական ձևերով կառուցեալ տուները կ'վերարերին մեծ մասամբ հին թաղերուն։ որոց վերնայարկերուն դուրսի մէկ կամ երկու կողմերը սիւնակներով ծածկոցներ շինեալ են։ քաղաքին հին մասին մէջ փայտեղէն տուներ ու շինութիւններ շատ կան։ իսկ նորերը բոլորն Եւրոպական ձևերով։ քարուկիր շինեալ են ու կ'շինուին։

Տիֆլիս կեդրոն է բոլոր յարակից Կովկասու վաճառականութեան։ քանզի այս քաղաքի վաճառականքը առուտուր կ'ընեն։ Ռուսաստանի մի քանի Եւրոպական ծովեզերեայ քաղաքաց՝ այսինքն Կ. Պոլսոյ և Մարսիլիոյ հետ։ իսկ Ասիական քաղաքաց հետ։ Պարսկաստանի ու Տաճկաստանի ձեռամբ կ'գործադրեն։

Ռուսաստանէն կ'գայ ի Թիֆլիս, տասուի (չուխա), բամբակեղէն զգեստք։ ծանրագին և հասարակ մուշտակներ, որոց մէջ ենոթ բուռած ձմեռնային մուշտակը, գեղցիկ է տեսուն և տաք պահող, թուղթ, ապակի, հայելի, փայտակայ ու երկաթեայ դուռնաւոր արկղներ, զանազան տեսակ արծաթեայ ու պղնձէ պատկերներ եկեղեցեաց համար, ամէն տեսակ զէնք, երկաթ, Սամովար, լապտերներ, պղնձէ, խեցեղէն և յաղճապակի (փոքրիկներ) անօթներ, կոշիկ սեաւ կաշի, խոզի մազ, խոզանակ (ֆրչա կամ քէֆէ) բնաճարպ (սպարմացէթ), կօշիկներ։

Ռուսաստանէն ներս մտած վաճառաց որքանութիւնը կարելի է հաշուել մինչև 7,000,000 արծաթ ռուպլի (քառապն)։

Տիֆլիսէն ելած և Ռուսաստան փոխադրուած վաճառք են մեծաքս 2,000,000 արծաթ ռուպլի արժողութեամբ։ բամբակ և բուրդ։ 5,000,000 ռուպլի։

Եւրոպական վաճառք։ Կ. Պոլիսէն կ'մտնեն ի Թիֆլիս փոթի ճանապարհաւ ուր այժմ շինուած է երկաթուղի մինչև ի Թիֆլիս։ այս վաճառք են պատրաստ ասուի զգեստք և սպիտակ շապիկներ Եւրոպական ձևով կարուած։ այլ և այլ ձեռագործ վաճառք (մանիֆաքթիւռ), ճերմակ ու նկարատիպ կտաւք (խասա, մատամալոշ և պատմա) սուրճ, շաքար, ռոմ, դաբեղեր, լուցակ (Ֆիֆիտ) պղպեղ (չէրիք), թմանդ կամ թիմէրն (թէնէքէ), բնաճարպ (սպարմացէթ), խունկ (թարչին) պղպեղ, մեխակ (քարանֆիլ) զանազան տեսակ Տաճկաստանի ծխելիք (թութունն), այն է Ցրապիզոն։ Սամսուն, Կէօպէք, տիպ և խրբմա, կապ ծծումբ, լուսիկիկ, պատրաստ կօշիկներ, համբիչք որ Թիֆլիսեցիք կ'ընեն (տերոզորմեա), սոգա

ամենուն գումարն ևս կ'հասնի 2,000,000 ռուպլի։

Ցուցաք երկիրներէ կարարանավ եկած Ապրանքն վաճառաց մուտքն է 1,000,000 ռուպլի։ Պարապատաստէն կ'գայ թէ Էրզրում և ուրիշ տեսակ ծանրագին ջուխտ, մետաքս ու մետաքսեայ կերպասներ, Նկարատիպ կտաւներ բամբակ, էպրուշում, դանակ։ (ապրշումէ գործուած տեսակ մի կերպաս)։ Գունաւորագի սարթեր, զանազան գորգեր (խալի), կարմիր կաշի, գոլոր (մագի), քրքում (զաֆրան), գեղնակոճ (գեղնի զէնճէֆիլ)։ փրսատաղ, արմատ, նուշ, չամիչ, խինա, բերուզա (կապոյտ ազնիւ քար) և ուրիշ գոհարներ։

Արարատայ գաւառէն կ'գայ բամբակ, բուրդ ցորեն։ ուտելու և վառելու ձէթ, չոր թութ, ծիրան։ չոր ջրոր, ճերմակ ու հասարակ աղ, եղջերուի և կովու եղջուրք։

Ջերքէզատանէն կ'գայ, հասարակ չալեղենները, բուրդ, մաշլաք, կաղին (ֆընտուխ) ու չագանակ։

Տփխիս պաշար կ'ստանայ գինքը շրջապատող գիւղերէն ու գաւառներէն. ղոր «ոլենակ Քարթլ ու Շիրակայ արդասաւոր գաւառք կ'մատակարարեն ցորեն և ալիւր յորմէ կ'սպառէ քաղաքը 200,000 չէրտվիրտ (իւրաքանչիւր չէրտվիրտ կ'բռվանդակէ 90 «քիսկայ) որ կ'նշանակէ 18,000,000 «քիսկայ) Երևանայ երկիրը կ'տայ առատ բրինձ. կաթէթն ու գանձակը դինի։ յորմէ կ'սպառուի տարեկան մինչև 8 միլիոն ռուբլի չիշ (Պ«թիլկա)։

Ի Թիֆլիս վաճառի թաղին մօտ, ամեն կիրակէ մի ասնավաճառ կ'կազմուի, զոր կանուանեն Եառմուրքա, ուր գիւղերէն ու շրջակայ տեղերէն կ'գայ ամեն տեսակ վաճառք։

Ըստ քաղաքական գրութեան, Տփխիս կը բաժանի ի 4 թաղ գլխաւոր. Ա. Գարէթուպան, Հին քաղաք, Հալլապար և Դուքիա։ ունի 3 քաղաքագուռն, այն է Մոսկուայի, Երևանայ և կախէթի։

Քաղաքին հարաւակողմն եղած մանաւոր թաղերն են, Թացմինտա, Սարիոնէնց, Կալավինսքի, Սօլօլակ, Երևանցւոց թաղ, Վանքի թաղ Օրթաճալա, Խարբուխ և Ցափիթաղ։

Հիւսիսակողմն թաղերն են, Նէմէնձքի կաղն, Դուքիա, Հալլապար, Նաւթլուխ։ Զուխուրէթ, և Սաղ։

Տփխիսի շուկայք կ'համարուին 13. Ալէքսանդրեան, Նիքոլաեան, Երևանայ, Փօշտայի, Քարէթուպանայ, Թաթարաց հրապարակ (մէյտան), Ապտապաթայ, Նահանգական, Նահանգական (պէսքի) Սէննայա, Գէորգեան, Կախէթի շուկայ, և ցորէնի շուկայ։

Կամուրջք կ'համարուին 8, որոց կը կուրգեսոյ վրայ է, մին քաղաքէն ի վերսի հեւաւորութեամբ՝ վերագետ անուն ջրոյ վրայ, միւսը հանքային աղբիւրներուն դառ ի վերը չինեալ, որ կ'ըսուի բաղանեաց կամուրջ. երկուքն ևս Քարանդինի և Մուխրան իշխանի անուամբ չինեալ կամուրջներն են։

Կուր գետոյ ձախ ափանց վրայ կ'բարձրանայ

ուղղակի հանդէպ քաղաքին Մախաթ լերան մերկ գագաթը, որ ունի 2,000 անգղական ոտնաչափ բարձրութիւն։

Տֆիլիսի Ջրոց պաշարը կուր գետ կ'մատակարարէ առատութեամբ։ որ կ'անցնի ամբողջ քաղաքի մէջ տեղէն։ Այս գետոյն ջուրը մանաւանդ կ'պղտորի գարնան եղանակին, բայց ըստ կարծեաց հասարակաց առողջարար է և թեթև։ Ցուներուն ու բնակչաց ջուրերը ջրկիրները կ'հասցընեն երիվարներով, մի զոյգ սեաւ կաշիէ տիկերու մէջ լցուցած որ կ'քաշուի թաւլուխ, որպէս իւրաքանչիւրը կ'պարունակէ 14 վէտրօ, այսինքն 84 օքայ ջուր, զի մի վէտրօն է 6 օքայ։ Բայց ի կուր գետոյ, քաղաքին մէջ կայ ևս մի լճակ, 444 ջրհորք ընդհանրապէս ապի և դառն, 59 աւազաններ և 17 շատուններ։

Նաւթլուխի թաղին մէջ, Նաւթի 6 բնական ջրհորներ կան, որ ջրոց հետ խառն կ'բղխին։ և մասնաւոր գործարանի մէջ դատելով կ'գործածուին կարի տեղ գրեթէ առ հասարակ վառելու համար։ Այս նաւթը ճերմակ գոյն մ'ունի և մի տեսակ հեղուկ կաղ է որոյ լոյսն է խիստ ճերմակ ու փայլուն։

Թիֆլիսի գեղեցիկ պարտէզներն են, փոխարքայ (Նամէսնիկ) Մի.քայէլ մեծ իշխանի յետ կոչս նորաչէն պալատին ընդարձակ պարտեզը, որպէս դէմն է քաղաքապահ գրաց զինուորատունը (քարանչանեն) և Մի.իրմանեան հայ վաճառականի նիւրպական ձեռով կառուցած նորաշէն մեծ ու փառաւոր ապարանքն է։

Այս տեղ Պաւլովա անուն զրօսարանի փողոցին աջ կողմը երկաթեայ վանդակներէ ներս, Ադեքսանդրի հրապարակ (Աղեքսանդրովսքի փղոնթ) գեղեցիկ պարտեզը շինեալ է, ուր կան ուղիղ, կանոնաւոր ու ծառազարդ ճանապարհներ, որոյ մէջ դրուած են հանգստանալու համար նստարաններ, կայ նաև երկու կանգուն խորութեամբ բոլորաձև քարաշէն մի մեծ աւազան, որոյ տրամագիծն է 20 կանգուն և շրջապատը 60։ Պարտեզին մէջ ամառն ամէն կիրակի երեկոյին զինուորական նուագարաններ կ'երգեն զինուորք։ առ ի զուարճութիւն հասարակաց։

Նէմէնցի կալօն թաղին մէջ եղած լայն ու ոտօք երեք քառորդ երկայնութեամբ շինեալ փողոցին երկու կողմերը, դերմանացի գաղթականաց տուներն են, ասոնց փողոցին ծայրը մի դռնէ ներս շինեալ է Պարսից ժամանակին Աբբաս Հայ պաշտանէին յոյժ ընդարձակ պարտեզը որ է կուր գետոյ հիւսիսային եզերքը մի տափարակ գետնոյ վրայ դեռեղեալ, որոյ ամէն կողմերէն վայրի ու պղտաստ անհամար ծառոց անտառակներ կ'ներկայանան։ Սոյն պարտէզին ճանապարհները ուղիղ են ու երկայն և խիստ կանոնաւոր շինեալ, որ ծածկեալ են ու զարդարեալ խաղողի որթերով, կառուցեալ է նաև կուր գետոյ վրայ մի հանդիստարան, ուր ամառը նուագարանները կ'երգեն և ամէն կարգի անձինք կ'գնեմեն այս փառաւոր զրօսավայրը։

Թիֆլիսի բնակիչք մեծաւ մասամբ կ'պատ-

ային վաճառականութեան և արհեստից, վաճառականութիւնը մանաւանդ առաւել ևս ծաղկեալ է հայոց մէջ։ Մատադրութեան արժան է որ 3500 արհեստաւորաց 3000ի մօտ հայք են։ Հեռագրաքրքրական առարկայ է դիտանալ նաև թէ, ինչպէս յառաջները տեղական լեզուն վրացերէնն է եղեր նոյնպէս այժմ հայերէն լեզուն սկսեր է ընդհանրանալ, և բնակչաց մեծ մասը Թուսերէն ևս կը բնան խօսիլ, այսուամենայնիւ վրացերէնն ևս, բաց ի Թուսներէն չկայ չգիտցող մարդ։

Թիֆլիսի քաղաքական եկամուտն էր ի 1866 ամի 300,000 արծաթ ռուբլի իսկ ծախքն էր 24,000 արծաթի ռուբլի։

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Կովկասու կուսակալութեան պաշտօնական դիւանները կ՝բաժանին բարձր պաշտօնատունց (Տէփառթամէնթ) և իւրաքանչիւր պաշտօնատուն ունի առանձին վերատեսուչ։

Ա. Եկամտոց պաշտօնատուն (Ֆինանսօվոյ Տէփառթամէնթ)։

Բ. Ընդհանուր դինուորական վարչութիւն Կովկասու (Կլաւնի ըշտապ կաքավկասկովո ուսմի)։

Գ. Դատարանի կամ արդարութեան (Յուստիցիոնի Տէփառթամէնթ)։

Դ. Աբքունի կալուածոց, (Տէփառթամէնթ կոսուտարթ վէնի ի մուշտաս չէսով)։

Զ. Հաշուետեսութեան (Քոնթռոլնը Տէփառթամէնթ)։

Է. Արտաքին իրաց կամ դեսպանագիտական (Տիպլոմատիչեսքաեա Քանձէլար)։

Գանձարանաց հաշուետուն (Կաղէնտարա պատատ) որ կ՝ստուգէ բոլոր գանձարանաց հաշիւները և կ՝հրատարակէ ընդհանուր քաղաք կան ծախուց մատակարարութիւնը։

Քաղաքական դատարան (Կուաժատան սքէ պաճլատա)։

Քրէական յանձաւորաց դատարան (Ուկլովնեա պալատա)։

Ոստիկանի Տեսչութիւն (Փոլիցիի) որ կ՝բաժանի չորս թաղապետութեան (Զաստ)։

Թեմամարդութիւն հասարակաց (այն է հիւանդասոցի և աղքատանոցի (Փուբլաս ապաչէատ արվէնտաս փուրդէնիա), որոյ պաշտօնն է ստակ տալ արքունական տօկասիւ։

Ուսուցական դրամատնոյ (Բանկաս ուսնք)

Քաղաքապետի վարչութիւն (կը օտկոյէ փուտլինկէ), որոյ կառավարութիւնը մի քաղաքապետի ձեռքն է և կ՝բաժանի։

Արեաց և որդոց Հոգատարութիւն (Միրօթվոկայա ա ելեկա)։

Տանց և բնակութեանց յանձնաժողով (Բուտոչ խուտայա կամիսա)։

Ընդհանուր ժողով, (Օգսէչէ սապրանկէ)։

Ցոյնկոյս կոմկասա աբքունի ուսումնարանաց Տեսչութիւն, (Ինսպէկթոռ կազէնների Ուչէբնիխ Զավէդենէ Կավկասիխ)։

Տեսչութիւն ընդհանուր կովկասու ամրոցաց շինութեանց։ (Ը. քառաժոյկ ինժենիէռ Նոյէ ուսվառվլենիյէ)։

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՔ

Տփխիսի մէջ կան երկու դպրոց արու աշակերտաց համար (Կիմնազ. քլասիք) ուր կ'ուսանին հին լեզուք և դիտութիւնք տեսականապէս, և կան 600ի չափ աշակերտք, որոց 400ը հայք են, իսկ միւսները ռուսք, վիրք և թաւրքք։ (Կիմնազ ռէալ)։ ուր կ'ուսանին նոր լեզուք և ուրիշ գիտութիւնք գործնականապէս։

Կայ նաև երկրաչափական դպրոց, (Մէժվայա ըշքոլա)։

Տէր Յակոբեանց ուսումնարան (Զասրնայէ կիմնազի)։

Սուրբ Նինոսի դպրոցի աղջկանց (Ինըսթիդուտ սրբէյանոյ Նինոնի)։

Հոգևորական դպրոց (Սիմինարի)։

Օրիորդաց վարժարան, (Ժէնձկայա կիմնազիա

Կան ևս ուրիշ մասնաւոր դպրոցներ, որոց գլխաւորն է Շանշեան հայ երևելի ուսումնական և քաջ կրօնագէտ դասատուին ուսումնարանը, որ կ'ուսուցանէ բան մեծի մասին ազգային աշակերտաց, Հայերէն, Ռուսերէն, Գաղիերէն, Սըրբազան և ազգային պատմութիւն, կրօնագիտութիւն և արտաքին դասատուաց մինչև այլ և այլ ուսմունք։

Մծխեթա, Թիֆլիսէն ունի 22 վերստ հեռաւորութիւն։ ուր կ'խառնուի Արակուայ գետը Կուր գետոյ հետ և ուր չինեալ է Մծխեթա աւանը։

Այս տեղ սկսաւ Վրաստանի քրիստոնէութիւնը 318 թուականին Նունեայ կուսի քարոզութեամբ, որ համոզեց զՄիհրան թագաւոր, ընդունել զմկրտութիւն Մծխեթայ բնակչօք հանդերձ։ Աւանդութեանց հետևելով, մինչև 499 թուականը սա մայրաքաղաք էր Վրաստանի թագաւորութեան։ Յայսմ ամի, թագաւորն Տաչի՝ որդի Կորկ-Արսլանայ, փոխադրեց իւր մայրաքաղաքն ի Նորաչէն Տփխիս։ իսկ ի Մծխեթա հիմնեց բնակութեան տեղի Կաթուղիկոսն ընդհանուր Վրաստանի։ Այժմ Մծխեթա է փոքրիկ աւան, որոյ մէջ կայ սակաւ ինչ շինութիւնք և բնակիչք։ Նշանաւոր շինութեանց կարգին կ'պատկանի հին Մծխեթայ վանքը։ Եկեղեցի յանուն սրբոյ Խաչի՝ Արակուայ գետոյ միւս կողմն ելբան վրայ շինեալ և մի աշտարակի աւերակներ քաղաքի հիւսիսակողմն բարձր ելբան վրայ։

Մծխեթայ վանքը կառուցեալ է ի պատիւ երկոտասան Առաքելոց։ ըստ իւր հնութեան և գեղեցկութեան է առանձին մտադրութեան արժանի։ Ըստ վրաց տարեգրութեանց չինեցաւ այս վանք Միհրան թագաւորի ձեռօք։ որ էր առաջին քրիստոնեայ թագաւոր, վրաց Խոսրովիան զարէն՝ 1328 թուականի։ Եկեղեցին էր յառաջ փայտաշէն որ օծեցաւ Եւստաթէոս Անտիոքայ պատրիարքէն, որ Յուարկուած էր Մեծն Կոն-

տանդիանսի կողմանէ ի Վրաստան, քրիստոնէական կրօնն ընդունող նորադարձ քրիստոնէից։ Զինի 50 ամաց այս փայտաշէն տաճարը։ Վրաց Տրդատայ արքայի թոռան Միհրանայ ձեռօք փոխեցաւ ի քարաշէն։

Երրորդ դարուն Ղ։ երբ այս տաճարը ի հնութենէ կործանեցաւ, Վախթանկ Կորկ-Աղբրան թագաւորն, կառոյց այս տեղոյն վրայ հայակապ եկեղեցի և որոշեց Վրացի արքայից տեղի թագադրութեան։

Վախթանկ Կորկ-Աղբրանայ թագաւորելու ժամանակը, Վրաստանեայց եկեղեցին մինչև մի ատաՀման հպատակեալ էր Անտիոքայ պատրիարքին, բայց յետոյմանց եւ խառնութեանց ժամանակ բաժանեցաւ անկէ, և Պետրոս Արքեպիսկոպոսն ընդունեց Աղաթոքիպալս՝ այն է ինքնագլուխ տիրոյն և չենից Մծխեթա քաղաքն Առաքելական եկեղեցի Մծխեթայ Արքեպիսկոպոսաց համար։ այս տաճարը 1348 թուականին կործանեցաւ երկրաշարժէ և վերանորոգեցաւ նոյն տարին կիւրիկի թագաւորի ձեռօք։ բայց զինի 100 ամաց Լենկ-Թէմուր տիրապետողին հրամանատա ի հիմանց քակեցաւ։ Ի 15րդ։ դարուն, Աղեքսանդր թագաւոր վերստին կառոյց զայն այն ձեւով, որ մինչև ցայժմ կ'ներկայանայ մեզ։

Ի 16րդ։ դարուն կործանեցաւ տաճարին գրքերեր և վերանորոգեցաւ վաղչդաղի Մարեամ թագուհւոյ ձեռօք, որ էր տիկին մահմեդական Թուրքերոնց, որ թագաւորեց ի Վրաստան 1634

թուականին մինչև 1658։ Յետ այնորիկ երկրորդ անգամ ևս վերանորոգեցաւ այս տաճարը։ Մշծխեթա տաճարն այնքան զինեալ է որպատաշ քարերով։ որոյ արտաքին կողմն զարդարեալ է զանազան վարպետութեամբ։ Շէնքին բարձրութիւնն է 28, լայնութիւնը 15, իսկ երկայնութիւնը 35 սաժէն (մի սաժէնն է 3 կանգուն)։ Տաճարը բաժնուած է պարեզրով երեք մասն, հարաւային կողմը 2 սիներու մէջ ունի 7 ուռնպատի լայնութեամբ մի քառանկիւնի տեղ, որ Հասանելով եկեղեցւոյ կամարին բարձրութեան, կ'վերջանայ թեթև մի ատենքով այս սեանն առանձին կեցած է շրջապատեալ գանգակաւ, որոյ մէջ կայ մի փոքրիկ ճեղքուած, յորմէ քար աւանդութեան յառաջ կ'բղխի եղեր Միւռոն։ Այս սիւնը նշանաւոր է այն մասին, որ նորա տակը՝ ինչպէս կ'ըսէ աւանդութիւնը, ամփոփեալ է Վրաց պատմութեան մէջ յիշատակեալ երեւելի Սիմոնեա, որ իւր եղբայրն Լաճնինէ սատանայ Փրիստոսի փարանկեալ քաղաքին՝ այն է առանց կարգի պատմեաներ։ Ըստ աւանդութեան Թուսական եկեղեցւոյ, այս քաղաքին Շահ-Աբաս տարաւ ի Պարսկաստան և փարեց Վրաստանի վրայ ու այլ և այլ պարգեւներու հետ յուզարկեց առ Գորիա Ցիստորովին կոստանով թագաւորն ռուսաց։ Քրիստոսի քաղաքին տանը, Մշծխեթա տաճարին մէջ, ըստ կարգադրութեան Վրաց եկեղեցւոյ, հաստատեալ է հոկտեմբեր ամսոյ 14 ին թեներկայութիւն բարձրաձիս ամբոխի։ Այս տօնն է Թուսաս-

տան, բառ կարգադրութեան Միքայել Ֆիոտորովիչ թագաւորն և պատրիարգն Ֆիլարէտոս, կ'կատարուի յուլիսի 9ին։ Այս տաճարին մէջ նշանաւոր է իսպիտալը իւր գեղեցիկ վարուած քներով, որ սպառիչ ժամանակի ձեռքէն ազատ՝ մինչեւ ցայժմ կեցած է ամբողջ. սեղանին մօտ ամպիոնի երկու կողմը կան գերեզմանի երկու կափարիչ, որոց ներքև կ'հանգչին Հերակլ և Կիորկի վերջին դժբաղդ թագաւորք Վրաստանի Հերակլ թագաւորին չիրմին մօտ թաղեալ է նորա դուստրը Թեկղե։ Բայց յայտնանէ Մծխեթայ մէջ թաղեալ են թագաւոր Վաղթանկ Կորի-Արսլան, վախճանեալ ի Շրդ. դարու, և արքայուհին Մարիամ թագուհի Բիւսաեմ Մահմետական արքային Լէսան արքայորդին Հերակլ Բ. ի որդին։ Ցեմկենթիոս Կաթուղիկոսն՝ վախճանեալ ի 1788 ամի, և բաղմութիւն մեծամեծ արանց, որոց ձեռքն էր Վրաստանի բանգը, զի չ'լինելով նոցա դամբարանց վրայ արձանագիր կ'մնան մեզ անյայտ։

Մծխեթան 2 վերստ հեռաւորութեամբ, Տփխիսի կողմն հաստատեալ է քարեայ կամուրջն կուր գետոյ վրայ։ Այս կամուրջն առարկայ է ճանապարհորդի հետաքրքրութեան և մտադիր լինելու արժան է, վասն զի չինեալ է սա նոյն իսկ տեղւոյն վրայ, ուր յառաջագոյն էր հռովմայեցւոց կամուրջն որ չնչած էր մեծն Պոմպէոս, դմիհրդատ արքային Պոնտոսի հալածելու ժամանակը բայց հնութեան պատճառաւ, Ռուսիոյ իշխանութիւնը քանդեց դայն բոլորովին։

Այժմեան կամուրջը 1839 թուականին սկսաւ չինուիլ և վերջացաւ ի 1841ին Վրաստանի գլխաւոր կառավարիչ կալավինի ժամանակ։ Այս կամուրջն ունի 3 կամար, մէկն է մեծ սաչտ քարէ 12 սաժէն ընդարձակութեամբ, երկու աղեւսաչէն կամարներն են փոքր՝ մէկը 5 իսկ միւսը 3 սաժէն։ Մեծ կամարը դեռ ոչն մեծ առաջքին վրայ ձգուած է, միւս երկուքն ևս կողմնակի գետոյն առաջքներուն վրայ։ ուր դարման և ոչնան ժամանակներ ջուր կ'տեսնուի. սոյն կամուրջի չինութեան համար 55 հազար ռուպլի ծախք եղած է տէրութեան գանձարանէն։

Մծխեթայ մէջ մի հայոց եկեղեցի կայ և 100 էն աւելի հայազգի բնակիչներ ունի։ եկեղեցին չինեալ է յիշատակաց արժանի Լիֆլենտանց հայ իշխանի ծախիւք։ ինքը նաև հնարած է կտակաւ Թիֆլիսի Ներսէսեան դպրոցին 60,000 ռուպլի։

Տփխիսի նահանգական կուսակալութիւնն ունի իւր տեսչութեան ներքև յետագայ գաւառները, այն է Տփխիս, Գորի, Թէլաւ, Սղնախ և Լիլիդավէտպօլիս։

Ի 1876 թուականի վերջին վիճակագրական հաշուով, Տփխիսի մէջ 170 հազար բնակիչք կը հաստատին։

Տփխիսի մի քանի անուանի գիւղօրէից վրայ, գաւառական քաղաքաց ստորագրութեանէն զկնի արժան է աւանդել հարկ եղած հետաքրքրական տեղեկութիւնք իւրաքանչ բնական գրից և այլ հանգամանաց նկատմամբ։

Տփխիսէն մինչև Մառան սուրհանդակի կայա-

բանաց անուանք եւ մէկմէկի ունեցած հեռաւորութիւնին վերստի (*) հաշուով։

Տիխնէն մինչեւ Ցնտա	վերստ	22
Ցնտաէն Նիկիս	»	13
Նիկիսէն Ամարբարակ	»	18
Ամարբարակէն Գորի	»	$21\frac{1}{4}$
Գորիէն Գարգարի	»	$21\frac{1}{2}$
Գարգարիէն Սուրամ	»	$22\frac{1}{2}$
Սուրամէն Մօրիս	»	29
Մօրիսէն Բիրագրիկ	»	17
Բիրագրիկէն Կվէրկլ	»	$22\frac{1}{3}$
Կվէրկլէն Սիմոնէտա	»	19
Սիմոնէտայէն Քուլթայիս	»	$18\frac{1}{3}$
Քուլթայիսէն մինչեւ Մարան երկու կարան	»	35
		$263\frac{1}{3}$

Մարան գիւղէն ճանապարհորդք կ'նստին վագր շրջենաներ եւ փասիս այն է Թիֆլիս դեռոյ հասանայ հետ կ'ելնեն երկրորդ ժամու մէջ ի Փոթի որոյ դեռաբերանէն Թիֆլիս դեռոյ կ'իջափի Ցնտա։ մինչեւ Փոթին մինչեւ Մարան շրջենաւք կ'տանին 10 ժամու մէջ գնալով հանապազ հասանայ։

Բ. Գորի է դաւառական քաղաք Տիխիսի կուսակալութեան, կ'գտնուի 41° 38′ հիւսիսային լայնութեան և 61° 21′ արևելեան երկայնութեան։ Քաղաքն ինկած է Հարուստ Քարդլայ ձորին մէջ

(*) Թարգմանիչը վերստ հաւասար է 1500 կանգունի։

և հաստատուած է այն տեղ, ուր կուր գետաք կ'ընդունէ իւր մէջ Լեխսվա և Ցեհնուտա գետակներն։ Քաղաքին նիստը կ'բարձրանայ ծովամակերևույթէն 1800 անդրկական ոտնայտի։ Վրայ տարեգրութեանց մէջ հրդ դարուն կ'ինչուն տաղջին անդամ Գորիի վրայ, այս ժամանակին պէտք է վերագրել սոյն քաղաքի հիմնարկութիւնը։ Աւանդութեանց նկատմամբ։ այս քաղաքն առաջին անդամ ամրացուալ է եղեր, իսկ վերջին ժամանակները քանիցս անդամ վերանորոգուեր է։ վերջին ամրացի շինութիւնը Հերակլ Երդ. էն կը կարծուի, որ հրաշինուք բերդն ամրացոյց։ այս արքայէն կ'կարծուի նաև քաղաքի հին տաճարին վերանորոգութիւնը։

Գորիէն դուրս եկեղու ժամանակ Լեխսվա գետոյն մօտ կ'բարձրանայ առանձին ահագին տպառաժ մի, որոյ վրայ կ'պատկերանայ հին բերդը քարեայ հաստ սրմերով շրջապատուած, որ տեղ տեղ քայքայուած է։ Այս բերդը կ'ծառայէր իբրև ապաստանարան թշնամի ազգաց յարձակմանց։ և քան տարեգրութեանց, սոյն բերդը ծառայէր է նաև Բիւզանդիոյ կայսեր։ Հերակլին համար իբրև շանմարան պատերազմական դրութիւններու։ երբ նա կ'պատերազմէր Պարսկաց հետ։ Բագրատ Բ. վրայ արքային ժամանակը Գորիի բերդին մէջ գտնվեցան հայ բնակիչք։ Վրաստան երբ անցաւ Ռուսիոյ կառավարութեան այն օրէն սկսեալ Գորի եղած է դաւառական քաղաք և այնպէս կ'տես է մինչև ցայժմ։ Գորի գաւառի կրմարէտ դիրքին մէջ կ'գտնուի միայն

ապակիի գործարան բոլոր կովկասեան երկիրներուն համար, ուր կ'շինուին շիշեր, պատուհանի ապակիներ, գեղարէջց և այլեայլ բաներու ծառայող անօթներ։

Գոլի գաւառը անտառային ձորի մի մէջ, Տփխիսէն 142 վերստ հեռաւորութիւն ունի և Սուրամայ իշխանէն 6 վերստ հեռի։ Կուր գետոյ ուղղութեամբն Ալաչէնայի ճանապարհին վրայ կ'կենայ Պոգժօմ անուն փոքրիկ գիւղը հանդայնի ջուրերով։ այս գեղեցիկ ձորին մէջ բուսական առատութիւն մի կ'տեսնուի և գեղեցիկներն մինչև լերան գագաթն անտառով ծածկեալ է։ Բոյժ կարելոր է այս անտառի հարստութիւնը Տփխիսի համար, քանզի առաւելապէս այս տեղէն շինութեան շինութեանց համար տնագին գերաններ լատատրայա (սալ) կապուած կուր գետոյ վրայէն անցնելով։ Շրջակայ ծառաղարդ ու անտառային տեղեաց չքեղ հայեցուածքը, շարունակ լեռներով և վիհերով կ'ընդարձակուն ալաւը, վայրերի և միանդամայն բանաստեղծական սիրուն տեսան մը ներկայացնելով։ Երբ քայլ մ' յառաջ երթցուի և այն ինչ անտառաց մէջ շրջան մի լինի յառաջ կոյս և յետ կոյս նոքանոր տեսարաններ կ'բացուին յանկարծ, առհասարակ զարմանագեղ և հրապուրիչ անտառաց մէջ կ'տեսնուի անբոյս և առանձ ծառոց տեղեր անտառներէն շրջապատեալ, ու տեղ տեղ հանդարտ ու ստատուղ ջրեր, ապա սատ և անդ բարձրաբերձ ծառոց անտառներուն մէջ, կ'ծագին սէք ու ահեղագամբունք, որ կ'պատեն ու կ'պատկեն ստեղքանի մի հին վանից ու մենաբանաց աւերակներ։ Այս կորուսեալ գրաման այնչափ ժամանակներ անտարակոյս ճոխ ու մարդաշատ երկիր մ'եղած է եղեր յառաջ քան զմահմետական աշխանք, քանզի այս տեղ կ'պատահի մերթ եղեկեալ արուարձանաց (վարոչ) և մերթ անտառաց խորերն, եկեղեցիք, աղօթարանք կամ տաճարք, որոց ճարտարապետութիւնը կ'յիշեցնեն Բիւզանդեան արհեստին ոսկեղէն ժամանակը։

Կոկիս աշխարհի այժմեան կուսակալ Միքայէլ մեծ իշխանը, որ բախտաւոր հանդիսացաւ զՊոգժօմ, անդ կառուցանելով իւր ամառնային ապարանք, գժուարին էր այս երկանեկի տեղին աւերի գեղեցիկն բնարել։ Բայց ի զօրացուցիչ ջրոց և օդոյն ու կլիմային առողջարար օդտակարութիւններէն և չորջանակի վայրած գեղեցկութիւններէն, այս տեղ այսօր Տփխիսի ու Մեաւ ծովու մերձենալով կ'միանայ երկամուղեա։ Այս եւս կնամբ յաւելալ թէ, Պոգժօմի լերինք ինչպէս որ նկարչական տեսարաններով զարդարեալ կ'ներկայանան ապա, նոյնպէս և են որսաչատ և թէ մեծ Դուքքը ճարտար որսորդ է։ Իւր բնակութիւնը չինականաց (գեղացւոց) ընտանեկան տնակի ձեւն ունենալով, թէև անկանոն է, բայց Պերճ ու վայելչ է։ Այս բնակութիւնն հասատատեալ է Խաւվ-Զիսալի անուն ձորի մուտքին և կուր գետոյ ձախ եղերաց վրայ՝ հին Պոգժօմի դէմը, որով կ'հաղորդակցի մի քարեայ կամուրջ-

ջով, լեցուցանելով (տայֆեմաք) իւր թիկունքն դրեթէ անմիջապէս անտառախիտ բարձրութեանց։ որոց վրայ ի՛նեմուն վարէն, լեռնայոյներս (Եռազան կամ տաղ դարտասի) զբօսանքը։ Գեղջուկ հաստակութիւնը դրեալուր ընտիրութիւն ընդարձակ չէնքէն բաժանեալ, կ՚բռնանդակէ մեծ Դաւթի գաշտանակաց օթևաններէն զատ շատ յարկեր ու դասիկներ լու կահէք և կարասեօք զարդարեալ, պատասուր ճանապարհորդաց համար։ Զորին սիրիրէն 24 վերստ երկայնութեամբ չնեալ են մի քանի տնակներ ևս, զինուորական դաղթականաց համար զինուորանոց, աւրքանի տուն հանքային ջրոց այցելութեան եկող հիւանդաց համար, մի քանի դիներ վաճառաց կրպակներ և բլրոյն վրայ Ցանկաց հին ամրոցի մ՚ աւերակներ, կուր գետոց եզերքը չնեալ է նաև երկու վայտաշէն տուն, և բլրոց ու դաշտավայրոց վրայ ոտգոյն ընկուզենի ծառերով զարդարուած կ՚երևին։ Կուր գետոց միւս ափան վրայ մի վերստ հեռաւորութեամբ փոքրիկ գետակի մը վրայ կան երկու հանքային աղբիւրք։ որոց առաջը կ՚նմանի խոր փէնի մը և այն ատենեանի մեռ է ոյն ձորակի հորիզոնը, որ բաւական է փոքր ամպ մը վէնին ուրաղ վայրերը ծածկել ու նեռմայրնել։ Գոնժօմի ածխային թթուտ և ծծմբային ածխ (փոխոտ) աղբիւրներն արդէն ի վաղ ժամանակաց հետէ քաղաքանօթէին իւրեանց առաջարար զօրութեամբ։ ուր ոչ սատանի թագաւորաց ժամանակ հիւանդներ

դերթային յայցելութիւն, ապայն մահմեդականներէ ու լեռնային աւազակներէ մեծ երկիւղ կրելոյ։ Հին փոյտաչէն աւազանին հետքը գտեալ կ՚երևային մինչև 1836 թուականը։ կովկասեան բանակի զօրավար կարգին ի 1842 ամի, այս ջրերով բժկուեցաւ։ Նոյն ժամանակը շինուեցաւ տարեկ ազբիւրին չէնքը և երկու փոյտաչէն աւազաններն ու տունը, զինուորանոցը և մի քանի զինուորաց տնակները։ Այս ազբիւրը կոչուած է կասարիներեան՝ ի միջատակ կարգին զօրարի տեսանոյն։ զեռեռեալ է անդ մի կարծր քարէ արձան վարելուչ արձանագրութեամբ։ Ածխային թթուտ միւս ազբիւրն, երբէ կարտաշնէչ չափաղանց գազ (կաղ) և կ՚երևի եռալու պէս, որոյ ջերմութեան աստիճանն է ռէոմուրի 24°, և հարիւր թէ զգալի է իւր ծծմբային ջրամէն հոտաբուլաց ջրոյ որքանութիւնը 1 ժամու մէջ 60 վերստի կ՚հանի։ ածխային թթուտ ու նոթրոնը (կիւերչիլէ) ջրին ներքև կ՚մնայ և բան կարեւոր Վիլիմն բժշկի նորա կ՚ընծայեն փոքր ինչ նմանութիւն նիրոպէտան հանքային աղբիւրին ի Փիսթիկորա։ Գոնժօմեան տարեալ ազբիւրը իւր մասամբ բաղադրութեամբ յայնիոյս Կովկասու լաւագոյն ազբիւրներէն մէկն է։ Ջրին յատկութիւնը բարեխառն է բայց թոյլ ու տարբ կարգութիւն ունեցող մարդկանց համար տանանելի կ՚երևի, վասնզորոյ աւանդեին մէջ տարբցուցած լուր կ՚աւելցնեն։ Ակէ դուռ։ Գոնժօմի մէջ ուրիշ յատկութիւն ունեցող ջուր մի ևս կ՚գտնուի, այն է երկաթային, ած-

խային թթուտի դիրտ թողով տակը, որոյ բա-
բերառնութիւնն է 17°։ Այս տեղոյ զինուորա-
կան բնակիչք կ'մատուցանեն այդեղուց զոր ինչ
կարեւոր է, այսինքն բնակութիւն, պաշար եւն։

Գորիի բնակչաց թիւն է 3469 արու, և 2396
էգ։ Իսկ Գորի գաւառական բնակչաց թիւն է
66935 արու։ և 55724 էգ։

Գ. Սբզնախ, է գաւառական քաղաք Տփխիսի
կուսակալութեան 101 վերստ հեռաւորութեամբ
ի նահանգական քաղաք է։ և չինեալ է Ալազան
գետոյ աջ եղերքը՝ բլրոյին զուտ ի վայրի վրայ՝
նուագրիա լերին ստորոտը, որ կ'բարձրանայ ծո-
վու մակերևոյթէն ըստ չափման գերմանացի Ապիս
անուն ակաթեմանի 2844 անդ դիական ոտնաչափ։
Քաղաքին նիստը գեղեցիկ է մի բարձրաւան-
գակի վրայ հաստատեալ և իւր բարձրութեամբ
շատ տեղերու վրայ կ'նայի, և քաղաքին գիրքը
երեք կողմանէ լեռներէն յառաջ մղուած է,
առաւելապէս արևմտեան կողմանէ, իսկ արևել-
քէն բոլորովին բաց է։ լերան ստորոտէն սկսեալ
կ'տարածի Ալազանեան չքեղ ձորը, որ ունի 40
վերստ դրամագիծ, որոյ չուրքը կոլասեան լե-
ռանց գլխաւոր շղթայները կ'զարդարեն։ Զորին
տեսարանը շատ փառաւոր է և թերևս յայնկոյս
քաղաքաց և ոչ մէկը կարող է մրցել նորա գե-
ղեցկութեան ու ճոխութեան հետ։ Քաղաքին
բնական գիրքն ամեն կողմանէ կ'ներկայացնէ
աչաց մի հրաշալի պատկեր։ լեռնային օդոյ մաք-
րութիւնը նշանաւոր է և ջրոց յատկութիւնը գե-

ղաղանց որ կ'մատակարարէ ֆ չատրուաններով և
քաղաքն սահմանին վրայ առաւել ևս գմայլելի
գեղեցկութիւն մը կ'ընծայէ նորա. սակայն և ունի
թերութիւններ, այսինքն գիրքն է լեռնային,
մէջի փողոցները զառիվայրերու վրայ և քարա-
կայաներով լցեալ, քաղաքին գետնի տարածու-
թիւնը շատ անենդ է, որ հարիւր թէ 1500 սաժէն
երկայնութիւն ունի և 1000 սաժէն լայնութիւն.
ի հիւսիսոյ սահմանափակեալ է Անտեղեան ձորակը
յարուցեալ և ի հարաւոյ զառիվայրեր և յարուցը-
ցից լերան բարձրանալու ճանապարհը. փանորայ
այս քաղաքն ընդարձակելու երբէք հնար չ'երե-
լիր։ Քաղաքական գետնի սոյն գրից նուազու-
թեան պատճառաւ, բնակիչք չ'ունին տնանոց
համար արօտատեղի և ոչ այգեստան, այլ միայն
պղտաստ ծառոց պարտիզակներ ու այգիներ և
սոքա ևս միայն սեփական կիրառութեանց հա-
մար։ Այս քաղաքն անուանեալ է ի 1840 գաւա-
ռական քաղաք։ Քաղաքին մէջ մոգբութեան
արժանի է հին բերդ, որ չինեալ է ի 1760 ամի՝
վրաց թագաւոր Հերակլ Բ.էն։ Սոյն բերդին մօտ
կ'գտնուի Պոռալի կոչուած հին տաճարը սրբու-
հեոյն Նաունեայ գերեզմանաւ։ Քաղաքի հիմնար-
կութեան ժամանակն հաւիւ կարելի է սահմա-
նել տարեգրական ճշդութեամբ. իսկ եթէ աւան-
դութեանց հաւատ ընծայուի, յայնժամ նորա
հիմնարկութիւնը 16-րդ դարէն անդին պէտք չէ
հեռանալ։ Քաղաքին մէջ կան նորանոր բերդեր,
առաջնոյն հիմնարկութիւնը չ'է յայտնի. 16 սա-

ժէնի չափ օրմոց Ճապոնդը կ'երևին՝ մի քանի աշտարակներով հանդերձ. իսկ եկրորդը պատմաբանական տեղեկութեամբ նշանաւոր է, և այժմ իսկ հնար է գտնել այնպիսի ծերունի անձինք, որք նորա կառուցման համար աշխատած լինին, զի այն բերդի շինութեան առաջին 1760 թուականին կ'վերադրեն, ուրի նշանաւոր բարձրութիւն՝ պատնէշ եւ աշտարակաց, որք մինչև ցարդ պահուած են ամբողջ եւ ունի 7 վերատ շրջապատ։ Քաղաքին մէջ կայ 792 քարաշէն տուներ, եւ 150 փայտաշէն, 200 կրպակ, 40 փողոց 2 փոքրիկ շուկայ եւ 1 իշխան։ Այս քաղաքը մինչ լինելուն պատճառաւ, թաղ թաղ բաժնուած չէ։ Ունի մի քաղաքապետ եւ մի տեսուչ ոստիկանութեան. այս տեղ է գաւառական կառավարութեան պաշտօնատունը, մի գաւառական դատարան եւ մի գաւառական դանձարան, որ յատկացեալ է միանգամայն Թէլավայ եւ Սղնախայ գաւառաց համար, եւ հաստատեալ է Թէլավայ մէջ։

Բնակչաց թիւն է 4517 տղայ եւ 5089 էգ։ Քաղաքին ժողովրդոց 300 ը Ճոնեադաւան են և մնացեալը են Հայք, որ ունին 2 եկեղեցի եւ 1 դպրոց։

Դ. Թէլաւ է գաւառական քաղաք Տֆիխսի կուսակալութեան, 44 վերստ Աղասան գետէն եւ աջ թեւին վրայ կ'դտնուի 41° և 43' հիւսիսային լայնութեան մէջ և 63° և 65' արևելեան երկայնութեան. ծովու մակերևոյթէն կ'բարձրանայ 2262

ոտնագրական ոտնաչափ։ Իսկ Աղասան գետոյ մակերևոյթէն 1375 ոտնաչափ։

Քաղաքը կ'գրաւէ երկու բարձր հրապարակ Ցիվի լերան առաջը՝ որ է շարունակութիւն կաւկասեան լերանց՝ յոյսիներուն և կ'օրոշէ Թէլաւ գաւառը Տֆիխսէն։ Սրբոյնախէն։ և կ'բաժանէ երկու մասն արևելեան ու արևմտեան. որոց առաջինն կոչի հին քաղաք (Տիրիէլ-կալաքին) իսկ երրորդն Թէլաւի։ Այս երկու մասերը բաժանեալ են մեկիրմեկէ մի քարափոտով՝ որ ունի ցամաքեալ գետաձաւակի ձեւ։ եւ անձրեւային հեղեղներէ ձեւացած է Ցիվի լերան դագաթէն հեղուելեալ վար գլորելով։

Այս քաղաքն արևմտեան կողմէն ունի Մածանդարի թաղը որ կ'օրոշուի քաղաքէն վիճով մի հեւսուածքի կողմէն և միանայ կուր որ Ղելաուրի գիւղին հետ. յարևելից ունի դաշտոջայք անտառակներով ծածկեալ. իսկ ի հարաւոյ Ցիվի լերան վրայ բարձրանալը. ճանապարհը. որ 3 վերատ լայնութեամբ ոտնատով ծածկեալ էր յատակոյն և այժմ ծառերն սրմատախիչ եղած են բնակչաց մեծագոյն Թէլաւ Թիֆլիսի հետ հաղորդակցութիւն ունի 2 ճանապարհաւ, այսինքն սուրհանդակաւ (փոստոյ) Սրբոնախ քաղաքի վրայով (155 ½ վերստ հեռաւորութեամբ), և կոմբորդի վրայով, (78 վերստ հեռաւորութեամբ). այս վերջին ճանապարհն ի հնուց անտի կ'ծառայէ միշտ իբրեւ առուտրական ճանապարհ Տֆիխսի փաճառականաբնակաց հա-

մար։ Թէլու քաղաքն Այազան գետայ ձորերէն ամենէն գեղեցիկ տեղը կ'բռնէ, և ընկզմելով թավուտ ընկուզենաց, կաղամախից (ֆընարք) թթենեաց ու այլ և այլ ծառոց և խաղողոյ արթուց մէջ, շատ գեղեցիկ ու շքեղ տեսարան մը կ'պատկերացնէ։ Ցուները մեծաւ մասամբ նոր քաղաքին մէջ շինեալ են Եւրոպական ձևերով, որոց շատերն երկայարկ են և սպիտակացեալ ներքուստ և յարտաքուստ և տանիքները ծածկեալ են կղմինտներով (քիրէմիտ)։ Դալարագեղ այգիք և ծառք շրջապատելով զքաղաքը, չափազանց գեղեցկութեան տեսարաններ կ'ներկայացնեն աչաց։

Բոլոր շուկան ու արհեստաւորաց կրպակները (խանութ) կ'գետնին երկու փողոցներու մէջ որոնք կ'միանան զարդարեալ սիւներով։

Քաղաքին ամեն կողմերէն Այազանայ ձորին գեղեցկագոյն տեսարանը(վիլյաժ) կ'փայլին դէմառ դէմ նկարելով կովկասեան լերանց շղթայիւք զարդարուած պատկերը (Փիթօռէսք), որք կ'բաժանէն Կախէթ գիւղաքաղաքը լեռնականներէն։ Ցեղայն կլիման բարեխառնեալ է Ցիլի լերան զովացուցիչ հովերէն։ Քաղաքն ունի բաւական ջուր ամենի ու բարեհամ. բնակչաց համար, երկրին հողը թէև քարոտ է, բայց բերքերու համար, արգասաւոր ջերմ կլիմայից ներքև եղած երկիրներու պէս է։

Քաղաքը կ'կառաւարուի ոստիկանութեամբ բաց ի քաղաքական վարչութենէ։

Կ'գտնուի նաև գաւառական կառավարչութիւն ու գաւառական դատարան, դանձարան, սուրհանդակարան (փոստատան)։

Քաղաքացիք կ'պարապին ամեն տեսակ առևտրական գործառնութեամբ, մանաւանդ գինեվաճառութեամբ, որք յաճախ կ'փոխադրեն ի Թիֆլիս։ Բնակչաց 5,000ը հայք են և ունին 2 եկեղեցիք, 1 դպրոց և 1 գաւառական արքունի ուսումնարան, որոյ մէջ կ'ուսանին 150 էն աւելի աշակերտք։

Թէլու քաղաքի հիմնադրութիւնը 11դ. դարու վերջերը կ'վերագրուի ըստ տարեգրութեան Վախուշտայ Կիւրիկէ արքային, որ և կ'անուանի առաջին թագաւոր Կախէթի և Երիթիոյ (1)։ Մինչև 17դ. դարը, այս քաղաքի հին պատմութիւններէն ճշգրտապէս յայտնի է միայն թէ, գլխի աւերման կախէթայ, մեծին Շահաբասայ ձեռօք, այս տեղի թագաւորաց մայրաքաղաքներն էս ի միասին, կաէմի ու Թէլու մայրաքա-

(1) Երիթիա կ'կոչուէր Վրաստանի սոյն մասը, որ կ'պարունակէր իւր մէջ այժմեան Թէլուի և Սղղնախա գաւառները, նաև Տիփխա գաւառն Կուր և Առակրա գետոց ձախ ափանց վրայ եղած բաժինը, Թաւշ, Փշաւ և Խեվսուրի ու Ճաւ-Գէլանայոյ գաւառները, Եղիսեան իշխանութեան ներքև եղած երկիրները, որոյ վերջին իշխանն էր, Յանիել Մուլթան՝ ազգաւ Լեղկի զօրավարն Թուսայ, որ յետոյ ապստամբելով, միացաւ Շամիլ-Իմամի հետ ու ձերբակալ եղաւ Նորա հետ ի միասին, Պարեա-Թէեզքի Կակոսու փոխաքաղաքն ձեռօք՝ Վէտտէն բերդն առնելէն վերջը։

ղաք եղան կախեթի թագաւորաց որոցմէ Առչիլ արքայն՝ որդի Վախթանկայ Շահ-Նավազայ, կառոյց Թէլաւ քաղաքին մէջ պալատ և տաճար, որ վերջին ժամանակները վերանորոգեցան Հերակլ Բ.ի ձեռօք շրջապատեալ քարաշէն պարսպօք Հերակլ արքայն այս պալատին մէջ ծնաւ, ուր և աւարտեց իւր կեանքն, յետ փառաւոր և բազմամեայ թագաւորութեան։ Այս պալատը մինչև ցայժմ կանգնուն կեցած է, բայց մեծ մասն աւերակ։ պալատի արևելեան կողմէն 3 սենեակներ վերանորոգեցան ըստ հրամանի կոմկասու փոխարքային՝ Միքսոյել Վարանձով իշխանի։ այս սենեակներուն մէջին մէջ վախճանեցաւ Հերակլ թագաւոր և այս անոյշն իբրև պատմաբանական նշանակ և համոզումն սոյն պալատին ի՛նձայուն։ Շէնքին առաջն մի փոքրիկ այգի կայ, որ նոյնպէս բերդի պարսպին մէջ կ'ելնայ, որոյ հիւսիսային որմերը փլան 30 տարի յառաջ։ Այս բերդը իւր մէջէն պատ մը կ'որոշէ, որով կ'բաժանէր թագաւորին բնակարանը պալատական նախարարաց տուներէն, որոնք բերդին միւս կէս մասին մէջ չինեալ էին։ Այժմ առաջին կէս մասը գրաւուած է արքունի շէնքերով, որ են դանձարան, հոդևոր դպրոց և բանտ։ Այս թագաւորական բերդին դուրսի կողմերը միագծի վրայ պահպանուած են երկու դղեակներ (գուլէ), որոց մէկը կ'պատկանի Վախվախ անուն իշխանաց տոհմին, իսկ միւսը Քարիպալ իշխանաղանց, որոյ մեծ մասն արդէն կործանեալ է։ սոյն դղեակնե-

րէն վերջինը նշանաւոր կ'հանդիսանայ Քարիպալ իշխանաց առանձին եկեղեցեաւ, յանուն անձեռագործ Դատաստակի Փրկչին, ուր Հերակլի մարմինն սպասեց քառասուն օր, մինչև Մծխեթայ արքայից շիրիմներն այլուր փոխադրելու կեաց։ Բոլոր այս երեք դղեակներն այժմեան նոր քաղաքին մէջ են, հնոյն մէջ նշանաւոր շինուածոց կ'վերաբերին։ այս քաղաքի հիմադիր Կիւրիկէ արքային կառուցած ամրոցին մնացորդները, որոցմէ ամբողջ մնացածներն են ամրոցին մէկ քանի արտաքին պարիսպները։ Աւանդութիւնը պահպաներ է միայն, թէ այս քաղաքի հիմնադրին անունը, և թէ նախկին Թէլաւ քաղաքը նորա շրջապատն եղած լինելը, զոր կործանեց Շահապատ իւր յարձակման ժամանակ։ այնուհետև կախեթայ կառավարիչ պարսիկք կը բնակէին այն տեղ։ Մզկիթաց աւերակներուն մնացորդները, ջրանցքներն ու բաղանեաց և տաճկական գերեզմանները, արևմտեան հիւսիսոյ մասին վրայ կ'վկայեն պարսկաց այն ժամանակն այս տեղ լինելին, բայց ճարտարապետութեան մասին չինութիւնք նշանաւոր չեն։ Այս տեղէն պարսկաց հալածուելէն ցկնի հին քաղաքը մնաց դատարկ մինչև 200 տարի, և այս շրջանին մէջ քաղաքը մնաց այն տեղւոյն վրայ, որ կ'ըսուի նոր քաղաք։ իսկ հինը դուռուռ անտառով ծածկուեցաւ։ Սակայն անցեալ դարու վերջերը Խարպաղէն ու Գանձակէն 60 տուն հայազգի գերդաստաններ եկան ի Թէլաւ որոնք իբրեան

պաշտպանութիւնը կորուսէր էին հարստահարութեանց պատճառաւ. ուստի նոցա պարգեւեցաւ հին քաղաքի դրաւած տեղերը, այն ժամանակէն սկսեալ հիմնարկեցան նոր բնակութիւնք, որ օր ըստ օրէ շինուելով, քաղաքի ձեւ ստացած է։ Թէլաւ յայտնի էր ի հնումն իւր բարեխառն կլիմայով և աղբիւրներուն առողջարար ջրերով և թերևս այս ընտիր յատկութիւնք եղած լինին պատճառ հիմնադրել այս տեղ քաղաք և նոյն իսկ իւր անունը ծագեալ է տեղւոյն որպիսութենէն, այսինքն Մըթէլ-ալեանի կ'նշանակէ՝ առողջարար կլիմայ ունեցող երկիր, այս բառը կրճատուելով կ'արտասանուի Թէլաւի. իսկ այս բառին ծագումը Թէլա կոչուած ծառէն առնուած է կ'ըսուի որ անհաւատալի կ'թուի, քանզի այսպիսի ծառ հաղուագիւտ է Թէլաւի մէջ և իւր շրջակայները։ Այժմ Թէլաւ յայնկոյս Կովկասու կողմերուն լաւագոյն մէկ տեղը կ'համարուի, և Ռուսք այս տեղերը տիրելէ ի վեր գաւառական քաղաք եղած է։

Քաղաքին բնակչաց թիւն է 3846 արու և 4387 էք։

Թէլաւ գաւառի բնակչաց թիւն է 23111 արու և 20254 էք։

Ե. Էլիզաւէտպոլիս, է գաւառական քաղաք Տփխիսի կուսակալութեան, որ հիւսիսային լայնութեան 40° 41′ և արևելեան երկայնութեան 61° 53′ի ներքև կ'իյնայ։ Այս քաղաքն յայտնի էր իւր Գանձակ անունով, որ Հայոց թագա-

ւորութեան ժամանակ ճոխ քաղաքներէն մեկն էր, վանորոյ կոչուած է Գանձակ. այս անունը կ'պատկանէր իսկապէս մի փոքրիկ քաղաքի որ կար յառաջ և ունէր 7½ վերստ հեռաւորութիւն այժմեան քաղաքէն։ Ըստ աւանդութեան, Գանձակ Աղեքսանդր Մակեդոնացւոյ ժամանակն ևս կար։ Այս քաղաքի գեղեցկութիւնն ու ճոխութիւնը նախանձելի կ'հանդիսանար ուրիշ ազգաց, այնպէս որ յետ սաստիկ ընդդիմամարտութեան, հարկադրեցաւ վճարել հարկ։ Նուշապէհ թուրք իշխանուհւոյն Ղարապաղի։ Գանձակ անկաւ 1602 թուականին մօտ Շահապաս պարսիկ անօրէն թագաւորին իշխանութեան ներքև, որ ինքը ձգելով քաղաքին յատակագիծը, զայն շինելու համար ահագին դումարներ տուաւ, հրամայեց կանգնել 3 մզկիթ՝ Թամզատէ կոչուած տեղւոյն վրայ, ուր այժմ է կանանչ մզկիթն, բնակիչք աղատ կպցոյց ի հարկէ։ Ի յիշատակ ապագայ սերնդոց քաղաքն անուանեց Ապասապատ, որ կ'նշանակէ, շինեալ յԱպասէ և մանաւանդ այլ և այլ քաղաքաց առաջին անուանեց նաև զԳանձակ բանալի Շիրուանայ։ Այս տնօրէնութիւններէն յետոյ շուտափոյթ գնաց ի Պարսկաստան, կառավարիչ անուանելով զԽան Ապասխուլի, որդի Զիատ Խանայ։ Զկնի մահուան Շահապասայ, սկսան ի Պարսկաստան ներքին խռովութիւնք և Գանձակ անդադար շրջակայ ազգաց յարձակմանց կ'ենթարկուէր։ Յամի 1795 ձմեռթ Գանձակայ խանը, պարսկաց աղա Մէհմէտ խա-

նին հետ յարձակեցաւ Ցիխիսի վրայ աւերեց զայն և բնակչաց մեծ մասը գերի վարեց։

Հերակլ Վրաստանի արքային դիմեց ի Ռուսիա օգնութիւն խնդրել, և Ռուսաց զօրքն ընդ հրամանատարութեամբ կոմս Զուբովի, հասան վաղվաղակի ի Վրաստան։ Այն ինչ Ցերպէնտի, Պաքուայ, Շեքիի և Շիրուանայ խանութիւնք հնազանդեցան ու ճանաչեցին Ռուսաց իշխանութիւնը, Ճավատ խան յուզարկեց բերդին բանալիներն ու յօժարութեամբ առաւ Գանձակն Ռուսաց։ Ռուսաց զօրքն հեռանալին յետոյ, պարսիկ Խան Աղա-Մէհմէտ դարձեալ կ'ցանկար գրաւել Գանձակ քաղաքը։ Բայց Ցիցիանով իշխանը, ի 1804 ամի յետ պարսման առաւ քաղաքն ու միացոյց Ռուսաստանի հետ մշանջենապէս։ Նոյն տարին Ցիցիանով իշխանի առաջարկութեամբ, ի պատիւ կայսրուհւոյն Ելիզավէթի (Աղէքսանդրը առաջնոյ կին) Գանձակ՝ անուանեցաւ Ելիզաւէթօիլ։ Ելիզաւէթօիլ գաւառը կարելի է չուտմարան կոչել, չորկայ երկիրներու իւր առատաբեր հողերուն կողմանէ։ Այս գաւառին մէջ իւրաքանչիւր տարի կընայ ձեռք բերուիլ մինչև 6000 փութ (*) պաղեղ (չայ) և մի քանի տեղերէ կ'ելնէ կակուղ ու աղնիւ երկաթ։

Քաղաքին մէջ անուանի իշխանութեանց կը վերաբերի հին բերդն ու Շամքորայ ահագին սիւնը, երբև յիշատակարան խորին հնութեան որ կ'գտնուի քաղաքին մօտ՝ Շամքոր գեղոյ

(*) Իւրաքանչիւր փութ 13 օքայ կ'չափ։

եղերքը։ այս սիւնին մօտ, Մարաթեանց հռչակաւոր զօրապետը, պարսկաց Շահի՝ Ապաս Միրզայ թագաժառանգ իշխանի զօրաց դարհուրելի չարդ տուաւ ի 3 սեպտեմբեր 1826։

Համայն քնակիչք քաղաքիս կ'համարուին 9878 արու, և 5496 էգ։

Էլիզավէթփոլ գաւառի բնակչաց թիւն է 61356 արու, և 52317 էգ։

Գանձակ ի 1868 սկսաւ առանձին կուսակալութիւն լինել և նահանգական քաղաք կոչուիլ։

Ցուշէթ, Ցիխիսի գլխաւոր գիւղաքաղաքն է, որ Ցուշէթիա-Խէվի գեղոյ և մի տափարակ տեղւոյ վրայ շինեալ ու լեռներով շրջապատեալ է որոյ հարաւակողմերն այդիներով զարդարուած կերևին, իսկ մնացած տեղերն արտերով մշակեալ են ու կ'ընդարձակին արօտներով։ Բնակիչք մեծաւ մասամբ կ'պարապին գինեվաճառութեան հետ։ Բնակչաց թիւն է 3000։ որոց կէսը հայք են։

Թիֆլիսէն 10 վերստ հեռաւորութեամբ՝ դէպ ի արևմտեան կողմը։ Չարունակ զառ ի վեր ելնելով կօճօռ անուն ամարանոց գիւղն է, ուր կաւուցեալ են բաւական վայելուչ տուներ՝ մեծամեծ բլրոց տափարակ գետինները վրայ, այս բլրոց վարի կողմերը զուարճալի դաշտեր կան։ Կօճօռ գիւղն բնակիչք սակաւաթիւ լինելով, տուներուն մեծ մասը շրջակայ քաղաքացոց սեպհական է։ որ ամառնային եղանակին կ'գան այս գիւղը և ձմեռը կ'վերադառնան իւրեանց քաղաքը։

կոճռու գիւղն անցնելէն յետոյ, ընձաղեղեռաց ու տանգենեռաց անտառներու դեղեցիկ տեսարանը կ'երևցանայ աչաց - այս պտղատու անտառներն անցնելէն վերջը, Մէնկլիս (1) գիւղաքաղաքը կ'հասնուի, որ գեռաղեղալ է մեծ բլրոյ մը վրայ և Թիֆլիսէն 30 վերստ հեռաւորութիւն ունի։ Նշանաւոր դեղեցկութիւն մ'ունին Մէնկլիսի մզեռազալը վայրերը և փոռուղի (ֆրստրք) կանանչագեղ ու զուարճալի անտառները։ Այ տեղւոյն օդն ու ջուրերը դեղագանց առողջարար են, կաթը շատ բարեհամ ու ազնիւ։ մանաւանդ թուչ ըսուած մանր տեսակ ոչխարի մսին բնական աղնութիւնն ու փափկութիւնը, ցանկասանի եւրոպիոյ մսին (Բասքէլի մէջ բէլբ-ֆէ ըսուած անուանի ոչխարի մսին հետ կրնայ հաւասարել։ Այս ոչխարները Քութայիսէն սակաւ ինչ հեռի

(1) Ինչպէս որ Մէնկլիս գիւղաքաղաքին մէջ Ռուսպմանացեալ (Թէնեթի) գինուորք բնակութիւն հաստատած են, նոյնպէս և Ռուսաստանի մէջ ուրիշ բարեբեր և օդն առողջարար շատ տեղեր, կառավարութիւնը մասնաւոր կարգադրութիւն մ'ունի խարդարութեան ժամանակ գինուորներ յուղարկելու, որ վայելուչ ձևերով նոր գիւղեր հաստատեն, դիւղական տուներ կառուցանեն, այդ երիտիները մշակութեամբ զարգարեն ու բարեկեցութեամբ ապրին հանդերձ իրենց բնտանեօք։ Իսկ երբ պատերազմ ծագի, այդ գիւղերուն երիտասարդ գինուորք գէնք կ'առնուն և կ'դիմեն ի պատերազմ. իսկ պաշտօնէ դաղարեալ գինուորք (թէքայիտ ասսքիր) կ'մնան ընտանեաց հետ գիւղերուն մէջ և կ'պարապին իրենց գոռվրական գործոց և արհեստից հետ։

Թուչաց (2) երկրին մէջ կ'երևնեն, և այն տեղ կ'աբաձուին ու կ'մեծնան։ Մէնկլիսի շրջակայ ագարակները այս տեղէն շատ ոչխարք կ'երթան ու գիւղաքաղաքին մէջ սպառուած միսերն այս ոչխարներէն են։ Ալ ըսուած գեռակը, Մէնկլիս գիւղաքաղաքի լեռնաձորէն կանցնի. կան նաև ուրիշ մշտարուխ անուշ ու ազնիւ ջուրեր։

Բ. Նահանգ Քութայիսայ։ Բնակչաց թիւն է 65185 արու, և 60274 էք։

Ա. Քութայիս էր յառաջ ժամանակաւ մայրաքաղաք Իմերէթի թագաւորութեան, իսկ 1847 թուականէն սկսեալ, եղաւ գլխաւոր քաղաք Քութայիսայ կուսակալութեան։ Սորա հիմնադրութեան ժամանակն անանդութիւնը կ'տանի կը հասցնէ պատմութիւններէ յառաջ։ հիներուն յայտնի էր Ցիտագիս կամ Քութադիս անուամբ, բայց հայոց և վրաց տարեգրութիւնք կ'ըսեն թէ Քութայիսայ հիմնադիրն եղեր է Աշտազաց Լէւոն թագաւորը 792 թուականին Քրիստոսի, որոյ մէջ ևս հաստատեր է իւր արքայական բնակութիւնը։ Այն ժամանակէն ի վեր Քութայիս զանազան յաղթող ազգաց ձեռքն անցեր է։ Այս քաղաքն ինչպէս նաև բոլոր Իմերէթի թագաւորութիւնը շատ անգամ կ'ենթարկուեր յարձակմանց և կը մնային Պարսկաց և Ցանկաց իշխանութեանց ներքեւ, մի և նոյն ժամանակ ներքին կամ ընտանե-

(2) Թուչք սեռակ մը վրաչք են և լեզուն իսկ վրացւոց սովորական լեզուն տարբեր։ Թուչաց երկրին մէջ 40000 էն աւելի բնակիչք կ'համրուին։

հան խառվութեանց թատրոն կ'դառնար։ Ռուսոստան վրաց թագուհին, 13րդ. դարու կէսին մէջ, իւր թագաւորութիւնը 2 մասն բաժանելէն վերջը, Իմէրէթը տուաւ իւր Դաւիթ Պարոն որդւոյն։ 1424 ամի սկսաւ Վրաստանի նոր բաժանումը, և Իմէրէթեան ամբոխը բաղմեցաւ Վախթանկ նահապետ և իւր ցեղը վերջացաւ Սողոմոն Բ. Իմէրէթի թագաւորին մահուամբ։ Յետոյ տաճիկք նուաճեցին Իմէրէթն ի 1576 թուականի, երբ Սուլթան Մուրատ Գրդ., գրաւեց Քութախ քաղաքը և տիրեց մինչև ի 1674 թուականը։ սակայն Բագրատ Պարսկաց ձեռքը դերի մնալէն և Իմէրէթը Վրաստանի հետ միացընելէն յետոյ, Քարթլաց (Վրաց) արքային Դրդորդի Վախթանգայ թագաւորութեան ժամանակէն վերջն զկնի Նորա մահուան Իմէրէթի վերսանն բաժնուեցաւ և ի 1683 ամի թագաւորական ամբոխը բաղմեցաւ Աղէքսանդր։ Կախէթայ թագաւոր Արչիլ, օգնութեամբ լեռնային Օս ազգի, արտաքսեց զԱղէքսանդր Քուռայիսէն և Իմէրէթը նուաճեց, սակայն երկար չ'սևեց, քանզի խոյսն երևեցան տաճիկք և սահպուեցաւ Արչիլ խոյս տալով ապրեցընել իւր անձն այս յարձակմանց ժամանակ։ որ պատահեցաւ ի 1692 թուականի, և շատ մեծ ներքուիչն կրեց Քութախ, քաղաքն յափշտակուեցաւ, բերդը թշնամիներէ տապալեցաւ և Բագրատայ Գրդ.ի կառուցած երկնամման տաճարը կործանեցաւ, որոյ մարմարեայ օրմունք փոխադրեցան ՅԱխալցխայ։ Իմէրէթի տաճկայ իշխանութեան ներքև մնայ մինչև ի 1745

թուականը, այսինքն մինչև Սողոմոն Ա. արքայի յաթոռ բազմելու ժամանակը, որ Իմէրէթի լաւագոյն թագաւորաց մէկն էր։ Նա յաղողութեամբ դիմադրեց Թուրքաց և ի 1762 ամի Խրբէ-չէլի գիւղին մօտ նուաճեց զանոնք։ և Ռուսաց զօրաց օգնականութեամբ ի 1770 ամի, որք էին ընդ հրամանատարութեամբ Ցօտլեբէն զօրավարի Սողոմոն արքայն ստացաւ իւր անկախութիւնը։ Ըստ դաշնադրութեան Ռուսիոյ ընդ Օսմանեանց, Իմէրէթի համարուեցաւ անկախ, մնալով Ռուսիոյ հովանաւորութեան ներքև։

Քութախ քաղաքը գետեղեալ է Այգեստանեաց մէջ Ռիոն գետոյ եզերքը ձորի մի մէջ։ ուր Թիֆլիսոյ կամուրջ կ'վերլանան, որ հիւսիսային հարաւն բարձրանալով կ'պատսպարեն զայն։ Քութախի շինութեանց նկատմամբ, քաղաքին յատակագիծը Եւրոպականին նմանութիւնը կ'ներկայացընէ, տեղ տեղ ուղիղ և լայն փողոցներ կան սալահատակներով շինեալ, շուկան ծառազարդ ճեմելիքներով (պուլվար) վայելուչ ձև մ'առած է, գեղեցիկ տուներ կան հանդէպ շուկայի և քաղաքին մէջ նաև պարտեզ հասարակաց, կառուցեալ է դինուորական հիւանդանոց, բարձրադոյն դպրոց (կիմնազիա), տեսնական տեղիք, վանք, քարայատակ ճանապարհք և բոլոր այս գեղեցիկ ճարտարութեամբ շինուածք կ'արժանացընեն զայն արդարև յայնկոյս Կովկասու նահանգական քաղաքաց մէջ պատուաւոր տեղ մը բռնել։

Գուրթայիսէն 9 վերստ հեռի, է հռչակաւոր վանքն Կէլադիոյ, որոց մէջ շատ հպարտագիւտ ձեռագիր հնութիւններ կ'գտնուին։ Այսոց լեզուաւ է երկաթեայ մի դուռ, որ աւարառութեամբ Տիմիթրի առաջին բերած է, որ էր որդի Դաւթի վերանորոգող արքայի։ Քաղաքին վաճառականութիւնը Տփխիսի Հայոց ձեռքն է։

Այս քաղաքը որ կ'յիշէ ոսկեդեղման. (*) առասպելական ժամանակները (տես հին դարուցունաց պատմութիւն), ի հարկէ պետք էր պահած լինէին մեր ժամանակներուն համար իւր անցեալներէն շատ արժանայիշատակ անցքեր, բայց ափսոս որ մարդիկ ժամանակը բնաւ չ'խնայեցին և չ'են խնայեր, սակայն նշանաւոր հնութեանց կ'վերաբերի քաղաքին ներքին կողմն եղած քարաշէն զանգակատունը, որ շատ հին ճարտարապետութիւն է։ Իմէրէթի թագաւորաց

(*) Աբշաւանք արդոյնաւաց ոսկեդեղման եռեւէն ի Կողքիս, ի 1850 նախ քան զՔրիստոս, այժմեան Մինկռել ու Կուրիա երկիրներն են։

Հետաքրքրական հնութիւն մի։ Անդղիական օրագրի մը մէջ կ'կարդամք թէ, տոքթէօր Էպէրս անուն հնախոյզը Հէրմէսեան բժշկականութեան գրքերէն հատ մը գտեր է։ Մինչև յ'արդ Հէրմէսեան գրուածոց ծագումը գտնելու համար, հնագիտաց բոլոր ջանքն ապարդիւն եղած լինելուն կ'կարծուէր թէ (մեծն Հերմէս) ըսուածն առասպելական անձ մի էր նախնի բնակիչներէն հնարեալ որպէս զի հնութեան գրոյմ մը տան իրենց գիտութեան։ Տոքթէօր Էպէրսի այդ նոր գտած «ձեռագիրը» երբ կարենայ ամբողջ կարդացուիլ։ կրնայ այդ տարակուսա-

Զարտախը կամ լաւ ևս է ըսել այն գահլիճն հիւրընկալութեան (Քապինէ՝տ օտիանս), ուր ներկայացան ի 1654 թուականի Աղեքսանդր արքային Իմէրէթի դեսպանը՝ Ռուսաց Ալէքսէյ Միխայելովիչ թագաւորի առջին, և Նիֆէ ֆօր Ցալչէնոֆն։ Վերջապէս Լէւոն թագաւորի շինած քարուկիր հիմերով կամուրջը, որ կ՝միացընէ հին քաղաքը նորին հետ։

Քութայիսի հարաւակողմը որ Ռիօն գետոյ ալ կողմը կ՝ելնայ, քաղաքին գեղեցկագոյն մասին մէկն է, լերանց ստորոտք, որ քաղաքին վրայ կախուած են, այգիներ տուներ ու շէնքեր զետեղուած են և այդ բարձրութենէն տեսողաց աչքը կ՝ընդգրկէ Իմէրէթի բոլոր դաշտավայրերն ի մէջ Քբվբրիկ ու Ռիօն գետոց, որք իրեանց վենակչօք վոյլուն դալարներով կ՝տարա-

---

թեան կէտը լուսաւորել, սակայն ենթադրելով որ յիշեալ գրուածը սոյն նպատակին չ՝կարենայ ծառայել, նախնի եգիպտացւոց մեզ համար կ՝որուսած գիտութեանց մի բեկորն ևս այժմ գտնուիլը մեծ կարևորութիւն ունի ուսումնական աշխարհին համար։

Վերոյնշանակեալ ձեռագիրն Արաբ մի գտեր է մի քանի տարի յառաջ «Մուսեայի» մը մնացորդաց մէջէն, և այն Արաբին մահուանէն վերջը. տոքթէօր Էպէրս բազում ստակ վճարելով, յաջողեր է գնել զայն։ Այս ձեռագիրն ամբողջ միակտուր տերև մ՝է 60 ոտնաչափ երկայնութեամբ՝ վրան սև ու կարմիր գրերով։ Այս գրերուն ձևն ու տեսակն ենթադրել կ՝տան թէ սոյն ձեռագիրը Քրիստոսէ 1500 տարի յառաջ գրուած լինի, ըսել է թէ

ծին մինչև Ախալչխայի լերանց շղթայի ստորոտները։

Այս տեղ Բագրատ Գ. ընտրեց վանք շինելու տեղ, որ վերջացաւ 1003 թուականին, սակայն ժամանակն այդ հոյակապ շինութենէն պահպանեց մի միայն այն աւերակները՝ որոց վրայ կ'երևին արդարև Բագրատ բարեպաշտ արքային փառքն ու մեծութիւնը որ սպառեր էր իւր ճոխութիւնն այս նուիրական յիշատակարանին վրայ։ վեց հարիւր տարիէն աւելի ժամանակ, ամէն կողմանէ ժողովուրդք կ'դիմէին առ այս տաճարն իբրև հաւատոյ պաշտպան դաւանելով զայն, և իւրեանց թշուառութեանց շրջանին չմայնակ մխիթարութիւն և փրկութիւն, սոյն թշուառութիւնք որ կ'խռովէին վրայ խարխուլ և դիւրակործան թագաւորութեան դահը, ի 1691 ամի Տաճիկք Ախալցխոյ նուաճեցին քաղաքն ու ամրոցը

3576 տարուան հնութիւն ունի, և ենթադրելով նաև որ յիշեալ գարուն ակիրները գրուած լինին, որ Մովսէսի մանկութեան, այսինքն Փարաւոնի արքունիքը գտնուած ժամանակները կ'երևայ։

Գրուածին մէկ մասը միայն կարդացեր է լուսեղ և ընթեռնուլ Էպերս. ինչպէս նաև այլեայլ գլխոց մակդիրներն են, «Գաղտնի գիրք բժշկաց»։ — «Գիտութիւն բարախմանց սրտի»։ — «Մանութիւն սրտի բան ուսուցման բնագէտ քրմին Նէպսէնէդպայ»։ — «Բժշկական գիտութիւն մեզի և ըստ որմպոնի համախմբումն թեթևացնելու համար»։ —

Արդէն գիտնոց մեծագոյն մասին կարծիքն է թէ, Եգիպտացիք իւրեանց պատմութեան յոյժ հեռաւոր ժա-

կործանեցին զուտաարն ու բոլոր հաղորդութիւնս սեփականութիւնք և տարին յԱխալչխա ու կարճ ժամանակի մ'համար միայն մնացին միւսիոն նկարաց ու մարմարիոնաց հետքը, որով զարդարուած էին Բագրատ արքայի կառուցած տաճարին մէջ։ իսկ այժմ փոխանակ այն ճոխութեանց ու ծանրագին նիւթոց, ճանապարհորդք կ'տեսանեն միայն ցիրուցան եղած վեմեր ու սիւներ։ շրջապատը Արաբացի ձեռերով նկարուած՝ քանդակագործական կամարներով պատուհաններ արձանագրութեամբ հանդերձ և բուրդաձև բարձրացած տրմեր դարպասներով ծածկեալ, որ բաւական բարձրացած լինելով, սեսողաց աչքը կը թիւրեն։ Անհնար է չզարմանալ սոյն շինութեան առ հասարակ ամենայն մասանց ամրութեան վրայ ժայռից վրայ հաստատեալ նեղ տրմերն հարիւր տարիէն աւելի է որ իրենց դիմեալ է բաժնուելով

մանակաշրջանին մէջ գիտութեանց բարձրագոյն աստիճանն հասած էին, ինչպէս իրաւամբ կ'յիշէ մեծանուն Պօէրաւ, նոյն իսկ սա բանը թէ, Մովսէս ոսկին ջրոյ հետ խառնելու յարմար փոշի մը դարձընելուն կերպը գիտէր, կ'ցուցնէ թէ բնագիտութեան այնքան հմտութիւն ձեռք բերած էր որ, արհեստին կատարելութեանն հասնողներուն միայն կարելի է ասանալ։

Արդարև կ'երևի թէ Եգիպտոս տարբերութեանն նոյն իսկ ծննդավայրն եղած լինի, վասն զի ըստ Պլուտարքեայ, գուցէ իրենց մեհենական լեզուաւ Եգիպտոսի երկիրը քիմիա կ'անուանէին, որ բառ Պօլտրի ծածկեալ կամ թաղուն գիտութիւն կ'նշանակէ։ Մինչև ցարդ ևս Եպտիկ Բէրմի երկիր կ'անուանեն զԵգիպտոս.

տաճարին մէջ, որ դրեթէ ամբողջ կեցած կ՚երևան և ի հեռուստ աչաց հանդիման իբրև հնութեան արձաններ կ՚ներկայանան - Իմէրեթի և Նորա թագաւորաց յեղեղուկ ճակատագրի հարուածներէն ազատեալ, Բագրատ Գ. և Կիւրիկի թագաւորք այս տեղ կ՚հանդչին իրենց ծանր աշխատութիւններէն վերջը՝ յաւիտենական քնոյ մէջ ընկղմեալ. ուրիշ ննջեցելոց հետ, որ է այժմ գերեզմանատուն հասարակաց։

Ցաճարին հարաւային մուտքի կողմը, շինեալ է ապքատիկ եկեղեցին Վերափոխման իւր հին պատկերներով, որք են Քութայիսայ. Պալէստրայ և Փիձունտա Ցիրամօր պատկերները և մնան ինչ Խաչատրայտի բեւեռաց։ Դէպ ի հիւսիսակողմը փոքր ինչ բարձր դիրքի վրայ կ՚երևին հին ամրոցին նշանաւոր աւերակները, այս ամրոցը

Լինտոս կ՚կարծէ թէ այդ արուեստին ծանօթութիւնն արգոյնաւորդաց միջոցաւ ներմուծեալ լինի Եւրոպա, որք դէպ ի Կողքիս (Չերքէզստան կ՚նաւէին ոսկեգեղմը յաւիշաակելու համար անկից։ Հերոդոտոս կ՚ըսէ թէ այդ երկրի բնակիչք Եգիպտացի գաղթականութիւն մ՚էին, յորմէ Լինտոս հետևցընելով ենթադրութիւն կ՚ընէ թէ, ոսկեգեղմ ըսուածն ոչխարի մորթի վրայ գրուած գիրք մի էր, յորում բնալուծութեամբ ոսկեշինութեան արհեստը բացատրուած է), «որ արդի բազմահմուտ գիտնականաց անհաւատալի կ՚թուի»։

Արգոյնաւորդաց նաւագնացութիւնն ըստ ժամանակագրաց մեծագոյն մասին Քրիստոսէ 1250 տարի յառաջ կամ Էպէրսի գտած ձեռագրին թուականէն 300 տարի վերջը կ՚ինայ։

երևելի է Ալխիմէրիոն անուամբ որ փառաւոր վիճակի մէջ էր Լազաց թագաւորներուն ժամանակները։ Սոյն ամրոցը 13 և 14րդ դարերուն մէջ կ՚պատկաներ Ճէնովացւոց այն է Ճինիվիզաց և Հռովմայեցւոց։ որոնք տարածեր էին իրենց առևտրական տուներն ու բնակութիւնները Սեաւ ծովու արևելեան եզերքը։ Այս բերդը մեծ նշանակութիւն ունէր արևմտեան վաճառականութեան առաջքն, քանզի Քութայիսայ և Անաքլիայի մէջ դաղթականներ կային, որ կ՚կառավարէին ընդհանուր առևտրական դրասենեակը, որ էր ի Թիոսկորոս (Թերևս սա Դրանդայ փոքրիկ ամրոցն եղած ըլլայ որ այժմ ի Ցիպելտի ձորաբերանը անխնամ թողուած է)։ Ալխիաղայ թագաւորաց ժամանակները, երբ նոքա կ՚իշխէին Վրաստանի, այս տեղ անառիկ և գժուարակուր դիրք մ՚ունէր իսկ արևելեանմասը որ էր բաց և գիւրառիկ, աւելի նեղութիւն կրեց։ այս մասը կարծանեալ է այժմ, վասն զի յարձակմունք Պարսից որ տեղի ունեցան, Մոլոզայ, թաթարաց և այլոց ազգաց կողմանէ, փոխոխակի հարուածներ հասուցին այս տեղւոյն և վերջապէս կատարեալ կործանեցին զայն։ բայց աւելի ևս զարհուրելի հարուած տուաւ Սողոմոնի առաջին արքայն ի 1772 ամի։ երկնչելով որ տաճիկք չ՚տիրեն այս տեղւոյն, ցնդեց զայն վառօթով օդը։ և այս ամրոցին հետ նաև շատ ուրիշ բերդերք քանդեց իմէրէթի մէջ։ Բերդին պարիսպը թէպէտ բարձր էին։ բայց շատ լայն ու ամուր չինուած էին

կոփածոյ կրաշաղախ քարերով։ այս որմերը կենսաբոլորակ ձեւով փոքրիկ շուկայ մը կ'ներկայացնեն Ռիոն գետայ միջերուն վրայ։ եւ տեղ տեղ պատնէշներն ամբողջ կեցած են, նաւ ամբոցին ներքնատաներն և այլ շինութիւնք քարերով լեցուած են, բայց հին եկեղեցին կոզմայի և Դամիանոսի անարձամի բժշկաց։ մզկիթ եղած էր տաճկաց իշխանութեան ժամանակ, և յետոյ վենարանի փոխուեցաւ։ Սակայն հնութեանց մասցորդներէն նշանաւոր է Ռիխմէրիսնի գետափոր ճանապարհն ահագին ժայռերու մէջէն փորուած որ այժմ սանդուխներով փոքր ինչ ամբողջ մասցած լինելով, կ'առաջնորդէ դէպ ի Ռիոն գետ, յորմէ ջուր կառնէին։ բերդէն դուրս միւս որմը, նոյնպէս կ'իջնէ Ռիոն գետայ եղերքը, որոյ շարունակութիւնը կ'երևի հանդիպակաց կողմին վրայ Հռովմէականաց եկեղեցւոյն մօտ։ ուր, ինչպէս կ'երևի, միացաւ հին տաճարին հետ։ սա առաջին անգամ ի 16ՐԴ. դարուն՝ այս կողմերն եկող Ֆրանսիացիներ կամ՝ ալիկ քարոզիչ վարդապետաց ձեռօք։ Քաղաքէն բարձր, ուր կառուցեալ է Բագրատէն վանքը, որմերով շրջապատեալ է, որ ինչպէս ֆլէտաք է կարծել, միացած է Ռիխմէրիսնի հետ ձեւացընելով երբեւ նախապատն ամրոցին։ կան նաև մի քանի հին քարեայ շաբրնայներ։ նոյնապէս ևս աղբատիկ խրճիթներ։ բնակարան եկեղեցական շաւոտ՝ հովանաւորեալ հինաւուրց ի բերեայ ծառերով։ որոյ մէջ կ'վճարուէին դրեթէ ամբողջ թագաւորական

գործառնութիւնք։ նոյնպէս նաև այս եկեղեցական դասու մեդրոպոլիթ Դաւթայ տունը։ այս ամենքը արքայական ապարանաց տեղը բռնեցին ուր կ'ժողովէին բազմաթիւ իշխանք և աշնուականք երկրին։

Այս տեղ սրահը մտնելու կէտին վրայ աւանդութիւնը կ'յայտնէ դրանց մօտ այն տեղը։ ուր սպանուեցաւ Նէստան-Ցարեճան անուն թագուհին իւր զարհուրելի գործոյ համար, որով նեսմայոց իւր թագաւորութիւնը։ Ռիոնի միւս կողմը հրեից թաղէն բարձր։ առանձին մի բարձրաւանդակի վրայ վերջին թագաւորաց զուարճութեանց համար շինեալ ապարանքն էր։ որ կանուանէր կանանչագոյն (Ծիմանէ կվավիլա) իւր հարուստ գաղարաց և բուսոց համար։ իսկ այժմ միայն մի աշտարակով կ'երևի այս տեղը։ ուր տեղ տեղ շրջապատեալ է քարեայ ցանկով որ թագուն ճանապարհաւ կ'առաջնորդէ դէպ ի Ռիոն գետ։

Աւանդութիւնը կ'ըսէ նաև թէ։ այդ ամբացեալ տեղը սեփհական էր նիշնիանիձէ ազնուական ցեղին և բոլոր այդ շինութիւնք որ այժմ կերևան։ իրենցմէ կառուցեալ կ'կարծուի։ Այս սերունդին վերջի շառաւիղը պակսելէն յետոյ։ այն ամրոցը կործանեցաւ։ մի և նոյն ժամանակ Ֆուիմաթի բերդին հետ։ որոնք ի 1772 թուականին Սաղվման արքայի ձեռօք օդը նետուեցան փառօքով։ Այս տեղ իւր կեանքը կանցներ աղոթից և միայնակեցութեան մէջ 80 ամեայ

Ծերուձի Եւդիմէոս կաթուղիկոսը, որ իւր հայրենիքը ձգելով գնաց ի Մոսկուա, ուր և վախճանեցաւ ի խոր Ծերութեան։ Մինչև ցայժմ տընկեալ այդիին հոտքը կ'երևին այդ գեղեցիկ և պտղատու տեղւոյն վրայ. սուրբ Գէորգ անուն եկեղեցին տասը տարի յառաջ նորոգուեցաւ, որ է միայնակ յիշատակարան սոյն անապատին, որ յաւիտենական հանդստարան եղած է ննջեցեալ միաբանից։

Բ. Ախալցխիսկամ Ախալցխա. (Ադբագայ) որ կ'նշանակէ վրացերէն լեռուաւ նոր բերդ, է գաւառական քաղաք Քութայսայ կուսակալութեան փոխարան գեղջն վրայ որ կ'հոսի Կուր գետոյ մէջ։ Ախալցխիսի հիմնարկութեան ժամանակը յայտնի չէ, երբեմն կ'պատկանէր սա Հայոց թագաւորութեան Տայոց գաւառ. անուամբ. վերջի ժամանակները վրաց ձեռքն անցաւ և վերջապէս նուաճեցին զայն Օսմանեանք, որոց իշխանութեան ներքև մնաց 200 տարի։ Մուրթան Մուրատ Բ-ի ժամանակ ի 1509 թուականի Օսմանեանք տիրեցին Ախալցխա գաւառին, բայց չանցաւ Գարսից ձեռքը, որոյմէ ի 1637 ամի, Մուրթան Մուրատ Դ-ի օրով, վերստին յաջողացուցին Օսմանեանք՝ Հէրամ փաշայի զօրավարութեամբ. այն ժամանակէն մինչև ի 1829 թուականը Ախալցխայ շարունակ տաճկաց իշխանութեան ներքև կ'գտնուէր. սոյն թուականին էր որ Անդրիանուպոլսոյ մէջ Ռուսաց հետ հաստատեալ գաշնադրութեամբ մնաց Ախալցխայ Ռուսաց ձեռքը։

Ռուսաց զօրքն երկու անգամ պաշարեց Ախալցխա։ Ռուսից բանակն ի 1810 ամի Թարմասով զօրավարի հրամանատարութեամբ պաշարեց Ախալցխա, բայց հետ տասնօրեայ պաշարման անյաջող եւ դարձաւ ի 1828 և 29 պատերազմոյ ժամանակը, Ախալքի առուելչին զկնի, առանձին կովկասեան բանակը մոտեցաւ Ախալցխայի կոմս Պասկեվիչ Երեանսքի առաջնորդութեամբ։ Ցայնժամ երկու Օսմանեանց բանակներն այս տեղ փութացին՝ Քէօսէ Մէհմէտ և Մուստաֆա փաշաներու զօրավարութեամբ։ Օգոստոսի 9ը գիշերուան մէջ, գիշաւոր կռուավարիչը, Ռուսական բանակի կէսն իւր հետ առնելով, բոլոր բերդը շրջապատեց։ Շերուանեան գունդը Գոռոտինայ գնդապետի առաջնորդութեամբ յարձակեցան և առին պատնէշները և զօրքը շարժեցին դէպ ի քաղաք։ Այս տեղ զարհուրելի պատերազմ եղաւ երկու զօրաց մէջ։ Գոռոտին գնդապետն առաջին զոհերուն կարգն անցաւ և Օդէն Սագն անցաւ նորա տեղն և ճեղքեց տաճկաց զօրքն ու մտաւ քաղաք. առաւօտուն բերդին բանալիներն յուղարկեցին Ռուսաց զօրավարին, և սուրբ Գէորգայ Ռուսական դրօշն սկսաւ ծածանիլ Ախալցխայի պարանոցայ վրայ։ Բայց Օսմանեանք հանդիստ չ'տուին Ռուսաց, երբ ձմեռն հասաւ։ Օսմանեան զօրքն Աճառալը Ահմէտ պէկի առաջնորդութեամբ շարժեցան դէպ ի Ախալցխայ ու պաշարեցին զայն։ Ռուսաց բերդապահ զօրքն հոպարգի Ռեհպութեանց իշխանի հրամա-

նատարութեամբ արիարար դիմադրեցին Օսմանեանց և գնդապետ Գորձովի զորաբաժինը որ պաշարելոց օգնութեան հասեր էր ստիպեց զատճիկք գլխովին հրաժարել իրենց դիտաւորութենէն։

Այն ինչ այս երկիրն Ռուսաց ձեռքն անցաւ գեղոյն ալ եղերքն հիմնաց բերաւ նոր քաղաքը։ Նշանաւոր չինուածոց կարգը դասել արժան է Ռուսաց վանքը, ատամնաձև քարեայ որմերով շինեալ բերդն ու բերդին մէջինները որ ի 1846ին եկեղեցւոյ փոխարէն եղաւ։ Քաղաքին մէջ կան 6 եկեղեցիք՝ 2 Ռուսաց, 2 Հայոց և 2 Հայ Հռովմէական։ 2 մզկիթք, 2 իշխանք, 400 կրպակք և մինչև 2000 տուն։

Բնակչաց թիւը կ'տարածի մինչև 15.000 ի որոց 13.000ը Հայք են։ 1.000 Հայ Հռովմէական 800 հրեայք, և 200 մահմետականք։

Օսմանեանց իշխանութեան ժամանակին Սխալձխայի բնակչաց մի մասը թողուցած էր և մինչև յ'այժմ կ'դաւանի մահմետի կրօնը բայց նոցա դիմաց դէմ ազգութիւնք, մականուն, առանին ձեռք։ սովորութիւնք և լեզուին իսկ կ'ցուցնեն թէ Վրաց ազգէն ծագումն առած են։ Այս քաղաքը որոմհետև սահմանագլուխ է, վաճառոյ բաւական լաւ առուտուր ունի, որ գրեթէ տեղւոյն ձեռքն է։ Հայք արուեստիւք կ'պարապին։ Օսմանեան երկիրներէն իւրաքանչիւր տարի 400,000 ռուպլիի վաճառք կ'ընեին։ Տրապիզոնէն կ'երթայ մինչև 40.000 ռուպլիի Ախիւ-

թիւն) և այն տեղէն Ախալձխայի վաճառականաց ձեռօք կ'տարուի ի Թիֆլիս։ Ախալձխայի գաւառը կ'պարունակէ չինութեանց դեղեցիկ տեսարանները, ունի հանքային ջրոց աղբիւրք ոսնոգան օգտակար յատկութիւններով, որոց մէջ երևելի են Ապաթեանեանց ջերմուկները 20 վերստ քաղաքէն դուրս ձորի մի մէջ, ուր տեղէն կ'անցնի համանուն գետք։ այս տեղ կայ 3 հատ աղբիւրք այլև այլ բարեխառնութեամբ։ այն է՝ 30° 35° և 40° ըստ Ռեօմուրեան ջերմաչափի, որոց գլխաւորը կ'բղխի լեռնէն, որոյ տարան յատակ օձերու բնակարան էր, այս պատճառաւ և այն աղբիւրն անուանեցաւ օձային աղբիւր։ իսկ միւս երկու աղբիւրք տափարակ գետնի վրայ կ'բղխին։ Այս տեղ հիւանդաց համար չինեալ բնակարանները շատ յարմարաւոր են քան զմիւս աղբիւրները։ Ասոնցմէ զատ գաւառին մէջ կ'գտնուին 2 հանքային աղբիւրք, այսինքն Ուրսվէլեան երկաթային թթուտ 54 վերստ հեռաւորութեամբ և Աւոտիպեան տոպզ (ըմբոտ) քաղաքէն 40 վերստ հեռի։

Վ. Ա. Ն Ը Ր Ա Ց Ի Ք

1. Ախալձխայեն 2 վերստ հեռաւորութեամբ հին վանից տեսարանք կան, սակայն որ սրբոց անուանց նեղրուած չինելը յայտնի չէ։ Շատ ուխտաւորք այցելութեան կ'երթան այն տեղ։ առաւել անուշահամ ու առողջարար ջրոց համար, քան թէ տեսարանաց երկրպագելու։

Զ. Ցափարեան վանք, որ Ախալքխայէն 7 վերստ հեռաւորութեամբ մը մագին և տխուր ձորի մը մէջ է։ Քարեայ պարիսպը, որ շրջապատած է այս նուիրական բնակարանը, այնքան ընդարձակ է որ կ'զարմանակէ իւր մէջ ամրոցին ու Ախալքխայ գաւառի Ամարեկեան իշխանաց պալատին աւերակները, կան չատ խուցեր ու այլեր ամբողջ քարերէ փորուած. նոյնպէս կ'տեսնուին 12 մատուռներու աւերակներ, Ամարեկ իշխանաց գերեզմաններուն վրայ չինեալ է մի զանգակատուն գեղեցիկ ճարտարապետութեամբ, ամբողջ մեացած է նաև յանուն որդոյն Պարբայի և յանուն Աստուածամօր տաճարները։ Տաճարին դրան վրայ եղած արձանագրութիւնը կ'յայտնէ թէ տաճարը կառուցեալ է 640 թուականին։ Այն եկեղեցեաց կարգին վրայ չինեալ են ևս արքայն Մարինոսի և Գէորգայ զորավարին տաճարք։ որք են այժմ կիսակործան։ Մարինոսի եկեղեցւոյն վրայ կան սա արձանագրութիւնք չափաղանց եղծեալ, որոց մին կարևոր է նշանակել ասասնոր թարգմանութեամբ։

«Հայր Քրիստոս Աստուած մեր։ . . Դու»
«փառաւորեցիր զվառաբանիչս անուան քո։»
«ողորմեա յայսմ և ի հանդերձեալ կեանս իշխա-»
«նի մերում Պեկայ և որդւոյ նորին։ զի տուաւ»
«ինմանէ հրաման յայնմահրեն ասա տեղի թագ-»
«ման զանս մեր անարժանից։»

Դ. Զարգմայ վանք, որ կ'գտնուի երեք ժամու ճանապարհաւ Ախալքխայէն հեռի։ Այն քարաշէն հաստատութեան գեղեցկութիւնը, ճարտարապետութեան և նիւթոց հարստութեան կողմանէ պակաս չէնար Սարբայ եկեղեցիէն Ցաքարեան վանուց մէջ։ Վանքին դէպի ակ կողմը մեռաքսակ ժայռ էին պէս կոպլեան գետակը կ'հոսի, որ ունի առատ կարմխայտ ձկունք։ Զարգմա վանքն ունի 3 ոսկեզօծ սեղան ճոխ գրքեր քեթով։

ԵԿԵՂԵՑԻՔ

Ա. Ախալքխայէն 10 վերստ հեռաւորութեամբ վալէ գիւղին մէջ կայ մի հին եկեղեցի քարաշէն 3 սեղանաւ չինեալ ի 1335 թուականին։

Բ. Ճուլէպայ եկեղեցի, որոյ հիմնարկութիւնք չէ յայտնի, սակայն արձանագրութենէն կ'երևայ թէ, Ցիխսեցի Որսեն անուն անձն աւարտեր է այս եկեղեցւոյն փարագրութիւնները ի 1381 ամի։

Գ. Ախալցեան եկեղեցի։ որոյ չինութիւնը կ'կարծուի թամար թագուհւոյ թագաւորութեան ժամանակ։

ՄՂԿԻԹ

Ա. Գեղեցիկ ու նշանաւոր է իւր հնութեամբ Յուիրիս գեղոյն մէջ կառուցեալ Մղկիթը քաղաքէն 3 վերստ հեռաւորութեամբ։ Սիւփիսայ գիւղին պատուղներն իւր բարեհամ ու ազնիւ յատ-

կութեամբ։ Ճանապարհը բնձաղներն ու տանձենիները ամենէն ընտիրներն են յարկեալ կովկասու երկիրներուն մէջ, ուր կ'տարուին վաճառելու համար։ Սամփիէն և Ախալցխայէն 7 վերստ հեռաւորութեամբ ի 1850 թուականին հոնը ածուխներ գտնուեցան։

ԱՄՐՈՑ ԹԱՄՄԱՐԱՑ

Սամփիէն 3 վերստ՝ քարանթիլի ճանապարհին վրայ, կ'տեսնուին ամրոցի աւերակներ հանդերձ եկեղեցեաւ, որ կառուցեալ են Թամար թագուհւոյ ձեռօք, մի սխոնների և վանց կղզեր և երկու կիսակործան աշտարակներ մնացած են միայն ամրոցէն։

Բնակիչք կ'յայտնեն աւանդութեամբ թէ Թամարայ դահլիճը և նորա առանձնասենեակը եկեղեցւոյն տեղն է եղեր։

Դ. Ախալքաղաք որ կ'նշանակէ նոր քաղաք։ է Ախալցխայի դաւառ՝ Քութայսայ կուսակալութեան մէջ, ուր երկու գետեր կ'սառգեն, այն է Ախալքալակիս ծղալիս, որ կ'ելնէ Աբօյի լճէն և ճանապարհն կուր գետը։ Այն դաւառը ծովու մակերեւոյթէն 5462 մեդրական ոտնաչափ բարձրութիւն ունի։ Բերդը դէմ առ դէմ կ'ներկայացընէ անկանոն քառանկիւնի մի որմ մարդկոցաւ հանդերձ, որոց վրայ կ'բարձրանայ երկայնակ աշտարակներոյ գրդեակը (գուլէ)։ այս չինութիւն վրայ առաջին թագաւոր Փառնաւազայ կ'վերագրեն պատմիչք։ որ ի 106 թուականին Օկտաւիանոս Արմ-Արքանէն առնուցաւ ի 15 րդ։ դարու և աւերեցաւ ի 17 րդ։ դարու։ ապայն դարձեալ վերանորոգեցաւ Շամչէտայ սէրի ձեռօք։ յետ այնորիկ Ախալքալաքի բերդն եղաւ կեդրոնական տեղի և առանձին գաւառ (Ամանախ) ընդ իշխանութեամբ Ախալցխայի փաշային։

Ամրոցիանուպօրայ դաշնագրութեան զօրութեամբ, որ եղաւ ի 1829։ այս բերդը վիրատին Վրաստանի անցաւ։ իսկ մինչև այն ժամանակը բերդին հին զօրոց առջին երկու նշանաւոր պատերազմներ տեղի ունեցան։ մէկը 1811 թուականին գնդապետ Կոպէտաէվսկի։ որ 2000 հետեակ զօրքով և 100 քաջաք ձիաւորներով Դեկտեմբերի 8 րդ օրը լուսնալէն յառաջ յարձակեցաւ բերդին վրայ և մեծամեծ հարուածներ հասոյց տաճկաց բերդապահ զօրաց և առաւ 47 գերի և 16 հրաղենք։ իսկ միւս պատերազմն եղաւ ի 1828 ամի ի ձեռն Կոմս Պասկեվիչին Երեւանայ։ որ Կարս քաղաքին մէջ իւր գործողութիւններն աւարտելէն յետոյ ի 23 յունիսի բերդէն 3 վերստ հեռաւորութեամբ ճակատեցաւ իւր բանակաւ ընդդէմ տաճկաց և հեռաւորեալ օրն յանձնուեցաւ բերդն յաղթողին ձեռքը՝ 14 հրաղենաք և միսով դրօշակաւ, և քաղաք կոչուելու իրաւունք ստացաւ այս տեղ ի 1833 թուականին։ մինչև որ բերդը նոյնպէս և քաղաքը, ընդարձակ տափարակ դաշտավայրի մը վրայ զետեղեալ է հանդերձ արտաքինաւ և արտաքուստ, որոյմէ հեռի կսկսի տարածիլ լերանց շղթայները։

Ախալքալաքի բնակիչք ամեն տեսակ վաճառաշահութեան կ'պարապին, մանաւանդ ցորենով և կենդանեաց։ Սահմանէն դուրս վաճառականք կ'տանին մեղաքս և բուրդ։ Հայոց աղգէն կան 3000 հոգի, որ ունին 1 եկեղեցի և 1 դպրոց։

Ախալձխա քաղաքին բնակչաց թիւն է 8298 արու և 6901 էգ։

Ախալձխա գաւառին բնակչաց թիւն է 30753 արու և 27781 էգ։

Ե. Օղուրկեթ, կամ Բրիել ըսուած երկրին մէջ է գաւառական քաղաք Քութայիսի կուսակալութեան՝ Ցանկատանի սահմանաց մօտ նահանգական քաղաքէն 122 վերստ հեռաւորութեամբ, որ չունեալ է Գլուխա դեղատին վրայ. այս դեղատը կ'հոսի ի Խենիս-ծղալի գետոյն մէջ, Կուրիելա իշխանք այս տեղ հաստատած էին իւր հանց բնակութիւնը։ Այժմեան բնակիչք յոյժ աղքատիկ ու գեղջկական կեանք կ'վարեն։ Քաղաքն ունի 1 շուկայ, ուր ըստ մեծի մասին թուրքերը կ'երևին առևտրական գործոց մէջ։ Ասոնք դի Կուրիելացիք առևտրոց բաղձանք չունին, որովհետև վրացիք են։ Այս տեղ առողջական տեսչութիւն և մի մաքսատուն կայ, չունեալ ի 1831 թուականին։ Արտաքոյ սահմանէն, այսինքն Գաթուսէն այստեղ վաճառք կ'բերուին, որք են բամբակեայ գործուածք, ծխելիք, թմբուկք, ոգուեսու մորթ ևն։

Քաղաքի բնակչաց թիւն է 651 արու և 235 էգ։

Օղուրկեթ գաւառին բնակչաց թիւն է 20633 արու, և 28387 էգ։

Գ. Երևանայ Նահանգի բնակչաց թիւն է 386,314։

Երևան, է քաղաք կուսակալութեան արոյ հիւսիսային լայնութիւնն է 40° 10′ և արևելեան երկայնութիւնը 62° 19′ Զանկի գետոյ ալիակողմն չունեալ։ Ծովու մակերևոյթէն կ'բարձրանայ 3176 անգղիական ոտնաչափ։ Այս քաղաքը Ռուսաց ձեռքն անցնելէն ի վեր, Ռուսաստանի Հայաստանի մասին գլխաւոր քաղաքն էր, բայց ի Յունիսի 9էն 1849 կայսերական հրովարտակին համեմատ, ի 1850 թուականին անուանեցաւ Նահանգական քաղաք։ Քաղաքը չունեալ է դաշտավայրի վրայ, բայց ի Նորք և Կանայ կոչուած թաղերը, որք բլրոց գլուխ ի վայրին վրայ գետեղեալ են։ Այս հասարակ քաղաքային դրից գլխաւոր մասը կ'ըրաձև ձորի մը մէջ կ'երևայ, միմիայն բաց կ'տեսնուի Այրարատայ կողմն։ Զանկի գետը, որ Հայոց պատմութեան մէջ Նշանաւոր է Հրաստան անուամբ, բերդին վարի կողմէն կ'հոսի և քաղաքն այդ գետատէն կ'բաժանէ, որ Էջմիածնի մայր ամառայ ճանապարհն է։ Զանկի գետը կ'կոչուի նաև Գենոյ ջուր, որ կ'բղխի Սեւանայ լճէն, և միանալով Մախանչայ անուն գետոյ հետ 100 վերստ ընթացք կ'կատարէ և կ'թափի Երասխ կամ Արաքս գետը, այս բաւական մեծ գետոյն ջուրը մինչև որ Արաքսի մէջ կ'մտնէ, հազիւ թէ 20րդ մասը կ'մնայ, որովհետև բոլոր

արտարքոյք անոր ջրով կ'ուռգուին, ինչպէս կերևի թէ, պարսիկք մեծ խնամք տարեր են շատ ջրանցք բանալու, որոց հատուցմ ցուցակն արժան կը համարուի նշանակել քաղաքին ստորագրութենէն վերջը։

Երևան իւր այգիներով պարտէզներով, արտօրիւք եւ արտաքսելովք մինչև 30 վերստ չրջապատ ունի։

Ըստ տարեգրութեանց, Երևան չինուած կը համարուի 75 թուականին, որ հռչակաւոր եղած էր Հրդ դարուն մէջ։ Պարսիկք այն քաղաքը կ'անուանեն Բէվան՝ Բիվա բառէն առնելով, որ կ'նշանակէ արագավազ։ Ի հնումն Երևան կ'պատկանէր Քուիթայիսայ նահանգին, հայոց թագաւորութեան ձեռքն եղած ժամանակ։

Մինչև 1441 թուականը Երևան կ'պատկանէր հայոց իշխանութեան, վերջը փոփոխակի անցաւ երբեմն Պարսկաց։ երբեմն տաճկաց և երբեմն Վրաց։ Ռուսք տիրեցին Երևանայ ի 1828 ամի ընդ հրամանատարութեամբ Կոմս Պասկէվիչի և գլխաւոր քաղաք կոչուեցաւ Երևանայ նահանգին։ իսկ 30 թուականէն սկսաւ կուսակալութեան կամ նահանգապետական քաղաք լինել։

Թիֆլիսէն Երևան մանելու կողմէն մանաւանդ գարնան ժամանակ, քաղաքը որ բնկնմած է այգեստանեայց մէջ գեղեցիկ ձև մ'ունի և զմայլելի տեսարան մի կ'ներկայացնէ։ Առ հասարակ բոլոր հին չէնքերը մատգրութեան արժանի են, մանաւանդ այն մեծը որ չինեալ է Երևանայ հիւ-

սիսէն խան Նէտաբի ձեռօք, որ գնայելովնորա անգիտութեանը, անկարելի է չդասել զինքն աշխարհաշէն իշխանաց կարգը։ վասնզի Երևան նորա կ'պարտի միշտ իւր ջրանցքներով, որոց յոյժ մեծ կարեւորութիւն ունի։

Օդային չերմութիւնն ու խոնաւութիւնը իմաստն բուսոց մնունդ կ'տատկարեն։ Երևանայ սահմանները մինչև եռ վեց ամիսն տեղի ժամանակ արեգական օրմակէզ ճառագայթից ներքեւ կ'տաչորին, բոլոր ծաղկանց բոյսերն ու դալարները պէտք էր թառամելով ոչնչանային։ եթէ կլիմային չափազանց չերմութիւնը զովացուցիչ խոնաւութեամբ չ'բարեխառնէր։ Ջուրն է միայն ապահովութիւն արագասաւոր պտղաբերութեան։ Ամառուան սկիզբն այս տեղ գետոց մէջ գոյացած ջրային առատութիւնը, աւետաւոր նշանակ է հացի եւս առատութեան։ եթէ անակնկալի դէպքով գետոց ջուրերը պակասին եւ առուները ցամաքին, երկրագործին յոյսը բոլորովին կոչնչանայ, զի բրինձի արտարայք կ'փճանան դաչտավայրք արեգակէն կ'սլրին եւն։

Այս պատճառաւ ասիցիք, որ աշխատութեան կողմանէ շատ հեռի կ'մնան Եւրոպիոյ հարաւային երկիրներու բնակիչներն։ այս տեղ չինաելն ոչ ժամանակին և ոչ ևս ծախուց առատն ու շատ առուներ չինելու մասին և մանաւանդ բաւական ջրանցք բացին դաչտավայրերն ոռոգելու համար։ Եւրոպացիք ջրանցք բանալու մասին կատարելութեան ծայրն հասած են, ստակին ան-

հնար է նաև, չ'զարմանալ ի հնումն հայոց և ապա Ասիոյ պարսիկ կառավարչաց ջանից և ճգանց վրայ որ մեծամեծ ծախիւք չէն խնայեր իւրեանց աշխատութիւնը ջրանցք բանալ մինչև իսկ սարերուն մէջ։

Ուստի Երևանայ դանաւը շատ առատ է ջրով։ Սևանայ ահագին լիճը հիւսիսակողմէն կը-գրաւէ գրեթէ 2500 քառանկիւնի վերստ։ ունի 67 մղոն երկայնութիւն ու Երևանէն 8 ժամ հեռաւորութիւն։ Այս լճին շուրմարանը Երևանայ քաղաքէն 2000 ոտնաչափ բարձրութիւն ունի։

Երբեմն գետը Երևանայ գաւառին հարաւակողմէն կ'երթայ, բայց երկրին ու բնակչայ օգուտ չ'ընծայեր, քանզի ցամաք տեղերու մէջէ կ'ընթանայ։ Սեւանայ լիճը շրջապատեալ է բարձրաբերձ լեռներով, վասնորոյ բնաւ չ'ծառայեր դաշտավայրերը ոռոգելու օգտին. իսկ երբեմն, ձորին մէջէ անցնելով, իւր եղերքն եղած Սերտար-ապատայ եւ Սուրմալուայ գաւառակներուն բնակչաց միայն փոքր ինչ ջուր կ'մատակարարէ։ Մնացեալ գետակներն ու առուակները, որոց ջուրերէն կարելի է օգուտ վայելել, այնչափ նշանաւոր չ'են, վասն զի նոցա մեծ մասն ամառնային ժամանակ այն աստիճան կ'սպառին բնակչաց կողմէն որ, ցամաքելով հաղիւ թէ ջրոյ նշան կ'մնայ իրենց մէջ. վասնորոյ ամառը ջրոց պակասութիւնը յոյժ դժալի է Երևանայ գաւառին մէջ։

Բացուած գետերէն ու առուներէն Երևա-

[illegible]

7576
7577
7578

0003740
0003741
0003742

20133

ՀՀ Ազգային գրադարան
NL0003742

ՀՀ Ազգային գրադարան
NL0003741

Г-41

ՀՀ Ազգային գրադարան
NL0003740